

Քաղաք

ՀԱՅ

ԴՊՐՈՅԸ

ԵՒ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

“Վ շփոթե՛ հայերէն,  
ու ճանաչե՛ նա զօրէն”

# ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	Հոսանքն ի վեր...
ԷԴ ԱՂԱՅԵԱՆ	Մեսրոպ Մաշտոց
Մ. Մ.	Գրիգոր Նարեկացի
Է. Պ.	Մխիթար Գոշ
Փ. Ա.	Վարդան Արևելցի
Հ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ	Գլաճորի համալսարանը
Ա. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ	Յովհան Որոտնեցի
Վ. ԽԵԶՈՒՄԵԱՆ	Դրիգոր Տաբեազի
Մ. Ի.	Լազարեան նեմարան
ԱԻ. ԶԱՆԶՈՒՂԱԶԵԱՆ	Դպրոց ազնի ու բարի սնունդ
ԱՐՏ. ԱԲԵԼԵԱՆ	Դորպատի դերը
Դ. ՊԵՇԻԿՕՒՇԼԵԱՆ	Պետրոս Մաղաթեան
ԲԱՑՑԻ	Տէր Թողիկի դպրացը
ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ	Տէր Թողիկը
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Մուրատ-Ռաֆայելեան վարժարան
Ս. ՎՐԱՅԵԱՆ	Դէորգեան նեմարան
Դ. ԹԱՇՃԵԱՆ	Սանասարեան վարժարան
Ե. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ	Թուրքիկ յիշատակներ
ԵԴ. ՍԻՄՔԷՇԵԱՆ	Մելիոն Կիրճեան
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ	Ահառեանի հետ
Բ. ՆՈՒՐԻԿԵԱՆ	Թվատիկնցին իր աշակերտներուն հետ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ	Ինչպէ՞ս գրուեցաւ
Կ. ՊԱՂՃԵԱՆ	«Ազատութեան ճանապարհին»
(ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ)	Խորիմեան Հայրիկ որպէս դաստիարակ
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Կրթական եւ մտաւորական վերածնունդը Տարօնի մէջ
Յ. Թ. ՀԻՆՂԼԵԱՆ	Ռէթէոս Պերպերեան իրրեւ դաստիարակ
Ա. Ն. ՊԱՏՐԻԿ	Վարուժան՝ մեր ուսուցիչը
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Դաստիարակը
Դ. ՆԱԶԻՆԵԱՆ	Կոմիտասի աւանդների շարունակողները
Ա. ՀԱՅԿԱԶ	Յ. Օշական
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Յ. Օշական՝ ուսուցիչը
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը
Ա. Ա. Թ.	Շահան Պերպերեան
Մ. ԻՇԽԱՆ	Լեւոն Շանթ դաստիարակ
**	Նշան Փալանճեան ձեմարանը
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Նիկոլ Աղբալեանի մէկ պահը
Ժ. Ս. ՅԱԿՈՒԵԱՆ	Դպրոցն ահա...
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Մեր դպրոցի լոյսը
Ե. Մ.	«Քարէն Եփփէ» նեմարանը
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Ուսուցիչը
* * *	Եղիշէ Զարեց՝ ուսուցիչը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Նախորդ սերունդներուն աւանդը
ԳԱՐԵԳՐԻՆ Բ. ԱԹՈՒՍԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ	«Այդ է իմ կերակուր եւ ըմպելի...»



# Բազին

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԵ. — ԺԶ. ՑԱՐԻ, ԹԻՒՒ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1977

ԳԷՑՐՈՒԹ

### ՀՈՍԱՆՔՆ Ի ՎԵՐ...

Մեր դպրոցներու պատմութեան շահագրգռութեամբ հետեւած քաջատեղեակ անձերը, «Բագին»-ի այս թիւը աչքէ անցուցած առաջին իսկ վայրկեանին՝ պիտի նկատեն, որ հոն տեղ չեն դրած նշանակելի դերեր կատարած բազմաթիւ դպրոցներ եւ ուսուցիչներ: Զուր պիտի ըլլայ փնտռել, օրինակ, Անանիայ Շիրակացիի եօթներորդ դարուն գործած դպրոցը, Յովհաննէս Իմաստաէրի անհական դպրոցը, Գոշի աշակերտ Յովհաննէս Վանականի Պորանաշատ վանքի դպրոցը, աւելի ուշ՝ Սրիմեանի Վարդապայ վանքը, Արմաշի դպրեվանքը, Թիֆլիսի Յովնանեան աղջկանց վարժարանը, Դուբեան մը դիտեցուցած Սկիւտարի ձեմարանը եւ տարբեր երկինքներու տակ սերունդներ թրծած ուրիշ բազմաթիւ դպրոցներ, եւ անոնց հետ՝ ուսուցիչներ, որոնց բեռած նպատակ քիչ չէ եղած ցեղային մեր անհասականութեան կերաման ու լուսաւորման մեծ գործին մէջ:

Մնաց որ, մեր պատկերացուցած ձեռնարկին հետ բաղդատած՝ անթերի չկրցան մնալ նոյնիսկ հոս մէկտեղուած էջերը: Տեղ մը դպրոցի մը պատկերը պակեցաւ մեզի, ուրիշ տեղ մը՝ հիմնադրի մը լուսանկարը, երրորդ տեղ մը՝ պատմական ու կենսազբաղան տուեալներ: Ահագին գրականութիւն մը աչքէ անցուցինք այս առիթով եւ մեր տրամադրութեան տակ դտնուող աղբիւրները կրցան հայթայթել միայն ա՛յն՝ որ տրուած է հետագայ էջերուն, ամբողջի մը ուրուանկարը:

Այնուամենայնիւ, այս քիչն ալ կրնայ ծառայել այն նպատակին, որուն համար ճամբայ ելանք, — վերլուծեցնել հայ մարդուն, որ դպրոցն ու ուսուցիչը, սկսեալ մեսրոպեան գարաշրջանէն, հայ ժողովուրդի ձեւաւորման ու պահպանման երկարատեւ ու դժուար ճանապարհին վրայ բախտորոշ դեր կատարած են ու կը մնան անփոխարինելի նաեւ այսօր ու վաղուան համար:

Տարբեր ժամանակաշրջաններու մասին վկայող նոյնիսկ այս ժլատ էջերուն զիմաց՝ ընթերցողը պիտի հզրակայնէ Էսկոնյն, որ ռակին, մեր երկրի սահմաններուն ռաք զրած դրացէ թէ հեռաւոր բոլոր ժողովուրդները խորշակի պէս անցած են մեր մօտէն ու անոնց հետ միաժամանակ՝ փորձած են պարտադրել Էսկոնյն իրենց կորստաբեր փիլիսոփայութիւնը, ոգին, ոճը, գաւանական խարդաւանանքներով յագեցած իրենց ժամանակը, որոնց դէմ մեր ժողովուրդի ընտրեալ գաւակները, պայծառատեսութեան զարմանահրաշ զօրութեամբ մը՝ հանած են իրենց սեփական փիլիսոփայութիւնը, ոգին, ոճը, իրենց ժամանակը, աղագայինը, դէմքը, զարուստեան, առաջ լուսաւորութեան աղբիւրներուն, գիրին, դրոշմութեան, գպրոցներուն, որոնց շնորհիւ կրցանք զերծ մնալ Էսկոնյնի քրիստոնեայ աշխարհին ոգեկան մեզմահոս թափանցումներէն, Է՛ւ տաճիկ հորգաներու յորգահոս թունաւորումներէն:

Գրողը՝ յառաջ քան զամենայն:

Պատմութեան ընթացքին ընդհանրապէս պետականութենէ զուրկ մնացած մեր ժողովուրդին համար գպրոցը եղած է ու կը մնայ ամէնէն վստահելի ու կենսատու երակը, նախապատճառը ապրելու մեր ոգիին, տեւելու կորովին: Անիկա է, որ ղեկավար գաղափարներու ընկալման պատրաստած է ժողովուրդին գաւակները, որոնք ներքին այդ հոլովոյթը ապրելէ է՛տք միայն ընդառաջած են լինելութեան նոր կոչերուն, ստեղծագործութեան, ըմբոստութեան, ազատութեան եւ ինքնուրոյնութեան առաքելական ղօղանջներուն: Առանց դպրոցի այդ ձեռնտու շաղախին, փաստ է, որ ոչ մէկ գործօն կրցած է ու կրնայ առաւելագոյն արդիւնք մը ձեռք ձգել, հասնիլ հաւաքական շրջառութեամբ պայմանաւոր աղագային երազներու կենսագործման: Գրողը, ընթերցողը, խօսողը, ունկնդրողը, գործիչը, դործագրողը, ամէնքը, առնուազն հոն պիտի ստանան իրենց առաջին դրդիւրը, հրավառութիւն հոն, դպրոցական յարկին տակ, իրենց նիւթերով յափշտակուած ու սուցիչներուն գիմաց, ինչպէս եղած է միշտ, մեր ցիրուցան ժողովուրդի կեանքի բոլոր հանգրուաններուն, վտանգաւոր բոլոր պատուաստներուն օրօք, բոլոր սերունդներուն համար, անձնատուր միշտ նոյն երազին, — պահել այս վաղեմի արիւնը, որ ինչ մաքրութեամբ կրնայ բերք տալ եւ իբր ա՛յդ միայն արժէք ըլլալ աշխարհին:

Արեան մաքրութիւնը պահելու պայքարը, կրկնած է՛ք բազմիցս, անգործ մարդու գործ չէ, աշխարհնկալման ոճի մը հրահանգն է, ինքնօրէն ապրելու, ծաղկելու եւ ինքնօրէն բաշխուելու հրամայական, որուն սրբութեամբ ծառայեցին եւ որակական յաւելումներ ընծայեցին բոլոր սերունդները:

Փրանսացի ժամանակակից բանաստեղծներէն Մաքս Սյէն, խօսելով Ամերիկայի մասին, քանի մը տարի առաջ կը գրէր «Ծիկարօ» գրականին մէջ.

«Ամերիկայի ֆակասագիրը կը կայանայ ամբար միշտ, որ քոյլ չի տար ոչինչ կորսնցնել ինքն իրմէ եւ ձեռք կը ձգէ ամէն

բան, ծառայեցնելու համար իր յաղբանակից կամ շահերուն, սկսելով անոնցմէ՛, որ իր ծոցից զինք կը ժխտեն»:

Այս արժանիքը մերը եղած է ամերիկացիներէն շատ առաջ: Ամերիկայի գիւտէն ալ առաջ, տասնըվեց դարերէ ի վեր: Յատկանշական է մեր գրարար լեզուին եւ աշխարհաբար լեզուին առաջին աշակերտներուն պարագան: Առաջինները զրկուեցան կամ գացին Նգեսիա, Ամիգ, Բիւդանդիոն ու Ալեքսանդրիա, Աթէնք ու Հոմ, իսկ աշխարհաբարի ուսուցիչները՝ Ֆրանսա, Անգլիա, Մոսկուա ու Դորպատ, ուր մնացին երեք, Հինգ, Եօթը տարիներ շարունակ ու ներծծեցին այլոց մշակութային հիւթերը եւ հայրենիք վերադարձան առանց իրենց անձնաւորութենէն բան մը զիջելու, ամէն ինչ ենթարկած իրենց ցեղային երազներուն, առաւելագոյն հայեր դարձած, ծառայութեան առաւելագոյն տենդերով:

«Փաստն այն է, — կ'ըսէ Արտաշէս Արեղեան, — որ բողոքական միջավայրում Արովեան սովորել էր աւելի խորը եւ մեծ սիրով սիրել իր հայրենի կրօնը, իր հայրենիքը եւ լեզուն»:

Ու այդպէս էին, այդպէս վարուեցան, ապրեցան Արովեանի նախահայրերն ու յետորդները, մէկ ու նոյն ծարաւով, հիւսիսի համալսարաններուն թէ Եւրոպայի մառախլապատ ոտանաներուն մէջ, յայտնաբերելով օտար հրապոյրներուն դիմադրելու գորութիւն, հարազատ հայրենիքին ու ժողովուրդին հաշուոյն նոր լոյսեր որսալու տենդ, որով շեշտեցին իրենց դիմադրիծը, կերտեցին լեզու, դպրոցական ցանց՝ իրենց հերթին, միաձույլ զանդուած կազմող գրականութիւն, մշակոյթ, յեղափոխական մթնոլորտ, յեղափոխական նկարագիր, յեղափոխական արարքներու ընդունակ արի արանց քաջեր, հայրենիք, հայրենական երազներ՝ ազատութեան եւ անկախութեան պայմաններու մէջ:

Հինգերորդ դարէն մինչեւ մեր դարու յիսուական թուականները մեր աղաքը թէ՛ մեր եւ թէ՛ օտար կրթական յարկերէն ներս առաջնորդուեցան նոյն ոգիով, հաւանարար աւելի ճիշդ կ'ըլլար ըսել, որ կրցանք այդ ոգիով կեանքը դիտել ու կշռել սորվեցրնել իրենց:

Ցաւօք, նոյնը չէ այսօր մեր իրականութիւնը:

Դպրոցներով հարուստ ենք հիմա, միայն այս երկրին մէջ կը հաշուենք շուրջ վաթսուն նախակրթարան եւ տասէ աւելի երկրորդական վարժարան, արտաքին երեսներով հրապուրիչ եւ կազմակերպչական ներքին կառոյցով իտէալական յարկեր, ըյոց «մրզահասի» օրերուն շատ քիչ անգամ հայկական աճուկներէն սպասելի արդիւնքի մը ականատես կ'ըլլանք, զուր սպասելով մեր տաղանապներուն հաղորդ եւ առ այդ բեղուն անհանդատութիւններ մատնող ընտիրներու, հաւաքականութիւն մը ոտքի կեցնող յրդացներուն նուիրաբերուելու ոգիով ալեկոծ աղոց, փոխարէնը բան սորված ու վկայական ստացող անցորդներու կը հանդիպինք, որոնք շուտով կը չքանան մեր հորիզոնէն, կենդանական կանխահաս երազներու ետեւէն հոս ու հոն քաշքշելով անբովանդակ իրենց երիտասարդութիւնը:

Երեւոյթին առաջին պատճառը, անշուշտ, հայկական երակէ պարաստուած ուսուցիչներու սարսափելի ցանցառութիւնն

է եւ, երկրորդ պատճառը՝ լարձը մակարդակներու վրայ այդ մասին ցոյց առած մեր ոչ-յեղափոխական կեցուածքը:

Չի կրնար ըլլալ, որ անաւական հեռանկարներով անորոշութեան մէջ հեռախաղաղ կորսուող այլ երիասարդներուն մէջ չկային, չէին դանուեր յուսասու ատաղձներով օժտուած տարրեր, չի կրնար ըլլալ, որ քսան, երեսուն, քառասուն ու աւելի տարիներ առաջ հոգին սուրբին օրհնութեամբ աշխարհ կու գար ազան, իսկ այսօրուան մանուկը կը ծնի առանց հոգիի: Պիտի եզրակացնենք անմիջապէս, որ այն օրերու մանուկին ժառանգական շաղախը ձեւաւորող անհասակնութիւններ կը հաշուէինք ուսուցչական մեր շարքերուն մէջ, մինչ այսօր այդ անհատակնութիւնը կը պակսի մեզի, ան՝ որ ծանօթութիւններով հարուստ ըլլար, հաւատքով՝ անտեղիտալի, խանդավառութեամբ՝ կարկաչուն, ու ցեղին շարունակականութեան հաւատքէն առնելով էր թափը՝ իր միջոցառարին մէջ առնէր ու առնէր տղաքը, դռնէ՛ մէկ մասը անոնց:

Արժանիքներու այդ անսուտ հարստութիւններով միայն հնարաւոր է բանալ աշակերտին, ուսանողին հոգին եւ արթնցնել անոր էութեան թաքուն տարերքը, ցնցել ենթադրականութիւնը եւ դնել զայն իր կոչումին համապատասխան հունի մը մէջ, ինչպէս ըրին բազմարդէին ու բազմերախտ մեր ճշմարիտ ուսուցչիները, աստուածարեալ վարդապետէն սկսեալ մինչեւ ուսուցչութիւնը զոհարեութեան վերածած սպարէզին վերջին սուրբերը:

Ատոր համար անհրաժեշտ է, որ նաեւ այսօրուան ուսուցիչը ունենայ մաս մը ժողովուրդ կերտող մեր առաջին սուրբին տեսիլքէն, մաս մը Նարեկացիի ձենձերումներէն, բան մը մեր «բազմբահանձար փիլիսոփայ եւ բանիբուն ու տիեզերալոյս բարունակակա»ներէն, ու դասարան ոտք դրած պահուն յիշէ մանաւանդ, որ ինք առնուազն չափով մը կ'անձնաւորէ Արուիանի վէրքը, Աշտարակեցիի կամբը, Գէորդ Չորրորդի նախաձեռնող ոգին, Թյակտինցիի յամառութիւնը, Հրանդի կարծրութիւնը, Վարուժանի վերանալու շնորհը, Օշականի կիրքը, Պէրպէրեանի վեհութիւնը, Շանթի ամբողջութիւնը, Ագբալեանի հաղորդականութիւնը:

Պիտի ըսենք տակաւին, որ մեր պատկերացումին մէջ ուսուցիչը հայերէն լեզու, դրականութիւն ու պատմութիւն աւանդող տիպարը չէ միայն, ուսուցիչ են նաեւ միւսները, ժողովուրդը մը առանձնացնող արիւնատար երակներէն մէկուն կամ միւսին առողջացման ու անման ի խնդիր փոթորկող բոլոր ընադանները, յեղափոխական, երաժշտական, թատերական բոլոր ընդառուներէն ներս, ու ճիշդ ատոր համար ասպարէզին երախտաւորներուն կարդին հետազայ էջերուն ուշադրութեան յանձնեցինք նաեւ ուրիշներ, Բրիսապիտորը՝ կարողութիւններ կոհնող եւ ենթական անհամբերութեան մասնող անդիմադրելի կախարդ, Կոմիասար՝ տեսլահար խուզարկու, Մաղաքեանը՝ հնարաւորութիւններու հետամուտ մարաիրոս, Ահարոնեանի, Կանաչեանի ու Մարի-Նուարդի պէս ծիւրը ծաղկման ճամբուն մէջ նետող մողեր, եւ ասոնց հետ ուրիշներ, յայտնի, անյայտ, խոնարհ հերոսները մեր իմացական անդասաններուն, անձանօթ զինուորները, որոնց անձ-

նամոռ ու բեղուն գործունէութեան չնորհիւ հայ կեանքը ձեւ առաւ պատմութեան արշալոյսին, ու հայութիւնը ստացաւ գիմարէ՛ծային իւրապատուկ որակ մը, որով զօրացաւ ու յաղթահարեց մեր երկրէն ներս խուժած ու հողիներուն սպառնացող բոլոր վրտանգները:

Այս շնորհներէն մէկուն կամ միւսին աէր եղող ուսուցի՛չն է հայ ուսուցիչը, որուն վրայ, ի՛ր իրաւունքն է, պիտի գուրգուրանք բանիւ եւ գործով, ասպարէզին միւս բոլոր պաշտօնեաներէն վեր դասելով զինք, հայ մարդ կերտո՛ղ ուսուցիչը:

Այս շնորհներէն մէկէն կամ միւսէն գուրկ ուսուցիչը գործ չունի՛ մեր կրթական յարկերէն ներս ու մենք, մե՛ր իրաւունքն է, հարկին աակն ենք անողոք ըլլալ անոր նկատմամբ, որպէսզի երթայ եւ ամսուան օրերը ուրիշ տեղ հաշուէ:

Ազատ ասպարէզներու համար թեկնածուներ հայթայթելու յանձնառութեան մը տակ չեն գանուիր մեր դպրոցները, մեզի պէտք եղածը անպայման այդ տարրը չէ, առաւելարար միւսն է, ստեղծարարական տենդով ալեկոծ բնաւորութիւնը, մեր կեանքին գործօն մասնակցութիւն մը բերելու անհանգստութիւններ մատնող խոստումը, հայ մշակոյթով ու պատմութեամբ լեցուած ու յաւելումներ խոստացող ընծիւղները, առանց որոնց յայտնաբերման կարելի չէ արդարացնել մեր ժողովուրդին ուսերուն դըրած դպրոցական ծանր բեռը:

Գիտենք, որ պատրաստ արդարացումներ կան այս մասին եւ պայմաններու ու ժամանակի հարցը կրկին հիմք պիտի դառնայ արդարացումներուն:

Պայմանները, ոչ մէկ կասկած, նպաստաւոր չեն մեզի, ու ժամանակը անողոք թունաւորումներով կը հոսի մեր երակներէն ներս, բայց փնտռուածները բնականոն պայմաններու եւ խաղաղ ժամատակներու մէջ գործող դպրոցներ եւ ուսուցիչներ չեն, մեր փնտռուքները ծնունդ կ'առնեն անսովորին հրամայականէն, պէտք է ի վերջոյ իրենց պատմական պատասխանատուութիւնը ստանձնեն մեր դպրոցներն ու ուսուցիչները եւ աշխարհի պայմաններուն հակադրարար ստեղծեն մեղապատուկ պայմաններ, ու հայկական ժամանակ մը, որպէսզի ուրիշներու պայմանները արիւնքամ ծանծանց մեզ, ուրիշներու ստեղծած ժամանակին մէջ տարբարութեւնը ողբերգութիւնը չհարունակուի հետանքի մը պէս ընդունուիլ, եւ սեփական ինքնութիւն մը կարկառելու ցաւազին յանձնառութիւնը անծանօթ ապրում մը չմնայ ծլարձակ սերունդներուն:

Եւ յետոյ բնաւ պիտի չմոռնանք, որ աւելի ձեռնտու ժամանակի մը մէջ ծնունդ չառին եւ աւելի լաւ պայմաններու մէջ չծաղկեցան ո՛չ Վազարպատեան հրաշագործ դպրոցները, ո՛չ Գլաձորի համալսարանը՝ «յերկրորդ Աթէնս պանծալի», ո՛չ Գլաձորի յաջորդները՝ «մայրաքաղաք ամենայն իմաստից», ոչ ալ տասնիներորդ դարուն եւ քսաներորդ դարու մինչեւ կէսը գործած ու ամբողջ մեր ժողովուրդը վերափոխած մեր վարժարանները:

Տեղ մը կ'ըսուի.

«Լագարեանն անարանի շրջանաւարտները կը աիրապետէին

հայերէնէն գատ ոռութիւնի եւ օտար լեզուի մը»:

*Ռարիչ տեղ մը.*

«Գեղորգեան հեմարանում ուժեղ էին հայագիտական առարկաները, իբրև օտար լեզու, սովորում էին, ոռութիւնից գատ, գերմաներէն եւ յունարէն»:

*Երրորդ տեղ մը, Պոլսոյ Պեղճեան վարժարանին համար.*

«Ուսումնական ծրագրում, բացի մայրենի լեզուից, կա-  
յին ֆրանսերէն եւ իտալերէն»:

*Կը նշանակէ, թէ դեռ մօտիկ անցեալին մեր ուսանողութեան բերք աւելի թեթեւ չէր, քան այսօրուան աղոց ձեռքը տրուած յայտագիրը, եւ հետեւաբար ո՛չ միջավայրային օտարութիւնն է մեր տկարութեանց պատճառը եւ ոչ այ յայտագրային խճողութիւնը:*

*Ըստ Էրեսոյթին, մենք կը տառապինք առաւելարար մթնոլորտի պակասէն, մթնոլորտ ստեղծելու ընդունակ տարրերու առկաութենէն, չունինք այն տիպարներէն, որոնք տ.յս դարուն սկիզբները, անցեալ դարուն ու նախընթաց դարերուն մեծ յանձնառութիւններու տակ մտան ու հոսող ժամանակին գէմ թիավարեցին Հոսանքն ի վեր, բոլորովին աննպաստ պայմաններու տակ, երբեմն նոյնիսկ արիւնտ յաճախանքներով յղի միջավայրերու մէջ, ուժ ունենալով միայն ներքին հաւատքը, պատկանելիութեան հուրքը, ծառայելու աննոր, խաթարուէ հետու մնալու նախանձախնդրութիւնը, ցեղային իսկութիւններ յայտնաբերելու պապակը:*

*Այդ հաւատաւոր, խոռովիչ, ուժեղ գործունէութեան իրբեւարգիւնք մեր ժողովուրդը ունեցաւ լեզուական, գրական, պատմական, մշակութային հսկայ ժառանգութիւն մը, որուն ոգեղէն բովանդակութեամբ ստեղծեց հակադրեցութեան իր զօրութիւնը ու մնաց կանգուն փոթորիկներուն թէ փորձութեանց օրերուն:*

*Փորձութիւնը նուազ ծանրակշիռ չէ հիմա եւ հնչած է ժամը հոսանքն ի վեր թիավարելու ստիպողական մեր աւանդութեան:*

*Ու հոս վճռական է գերը հայ ուսուցիչին, անոր՝ որ կը մերժէ հաշտուողական հոգեբանութեան ամօթը կապել իր անունին, կը հրժարի չէզոք հանդիսատեսի իր կեցուածքէն, ու գիտութեամբ, ապրումով ու մշտանորոգ ջիղերու հրավառութեամբ հանդէս գալով՝ կը կանգնի տղուն առջեւ, կը բուժէ զայն չէզոքութեան, օտարամոլութեան կամ դիւրակեցութեան ահաւոր վարակներէն ու հոգիին կը վառէ ազգային եւ հանրային անշահախնդիր ցնորքներու ճրագներ:*

*Եթէ կայ լայն շնչառութիւն եւ ջիղերու ամբուրթիւն ունեցող այդ գործօնը, պէտք է ամբողջական դուրգուրանքով մը տէր կանգնիք իրեն, համարենք զայն մեր վարժարաններուն առաւելադոյն անձը, իսկ եթէ չկայ՝ պարտաւոր ենք անյապաղ ու բոլոր միջոցներով պատրաստել նորը, առնուազն վաղուան համար, որովհետեւ այս ընթացքով մեր վաղը կրնայ աւելի աննախանձելի ըլլալ:*

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

...Հայկական գրքերն ստեղծուած էին արդէն, նւ գործարարութեամբ՝ Առակաց գրքի հատուածի քարգումնութեամբ, հաւատուի էր դրանց պիտանութիւնը: Այժմ արդէն Մեսրոպը եւ նրա ընկերակիցները ձեռնամուխ են լինում ուսումնական եւ գրական գործունէութեան: Մեսրոպը գլխաւորեց մի կողմից ուսումնական, միւս կողմից՝ Թարգմանական ու քարգզական գործը: Նախ «Նարեկեցի»-ն, ինչպէս եւ պէտք էր սպասել, քարգմանել Աստուածաշունչը: Կորիւնը պատում է, որ սկսեցին քարգմանել արեւտարանական արւեստը եւ գրել (այսինքն՝ արտագրելով բազմացնել) ու սովորեցնել: Ինքը՝ Մեսրոպը, քարգզութեան է անցնում նախ Գորքեում, ապա՝ Սիննիում: Արդէն կրթուած աշակերտներին ուղարկում են Հայաստանի զանազան կողմերը՝ գրագիտութիւն սովորեցնելու, քրիստոնէութիւնը քարգզելու մայրենի լեզուով: Իսկ աշակերտներն անպակաս էին: «Նրանք իրենք էլ հենց Հայաստան աշխարհի զանազան կողմերից ու գաւառներից բազմութեամբ վեր էին կենում, գալիս հասնում էին աստուածային գիտութեան բացուած աղբիւրը»: Այս եղանակով կարճ ժամանակամիջոցում Հայաստանում ստեղծուեց գրագէտ, իր ժամանակի համար կրթուած երիտասարդների մի մեծ խումբ, որը եւ նուիրուեց ինչպէս լուսաւորութեան, նոյնպէս էլ կրօնական գործունէութեան: Մեսրոպի, Սահակի ու նրանց աշակերտների ծաւալած գործունէութիւնն իսկապէս մի լուսաւորական շարժում էր, որ ունէր ո՛չ միայն մշակութային, այլեւ, առաջին հերթին, ազգային-քաղաքական նշանակութիւն: Միասնական մշակութի գարգացումով հիմք էր դրում հայ ժողովրդի բոլոր հատուածների միաւորման, հոգեկան կերտումաճի ու մշակոյթի միասնականացման, որ անհրաժեշտ էր ո՛չ միայն հենց այդ դարում, երբ Հայաստանը բաժանուած էր երկու օտար պետութիւնների միջեւ, այլեւ ամբողջ հետագայ դարաշրջաններում՝ դիմակայելու համար իրար շարժողոպ կործանիչ արշաւանքներին, բարբարոսական ներխուժումներին ու տիրապետութիւններին: Այդ քանը լաւ էին հասկանում ո՛չ միայն Մեսրոպը, Սահակը եւ իրենց աշակերտները, այլեւ Վասիլ Մալախ արքան, աշխարհիկ իշխանութիւնը: Եւ ի գուր չէ, որ Կորիւնը ոգեւորութեամբ պատում է. թէ ամբողջ Հայաստան աշխարհում սրտալից ուրախութիւն էր տիրում:

Եթէ հայ ժողովրդի հոգեւոր ու գաղափարական միասնութիւնն ամբապնդելուն նուիրուած անդու գործունէութեամբ ու մեծամեծ ջանքերով, այդ նպատակին հասնելու համար հայկական գրի ու գրականութեան ստեղծման գործում ցուցաբերած հետեւողական ու անխնայ պրպտումներով Մեսրոպ Մաշտոց հանդէս է գալիս որպէս իր ժողովրդին նուիրուած անձնուրաց քաղաքական-գաղափարական գործիչ, ապա հայկական գրի ստեղծումով նա իրեն դրսեւորում է իբրեւ մեծ գիտնական: Իր կատարելութեամբ հայկական գիրը, իրօք, հանճարեղ մտքի ծնունդ է: Այդ գործն ատարելով՝ Մեսրոպը հայ ժողովրդին նուիրեց իր հոգեկան կերտումաճի բիւրեղացման հօգը մի զենք:



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Միջնադարեան հայ դրականութեան մէջ նոր դարաշուրջը բացուեմ է մեծադոյն բանաստեղծ Գրիգոր Նարեկացու (951-1003) ստեղծագործութեամբ:

Գրիգոր Նարեկացին ծնունել է գեղածիծաղ Վանայ լճի հարաւային ափերին գտնուող զիւղեբորից մէկում: Նրա կեանքը փոքր հասակից կապուած է Ռչտունեաց աշխարհի Նարեկ զիւղի վանքի հետ, որից եւ՝ Նարեկացի կոչումը: Հողեւոր պետերին այնքան անհանդստութիւն պատճառած վանքի վանահայրն էր իր մօր հօրեղբայր, Ժամանակի յայտնի զիտնական ու փիլիսոփայ Անանիա Նարեկացին:

Հնագոյն ձեռագիր կենսագրականներում եւ բանաստեղծի գործերում եղած ինքնակենսագրական ընդթի յիշատակութիւններում նրա կեանքի մասին պահպանուել են թէպէտ ոչ շատ, բայց միանգամայն հաւաստի տեղեկութիւններ: Նրա ուսումնասիրելը անցել է վանքի՝ X դարում շատ հռչակուած դպրոցում: Իւրացնելով դպրոցի մատենագրանում գտնուող թարգմանական թէ ինքնուրոյն մեծ թիւով կրօնա-փիլիսոփայական ձեռագիր դրականութիւնը, Նարեկացին ինքը հետազայում դառնում է դարի առաջնաւոր ուսման այդ կենտրոնի սիւներից մէկը:

Մ. Մ.



ՆԱՐԵԿԱՑ ՀՈՉԱԿԱՒՈՐ ՎԱՆՔԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ



## ՄԻԻԹԱՐ ԳՈՇ

Մյոխթար Գոշը միջնադարեան հայ մշակոյթի խոշորագոյն դէմքերից մէկն է, մեծ մտածող-գիտնական, օրէնսդիր, գրող, մանկավարժ, հասարակական գործիչ, որ ապրել է իր ժամանակի հասարակական-ֆաղափական շահագրգռութիւններով եւ արձագանգել դրանց՝ գրչով եւ անձնական գործունէութեամբ:

Մյոխթարը ծնունդ է Գանձակ ֆաղափում 1120ական քուակամներին: Սովորել սկսել է տեղում: Չափահաս դառնալով՝ որոշում է նուիրուել հոգեւոր կոչման եւ ձեռնադրուում է կուսակրօս ֆահանայ: Գիտելիքներ ձեռք բերելու համար նա գնում է որոնելու գիտնական վարդապետներին: Աշակերտում է Յովհաննէս Տափուշեցուն եւ ուրիշ գիտնականներին, ստանում վարդապետի կոչում: Սակայն այդ էլ չի բաւարարում Մյոխթարին՝ նա Արեւելեան Հայաստանից հասնում է Կիլիկիա եւ քաջանելով վարդապետական աստիճան ունենալը, վերստին ուսանում է Սեւ լեռան երեսելի գիտնականներին մօտ:

Վերադառնալով հայրենիք, սկզբում նա ապրում է Գանձակում, ապա տեղափոխուում է Խաչեն, այստեղից էլ գալիս է Գետիկ վանքը: Յըրշ ժամանակ անց, երկրաշարժից աւերուում են վանքն ու շրջակայ գիւղերը: Ամիրպասալար Ջաֆարէ եւ իմանէ Ջաֆարեան իշխանների հովանաւորութեամբ ու օգնութեամբ, նախկինից ոչ հեռու, մի գեղեցկատեսիլ վայրում՝ Տանձուտայ ձորում,

կառուցում է Նոր Գետիկ վանքը եւ հանգրուանում այնտեղ: Մտերբում կիմնում է երկու գիւղ, ուր տեղաւորում են երկրաշարժից տուժած գիւղացիները:


Երբ Մյոխթարը Կիլիկիայից վերադառնում է, նրա չիմաստութեանց, գիտնականութեան հաջողութեանը ամէնուրեք այնքան է հռչակում, որ շուտով աշակերտելու, ա՛նգամ շատ վարդապետներ, ծակելով իրենց կոչումը՝ աշակերտում են Մյոխթարին եւ կրկին ստանում վարդապետի աստիճան:

**XIII** դ. նշանաւոր պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որ եղել է Գոշի աշակերտի՝ վանական վարդապետի աշակերտը եւ իր պատմութեան մէջ կենսագրական տեղեկութիւններ է հազորդում Մյոխթարի մասին, այսպէս է գնահատում նրան. «Այր իմաստուն եւ Հեզ, վարդապետական ուսմամբ հոշակեալ», «Մեծ վարդապետ», «Հոշակաւոր եւ մեծիմաստ գիտութեամբ»:

Ժամանակին Մյոխթարի մասին պատմելի են աւանդութիւններ, որոնց մէջ նա սրբացուել է:

Մյոխթար Գոշը մահացել է խոր ծերութեան հասակում՝ «ի խորին ծերութեան», այնտեղալ եւ լի աւուրքք», հայոց ՈԿԲ (= 1213) քուակամն եւ քարուել Նոր Գետիկում, որը իր անունով կոչուում է Գոշավանք:

Է. Գ.



# ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՏԻ

Վարդան Արեւելցիմ յայտնի է որպէս մատենագիր, գիտնական, պատմագիր, աշխարհագրագետ, փիլիսոփայ, գրող, բարգամիչ, մանկավարժ եւ ազգային-հասարակական գործիչ:

Ծնուել է 1197-1200 թուականներին միջեւ, Գամձակի գաւառում: Այտնող էլ ստացել է իր մաթեմական կրթութիւնը: Հմարաւոր է, որ մա կարճ ժամանակով ուսանել է Նոր Գետիկ վանքում՝ XII-XIII դդ. հռչակաւոր հայ իրաւագետ գիտնական Մ. Գոշի մօտ: Այնուհետեւ հիմնական կրթութիւն է ստացել Տավուշ գաւառի խորանշատ վանքում՝ ուսուցչապետ ունենալով XIII դարի անուանի գիտնական-մանկավարժ Յովնանուէ վանակամին: Դեռ ուսանողական տարիներին մա յօրինել է մամը երկեր եւ քարգմանութիւն է կատարել յունարէնից:

Վարդան Արեւելցիմ մանկավարժական լայն գործունէութիւն է ծաւալել: Կայէմբերքի Ս. Անդրէի վանքում հիմնել է դպրոց, ուր եւ դաստանդել է մտաւորապէս 1235-1230 եւ 11-12 տարուայ ընդմիջումից յետոյ՝ 1251-1255 թուականներին:

Ենթադրոււմ է, որ Վարդանը ապրել եւ գործել է Օսնի ուսումնոցիտական խոշոր կենտրոն Հաղբատի վանքում:

1239 թ. վերջին կամ 1240 թ. սկիզբին ուխտագնացութեան է մեկնել Երուսաղէմ: Վերադարձին կոտանդին Բարձրբերդի կարողիկոսի

(1221-1267 թթ.) յորդորանդով կիլիկիայում է մնացել մինչեւ 1245 թ.: 1246 թ. վերստին եկել է Հայաստան, սակայն 1248 թ. վերադարձել կիլիկիա եւ այնտեղ անցկացրել եւս 3-4 տարի:

Արեւելցիմ կիլիկիայում եղել է արեւոնիքի եւ կարողիկոսարանին շատ մօտ կանգնած ինդիւնականոր անձնաւորութիւն՝ ուսուցիչ եւ խորհրդական: Նա մասնակցել է ազգային-եկեղեցական եւ բաղաւական կարեւոր նշանակութիւն ունեցող ժողովներին եւ թիւզանդիայի ու վասիկանի՝ հայերի մկատամբ վարած ոչ-բարեացական բաղաւականութեան դէմ մղուող հայրենասիրական պայքարին:

Արեւելցու կեանքի վերջին մէկ եւ կէս տասնամակը անցել է Խորվիրայի վանքում: Այստեղ հիմնել է միջնադարեան բարձրագոյն դպրոց, ուր ուսումնատրեան էին զարկ ս'չ միայն բուն Հայաստանից, այլեւ՝ կիլիկիայից: Շատ են նրա երեսիլի սաները՝ անուանի քանաստեղծ, գիտնական ու մատենագիր Յովնանուէ կրգմկացիմ, գիտնական-վարդապետ Գլուրդ Սիւսանցիմ (1246-1301), միջնադարեան հայկական խոշորագոյն դպրոցի՝ Գլածորի համալսարանի հիմնադիր Ներսէս Նշեցիմ (մահացած 1284 թ.) եւ ուրիշներ:

Նա մասնակցել է 1271 թ. Խորվիրայում եւ այնտեղ էլ քաղուկ:

Փ. Ա.



ՀԱՐՎԱՏԻ ՎԱՆՔԻ

## Հ. Գ Ա Բ Ր Ի Ե Լ Ե Ա Ն


### ԳԼԱԶՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

12րդ դարի վերջերից սկիզբ առած Կենտրոնական եւ Կիլիկեան Հայաստանի քիչ թէ շատ խաղաղ զարգացումը երկար չտեսց։ 13րդ դարի 20ական թուականներից սկսուեցին մոնղոլական արշաւանքները եւ 1236-43 թուականների ընթացքում ամբողջ Հայաստանը մոնղոլների կողմից նուաճուեց։ Այդ դրանից գերծ մնաց միայն Կիլիկեան Հայաստանը։ Բայց այս չի նշանակում, որ նա ամէն տեսակի յարձակումներից ազատ մնաց ու ժողովուրդը հնարաւորութիւն ունեցաւ հանգիստ կերպով շարունակելու իր ստեղծագործական աշխատանքը։ Դժբախտաբար՝ ոչ։ Եթէ մոնղոլները չհասան Կիլիկիա, սպա դրանց փոխարէն Եգիպտոսի մեմլուկները հանգիստ չտուին նրան եւ 1375 թ. գրաւելով Երկրի մայրաքաղաքը՝ վերջ տուին հայկական պետականութեանը։ Այսպիսով, 14րդ դարում հայ ժողովրդի համար ստեղծուեց չափազանց վատ կացութիւն։ Մեմլուկները՝ Կիլիկիայում, մոնղոլները՝ Կենտրոնական Հայաստանում քարուքանդ արին երկիրը՝ աւարի եւ կրակի տալով գիւղերն ու քաղաքները։

Պատերազմական այս անբիւն ու կոռուպուտին յաջորդում են մոնղոլական ծանր հարկերը։ Ըստ նոր հարկային սխտեմի՝ ժողովուրդն իր եկամտի զգալի մասը տալիս էր պետութեանը, պետութեան գանազան պաշտօնեաներին, կալուածատէրերին եւ հայ եկեղեցուն, որի հետեւանքով իր տընտեսութիւնը առաջ տանելու համար նրան համարեա՝ թէ բան չէր մնում ու նա հարկադրուած կիսաքաղց վիճակ էր անցկացնում։ Անշուշտ, այս ամէնը հայ տեսական մտքի զարգացման վրայ խիստ բացասական անդրադարձում ունեցաւ, բայց կասեցնել այն չկարողացաւ։ Քաղաքական արհաւիրքների առաջն առնելու հնարաւորութիւն չունենալով՝ երկրի առաջաւոր տարրերը յատուկ ուշադրութիւն դարձրին ժողովրդի կուլտուր-մտաւոր պահանջների բաւարարման վրայ, ստեղծեցին մտքի նոր կենտրոններ ու գարկ տուին հայ կուլտուրային, դրանով փաստօրէն աշխատելով ո՛չ միայն պահպանել, այլեւ ամրապնդել ժողովրդի մտաւոր ինքնաւորանութիւնը։ Հայոց պատմութեան մէջ դա առաջին դէպքը չէր։

Ունենալով որոշ առաջադիմական նպատակ՝ Ներսէս Մշեցին 1280 թ. վայոց Զոր գաւառի (այժմ՝ Եղեգնաձորի շրջան) Գլաձոր կոչուած մի անընշան վայրում հիմնեց մի բարձրագոյն դպրոց, որը յայտնի է Գլաձորի համալսարան անունով։ Ներսէս Մշեցին վարդան Արեւելցու աշակերտն էր։ Արեւելցին մոնղոլների տիրապետութեան օրօք իր համալսարանի համար պատշաճ խաղաղ մի անկիւն գտնելու համար, երկար թափառելուց յետոյ, կանգ առաւ հորվիրապի մենաստանում, որտեղ եւ մահացաւ 1269թ.։ Արեւելցու մահուանից յետոյ նրա սկսած կուլտուրական գործը շարունակեց նրա աշակերտ Ներսէս Մշեցին։

Ներսէս Մշեցու մասին Մատթէոս Կիլիկեցին յայտնում է. «Վարդանից յետոյ... նրա աթոռին նստաւ (Ներսէսը)։ Նրա օրօք Հայոց ազգը գրուց ու-



ԳՎԱԶՈՐԻ ՎԱՆՔԸ

*սամբ լուսավայրեց. (Ներսէսը) խոր ծերութեան հասաւ, մեռաւ... Գլաձորի նոյն վանքում»:*

Այն՝ որ համալսարանը ստեղծուեց Գլաձորում, բացատրում է նրանով, որ մոնղոլների տիրապետութեան օրօք վայոց Ձորը Հայաստանի միւս վայրերի բախտին չարժանացաւ: Այդ երկրամասի ղեկավարները կարողացան տարբեր նամապարհներով իրենց աշխարհը մոնղոլների անբաժուփիւններից գերծ պահել ու դրանով արդէն նպաստել դրա տնտեսական, ինչպէս նաեւ կուլտուրական բարգաւանմանը: Ստեփանոս Օրբելեանն ասում է, թէ Սիւնիքն իր հօրեղբոր, հօր, ինչպէս նաեւ եղբոր՝ Էլիկումի ժամանակ, երբ «ամբողջ երկիրն աւերուեց ու ոչնչացաւ, իսկ վանքերը դադարեցին պաշտօն ունենալուց... Նոյի ասպանին նման ընկած էր աշխարհակործան ալիքների մէջ...»: Այսպիսով, Գլաձորի եւ Տաթեւի համալսարանների կազմակերպումն ու գործունէութիւնը սերտօրէն կապուում է Սիւնիքի քաղաքական վիճակի համեմատաբար կայուն լինելու եւ տնտեսական վերելքի հետ: Բայց, դրա հետ միասին, կար մի եանգամանք եւս, որն այդ բանում մեծ դեր կատարեց. դա կաթալիկութեանը իսկադրուելու, հայ եկեղեցու շահերը պաշտպանելու համար նոր կադրերի պատրաստման պահանջն էր:

Մենք արդէն գիտենք, որ դեռ 12րդ դարից Կիլիկիայում ստեղծուեցին ունիթոնների կազմակերպութիւններ, որոնք ցանկանում էին հայ եկեղեցին ենթարկել ապականութեանը: 14րդ դարում այդ ուղղութեամբ տարուող աշ-

խտանձն անլի ուժեղացաւ, եւ հայ եկեղեցին հարկադրուած եղաւ անլի ակտիւ կերպով պաշտպանել իր շահերը: Օրբելեանն ասում է, թէ յիշեալ շՔԲ-ջանում հակալուսաւորչակուն ուսմունքները, յատկապէս քաղաքական ազգաբնակչութեան մէջ, բաւականաչափ ուժեղացան: Անա այդ «ներձուածա-յին» հոսանքների դէմ պայքարելու համար կարգերի մեծ կարիք գոյացուց: Այդ կարիքը բաւտրաբելու համար կազմակերպութեան Գլխաւորի եւ Տաքսի համալսարանները: Անշուշտ, նպատակը կրօնական էր, սակայն իրականացման համար կազմակերպուած համալսարաններն իրենց գործունէութեամբ դուրս եկան գուտ կրօնական շրջանակներից եւ մեր ժողովրդի կեանքում խոշոր կալուստրական դեր կատարեցին, տալով գիտնականներ՝ փիլիսոփաներ, պատմաբաններ, պոետներ, քաղաքական գործիչներ, եւ այլն: Այդպիսիներից կարելի է յիշատակել Ստեփանոս Օրբելեանին, Խաչատուր Կեչարեցուն, Մխիթար Սասնեցուն, Կիրակոս Երզնկացուն, Յովհան Ռոտունեցուն, Գրիգոր Տաքեացուն եւ միւսներին, որոնց անունները կապուած են Մշեցու կազմակերպած համալսարանի հետ:

Մշեցու մահուանից յետոյ համալսարանի ղեկավարութիւնն անցաւ Եսայի Նշեցուն: Սա ծնունդ է Սասունի Նիչ աւանում՝ 13րդ դարի մօտաւորապէս 50ական թուականներին եւ եղել է Ներսէս Մշեցու լաւագոյն աշակերտներից մէկը, որը ուսուցչի մահուանից յետոյ մօտ վաթսուց տարի գլխաւորում է Գլխաւորի համալսարանը: Նշեցին ժամանակի խոշորագոյն գիտնականներից մէկն էր, որը տիրապետում էր մի շարք լեզուների, լաւ ուսումնասիրել էր հին յունական գրականութիւնը եւ փիլիսոփայութիւնը: Արիստոտելն ու Պլատոնը նրա սիրած հեղինակներն էին: Ժամանակակիցները մեծ յարգանքով են խօսում Նշեցու մասին ու նրան մեծարում «եռամեծ փիլիսոփայ», «վսեմական, անյաղթ հետոր» եւ այլ նման տիտղոսներով: Նշեցուց մնացել են բազմաթիւ մեկնութիւններ, մատեր, նամակներ եւ այլ գրութիւններ, որոնք հիմնականում կրօնա-քաղաքական բովանդակութիւն ունեն:

Եսայի Նշեցուն յաջորդեց Յովհան Ռոտունեցին, որը Նշեցու լաւագոյն աշակերտներից էր: Համալսարանի ղեկավար դառնալուց կարճ ժամանակ յետոյ, քաղաքական, ինչպէս նաեւ տնտեսական եւ այլ կարգի պատճառներից հարկադրուած, Ռոտունեցին Գլխաւորի համալսարանը փակեց եւ վերաբացեց այն Տաքեւում, դրանով հիմք դնելով արդէն Տաքեւի համալսարանին:

Հ Ե Ն Ր Ի Կ Գ Ա Բ Ի Է Լ Ե Ա Ն

Ա. Ա Ր Ե Ի Շ Ա Տ Ե Ա Ն

**ՅՈՎՆԱՆ ՈՐՈՏՆԵՅԻ**

Փիլիսոփայ եւ մանկավարժ, Տաթևի համալսարանի հիմնադիր Յովհան Որոտնեցին հայ միջնադարեան գիտութեան առաւել նշանաւոր գործիչներից է: Նա խոր հետք է թողել հայ փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ, զարգացնելով առաջաւոր, մատերիալիստական տենդենցները: Ոչ պակաս կարեւորութիւն է ունեցել Յովհան Որոտնեցու մանկավարժական գործունէութիւնը: Նրա սաներից շատերը դարձել են փայլուն գիտնականներ, ուսուցիչներ, մատենագիրներ եւ եկեղեցական-քաղաքական գործիչներ:

Յովհան Որոտնեցին ծնուել է 1315 թ. Միւնիքի Վաղաղի գիւղում: Նա եղել է «Միւնիքի առաջին իշխանների տոհմից սերուած մեծ իշխան իվանէի որդին»: Դեռ պատանի հասակում Յովհանն ստացել է հոգեւոր աստիճան եւ իրեն նուիրել է գիտութեանը:

Միւնիքում այդ ժամանակ հիմնադրուած բարձրագոյն դպրոցները՝ Գլաձորի եւ Տաթևի համալսարանները, դարձան գիտական եւ ուսումնական խոշորագոյն կենտրոններ:

Յովհան Որոտնեցին իր փիլիսոփայական եւ աստուածաբանական կըրթութիւնն ստացել է Գլաձորի համալսարանում՝ նրա ուկիտոր, ականաւոր գիտնական եւ մանկավարժ Եսայի Նչեցու ձեռքի տակ: Այստեղ նա հիմնաւորապէս ուսումնասիրում է անտիկ եւ վաղ քրիստոնէական մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Պորփիրիի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստուածաբանի, Նեմեսիոսի եւ ուրիշների աշխատութիւնները: Աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան հետ միասին համալսարանում մեծ ուղեգրութիւն էր դարձում քերականութեանը, ճարտասանութեանը, մաթեմատիկային եւ բնագիտութեանը:

Գլաձորի համալսարանի փակումից յետոյ, որ տեղի ունեցաւ Եսայի Նչեցու մահուան (1338 թ.) եւ քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով, Յովհան Որոտնեցին մի շարք միջոցներ ձեռնարկեց վերականգնելու ուսումնական կենտրոնը եւ մի քանի տարի անց, արդէն որպէս ճանաչուած գիտնական եւ ուսուցիչ, հիմնադրեց նոր, Տաթևի համալսարանը, որը շուտով զերպանցեց իր նախորդին թէ՛ ուսանողների թւով եւ թէ՛ գիտա-մանկավարժական աշխատանքների թափով: Իր լայն գիտելիքների եւ գիտութեան զարգացման մէջ մեծ ծառայութիւնների համար Յովհան Որոտնեցին ժամանակակիցների կողմից ստացել է «եռամեծ փիլիսոփայ» պատուաւոր տիտղոսը, որին արժանացել են միայն միջնադարի այնպիսի՝ խոշորագոյն գիտնականներ, ինչպիսիք են Գաւիթ Անյաղթը, Յովհաննէս Սարկաւազը, իսկ այնուհետեւ Գրիգոր Տաթևացին:

Յովհան Որոտնեցին վիթխարի հեղինակութիւն էր վայելում ո՛չ միայն գիտութեան եւ եկեղեցական դոկիմատիկայի ասպարէզում, այլեւ՝ Միւնիքի



ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԸ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

հասարակական-քաղաքական կեանքին մերարերող հարցերում: Իր բազմաթիւ աշակերտների և համախոհների աջակցութեամբ Յովհան Որոտնեցին ղեկավարել է այն պայքարը, որ մղուում էր ունիթորների՝ պապական մխիոնարների և նրանց հայ հետեւորդների դէմ, որոնք ջանում էին հայկական եկեղեցին ձուլել կաթոլիկականի հետ և հայերին ենթարկել Հոմմի պապի գերիշխանութեանը: Պետական անկախութեան քաղաքացութեան պայմաններում հայոց եկեղեցու ինքնուրոյնութիւնը դիտուում էր որպէս ներքին անկախութեան, ազգային մշակոյթի պաշտպանութեան մի միջոց: Յովհան Որոտնեցու և նրա համախոհների պայքարն աւարտուեց հայ եկեղեցու ինքնուրոյնութեան կողմնակիցների յաղթանակով:

Իր լարուած դիւա-մանկավարժական գործունէութեան երկար տարիների ընթացքում Յովհան Որոտնեցին դաստիարակել է տաղանդաւոր աշակերտների մի ամբողջ աստղարոյլ, որոնք Հայաստանի տարբեր մասերում ձգտում էին սրահայանել դիտական օճախների կեանքը: Նրանց ջանքերի շնորհիւ, մի քանի տասնամակով յետաձգուեց մշակութային համընդհանուր անկումը:

Յովհան Որոտնեցին մահացել է 1386 թուականին Տաթևից ոչ հեռու Ապրակունիսի վանքում, որտեղ և թաղուել է:

Ա. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

Վ. Խ Ե Զ Ո Ի Մ Ե Ա Ն

**Գ Ի Ի Գ Ո Ր Տ Ա Թ Ե Ի Ա Ց Ի**

Որքն է Տաթևի ձորը, բերնէբերան լցուած անլուելի շառաչով, թանձրացած կապոյտ ստուերներով, ժայռ ու մացառով: Թէ ծերպից քար է դլորուում, դահալիժում է մերթ քարերի խփուելով, մերթ՝ օդում դժեբով մի վայրենի ծիր: Ու երբ հասնում է ցած, շուրջը փռում է կայծակող, այրուող որձաքարի խանձահոտը:

Ձորատակում՝ դետափին, քարէ կամուրջի հետքեր կարելի է գտնել: Այդ նշանակում է՝ ինչ-որ ժամանակ այստեղ դետանցում է եղել: Իսկ հիմա, ահա, մնացել է կամուրջի մնացորդների միջից ծայր առնող հին մի արահետ, եղած-մոռացուած ճանապարհի հետքը, որ ոլորքներ է տալիս եւ դալարուելով ենում դառիժափն ի վեր, դէպի ձորի կախ պտուհկը: Միայն տեղտեղ մաշուում է այդ արահետի հնացած գօտին, թւում է՝ ուր որ է կը կտրուի ի սպառ: Ասկայն զնում, շարունակում է կրկին, նորից մազլցում վաղուց, երեւի մի հաղարամեակ ծանօթ դժուարին տեղանքով:

Վերելում վանքն է: Գարերի ծանրութեան տակ նա արդէն տաննեակ ճախ է տուել:

Վանքին մերձ թեք տափարակի վրայ հնազարեան շինութիւններ կան, բազալտաշար, քանդակապատ: Նրանց սրբատաշ երեսներին իր նրբահիւս թաղիքն է փռել լեռնաշխարհի զարմանալի բազմադոյն քարաքոսը:

Այստեղ է եղել Տաթևի նշանաւոր համալսարանը, որին վերջին անգամ շունչ ու կենդանութիւն տուեց զիտնական-ուսուցիչ Գրիգոր Տաթևացին:

Ես նստում եմ պատից ընկած մի քարաբեկորի: Քիչ հեռու, արեգակի տակ տաքանում է կանաչ զմրուխտ հազած մի համարձակ մողէզ: Այստեղից երևում են ձորի կամուրջի մնացորդները, դետի միւս ափին՝ ինձ այստեղ բերող արահետի կտրտուած մասունքը եւ փշոտ մարեմիններ:

Գետի ջրերի շառաչը խլացել է, կորցրել զօրութիւնը: Տարածութիւնից է, ձորի խորութիւնից:

Սակայն այլ մի ձայն է տիրապետում այս շինուածքների մէջ, պատմութեան հեռաւոր շուկը, որ թէպէտ կցկտուր, բայց հանդարտ համբերութեամբ պատմում է հայ նշանաւոր ուսուցչի մասին իր իմացածը...

Պատմութիւնն ասում է, թէ Գրիգոր Տաթևացին ծնուել է 1344 թուականին: Բւ թէ պատանի հասակից դալով Տաթևի համալսարանը, նա մօտ քսանութ տարի աշակերտել է նոյնպէս մեծ զիտնական եւ ուսուցիչ Յովհան



Որոտնեցուն, նրա համալսարանի հետ, ստիպուած, անվերջ Թախտակ տեղից տեղ, դաւառից դաւառ:

Պատմութիւնը տեղեկացնում է, թէ նրանք խուսափում էին մերթ շաւտանը տակնուվրայ անող Լենկ-թեմուրի բարբարոս զօրքերից: Մերթ փոխում սովից ու զրկանքներից, որ հետամուտ էին նրանց ամէն քայլափոխի: Սովորում էին որտեղ խաղաղ ու ապահով մի անկիւն դանէին. անառիկ վանքերի պատերի տակ, սար ու ձորում, քարանձաններում: Եւ տանում էին իրենց հետ ինչ ունէին՝ ձեռագիր աւարտուած ու կիսատ մատեաններ, ուսից կախ մախաղների մէջ՝ ներկ ու թանաք, դրի գործիք, դրիչ...

Յայտնում է պատմութիւնը, թէ այս եռամեծ ուսուցիչ Որոտնեցի Յովհաննը իր աշակերտներին սովորեցնում էր ժամանակի բոլոր դիտութիւնները, պահանջում լինել ջերմ հայրենասէր, մաքուր պահպանել հայոց լեզուն, կռուել Եւրոպայից եկած կրօնաւորների դէմ դրով ու խօսքով: Քանի որ այս կրօնաւորները ուզում էին հայերէն լեզուի եւ հայկական սովորոթիւների մէջ խցկել իրենցը՝ լատինական մեռած լեզուն եւ լատինացու օտար բառեր:

Եւ շարունակում է պատմութիւնը, թէ Յովհան Որոտնեցու մահից յետոյ, աշակերտների թախանձանքով, Գրիգոր Տաթևացին նրանց հետ միասին վերադառնում է Տաթև՝ շարունակելու իր ուսուցչի շնորհակալ գործը: Նորից քսան տարի ծաղկում է Տաթևի համալսարանը, շուրջը խմբում Հայաստանի տարբեր ծայրերից եկած բազմաթիւ պատանիների ու երիտասարդների:

Գրիգոր Տաթևացին եւս սովորեցնում է ժամանակի դիտութիւնները(\*)՝ ձեռագիր գիրք գրելու եւ մանրանկարելու արուեստ, հայ երգ ու երաժշտութիւն, փիլիսոփայութիւն, պատմութիւն, քերականութիւն, մարդակազմութիւն...


Պատմում են աշակերտները, թէ ամէն արուեստի դիտակ ուսուցիչը գիշերն ամբողջ անքուն էր մնում, կարգում հայ եւ օտար դիտանականների, բարեկամների ու հակառակորդների մատեանները, հաւաքում ինչ պէտք էր: Իսկ ցերեկը պատմում, ե՛ւ դասաւանդում, ե՛ւ սովորեցնում համբարտար:

Եւ քանի որ դժուարին էր ժամանակը, տարիները պատերազմական, թշնամին հանդիստ չէր տալիս նրանց: Խուսափելով սրից, տիրողների բռնութիւններից, սա էլ Որոտնեցու հոգան, աշակերտների հետ շարժւում էր Հայոց աշխարհի մի ծայրից միւսը: Սովոր էին զրկանքների: Կարելորդ դիտութեան լոյսն էր, որրն ապաւինել էին մեծ ու փոքրով:

Պատմութիւնը տեղեկացնում է այնուհետեւ, թէ կեանքի վերջին տարում Գրիգոր Տաթևացին նորից վերադարձաւ Տաթև եւ այստեղ էլ, 1409 թուականի Դեկտեմբերի 27ին վրայ հասաւ մահը:

. . . . .

(\*) Մշտոցեան Մատենադարանի մի գրչագրում Գրիգոր Տաթևացու գլխաւորած համալսարանի մասին կայ այսպիսի հետաքրքրական վկայութիւն, թէ նա համալսարանը բաժանել է երեք ուսումնասրահի: մէկում «Սովորեցնում էր նախկին երգիչ վարդապետները՝ քրաժշտութիւնը քաղցրամայն եղանակով, նոյնիսկ ամբողջ երկրից եւ քաղաքներից դաւելէ՝ էին նրա օտո պարսպելու, եւ միւսում՝ պատկերահանութեան նկարադրութիւն եւ զանազան նկարչութիւն, եւ միւսում՝ ներքին եւ արտաքին գրքերը»:



ԳՐԻԳՐ ՏԱՐՆԱՅԻՆ ԳԻՐԱՆՈՒՐ, ՆՈՒՐԱՋԱՐԳՈՒՄ ՏԱՐՆՈՒ ՎԱՆՔԻՆ ԱԷ.Ց. 1449ԻՆ

Գրիգոր Տաթևացու գրքերի բազմաթիւ օրինակներից մէկում պահպանուել եւ մեզ է հասել նրա գիմանկարը: Պատկառելի արտաքինոյ, ճերմակահներ, խեղաղի եւ զկեցիկ զիմացներոյ մի ձեռունի երկու ձեռքոյ յենւել է ծանր գաւազանին: Ետըջն աշակերտներն եւ բարբրել, ամէն մէկը մի գիրքոյ, իւրաքանչիւրն ուշադիր՝ ուսուցչի ձայն ու խօսքին:

Յաճախ էին այսպէս շըջապտտում իրենց ուսուցչին, երբ, մանուկները՝ աւագ աշակերտները կարգում էին իրենց համալսարանական աւարտական ճառերը՝ ատենախօսութիւնները, բոլորի եւ հիւրերի ներկայութեամբ:

Մի համաբաւարար աշակերտ ասում է, թէ Գրիգոր Տաթեւացին բարձրահասակ, թիկնեղ ու զեղեցիկ աղամարդ էր, աշակերտները լսում էին նրան՝ իմաստուն խօսքով տարուած եւ հիացած պատկառելի տեսքով:

«Սխանչելի այս այրը (Գրիգոր Տաթեւացին, մինչեւ կրօնական դառնալը՝ հուլիսուհի) ... ազգով հայ էր... հայրական տոհմը՝ Բագրեւանդեանքից, եւ մայրական ցեղը՝ Այրարատ գաւառից, Փարսի գիւղաւանից: Ծնունել է վրաց աշխարհում, ամուրն Թմոքում (Թմկաքերդ) եւ (մանուկ հասակում) կրթուել է երթօր ձեռնով՝ (վրաց) Դաւիթ Բագրատի երկրում: Եւ գեղեցկատիպ մանուկ էր, եւ ուշիմ...»:

Ապա պատմում է գրուածքը, թէ ինչպէս Յովհան Որոտնեցին տեսաւ ուշիմ Գրիգորին, երբ սա երիտասարդ էր երեւի, «ամէն բանի ուսման մէջ առաջադէմ», եւ տարաւ իր հետ՝ դարձնելով հոգորդի: «Կրթեց բարուքեամբ եւ սովորեցրեց աստուածային գրեքում գրուածք եւ փիլիսոփայութիւն... Սեպուռ լիբան (վանքում, որտեղ գերեզմանն է Գրիգոր Լուսաւորչի), դարձրեց սարկաւազ եւ Լուսաւորչի անուանով կոչեց Գրիգոր...»:

Ապա Որոտնեցին տարաւ նրան Երուսաղէմ, դարձրեց կրկին Սեպուռ լեռ եւ այտեղից՝ Միւնիք, որտեղ հրաման տուեց, որ ձեր (Որոտնեցու) մահից յետոյ նստի Եսայի (Նչեցու) մեծ համալսարանի արձրիկ որպէս ուսումնասպետ հայոց մեծաց... Եւ (նա) մեծարուեց ու պատիւ ստացաւ մեծ աշխարհակալ Թիմուրից (Լեւիկ Թեմուր) ու նրա որդի Միրանշահից, եւ հայոց ազգը պատիւ ստացաւ այլադաւաններից՝ շնորհիւ վեհ Գրիգորի ախարժ եւ իմաստուն գործերի... Եւ (նա) անդադար ընթեքում էր եւ գրում... աշխատաւէր էր եւ օտարաւէր, առատաձեռն էր ազգատներին ողորմելիս. մարմնով խարազանագգեստ, եւ հոգով խոնարհ, եւ մտքով թեղմնաւոր. հասակով երկար, դէմքով պայծառ, տեսքով՝ հպարտանալու արժանի, խարտեաշ մագերով, մօրուքն առատ... Հանգաւ երանելի մահուամբ Տաթեւի վանքում (1409 թուականի) Դեկտեմբերի 27ին»:

Գրիգոր Տաթեւացու մի այլ աշակերտ, յետոյ նշանաւոր պատմիչ Թովմա Մեծոփեցին, միւս բոլոր իմացողների նման գովելով ուսուցչի իմացութիւններն ու իմաստութիւնը, յիշում է, թէ ինչպէս էին Տաթեւացուն ձեռքից ձեռք խլում մէկ Մեծոփայ վանքի դպրոցի, մէկ Տաթեւի համալսարանի աշակերտները: Եւ պատմում է այսպիսի մի դէպք, յայտնելով, թէ ինքը եւ տասնրձեկ աշակերտ ղնացին Տաթեւ, երկու տարի սովորեցին այտեղ Տաթեւացու ուսուցչութեամբ, յետոյ ուսուցիչը եկաւ Մեծոփայ վանքի դպրոցը, խմբեց ութսուն աշակերտ եւ սովորեցնում էր զանազան գիտութիւններ, բայց դորձը կիսատ մնաց: Մի օր «Եկան (Տաթեւից) նրա աշակերտները եւ գիշերը գողացան նրան: Եւ մեք էլ ելանք-գնացինք նրա հետքով՝ հանդերձ վարդապետներով եւ եպիսկոպոսներով, եւ հասանք նրան Արարատեան երկրում լալով, ողորով, արտասուելով, աղիողորմ կսկծամքով, եւ չկարողացանք ետ վերադարձնել նրան»:

Գրիգոր Տաթեւացին այտեղից նոր էր հասել Տաթեւ, որ վրայ եկաւ մահը:

Չարմանալի էր այդ մահը: Աշակերտները գրում են, թէ այլեւս չմնաց ոեւէ մէկը, որ լինէր նրա նման իմաստուն եւ հեղինակաւոր, եւ իբր նրա

մահուամբ, քանի որ չկար այդ ազդեցիկ եւ ուժեղ մարդը, մեծ աղէտներ բերեցին այլադաւանները Հայաստանի, նոյնիսկ Վրաստանի գլխին: Այլադաւանները կոտորած սարքեցին «ի Վրաստուն» ի Փայտակարան քաղաք»:

Ամէն ինչից յետոյ Գրիգոր Տաթեւացու մասին իրենց գունաւոր խօսքով պատմում են նրա ձեռքով կատարուած մատենաների լուսանցքներում պահուող մանրանկար-զարդանկարները:

Պատմում են այդ նկարները, թէ ժողովրդական ուսուցիչն իր աշակերտներին նկարչութեամբ էլ սովորեցնում էր ամէնից առաջ տեսնել կեանքի իրական պատկերը:

Երեւանի Մատենադարանում խնամքով պահպանում է նրա աշակերտների եւ յատկապէս իր ձեռքով նկարազարդուած մի մատենան: Տաթեւացու նկարած մարդկանց, իրենց տեք ու տարազով, հիմա էլ կարելի է հանդիպել Սիւնիքի լեռնավերելում: Դրանք բարձրահասակ, սեւաչք եւ սեւայօն, աշխատաւոր, կենդանի կանայք ու տղամարդիկ են: Մարդուն, ծառն ու ծաղիկը, իւրաքանչիւր մանրիկ զարդը նկարելը փոխ է առել իրեն շրջապատող աշխարհից: Ծնչում, ապրում է Հայոց աշխարհը նրա նկարներում, որոնք իրենց դոյնն ու երանգով այնքան հարազատ եւ հասկանալի են ժողովրդին:

Գազարում է պատմութեան խօսքը նշանաւոր հայ ուսուցիչ-դիւանականի մասին: Լռում են նրա աշակերտները: Մեղնից ժամանակով այդքան հեռու Տաթեւացու կեանքի մանրամասնը կարծես կորում է, մնում է, ինչպէս Տաթեւի ձորի մեծ ճանապարհից մնացած մի արահետ, քարէ կամուրջի մնացորդ: Սակայն այդ իսկապէս ճանապարհ է, նրա կեանքն իսկապէս մի կամուրջ է, եւ բարձրադեղ կամուրջ, մարդկային իմացութիւնները մի սերնդից միւսին հասցնող:

ՎԻԳԻՆ ԽԵՉՈՒՄԵԱՆ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼԱՄԳԱՐԵԱՆ

## Լ ա զ ա ր ե ա ն Ճ ե մ ա ր ա ն

1814 Մայիս 10ին է, որ տեղի ունեցած է Լազարեան ճեմարանի Հիմնադրութեան հանդէսը: Ճեմարանի առաջին ուսուցիչը՝ Յարութիւն Ալամգարեան իր աստը աշակերտներով հայոց եկեղեցիէն փոխադրուած է դպրոցի նորակառոյց շէնքը եւ մասնակցած հանդէսին:


Լազարեան ճեմարանին վիճակուած էր փառաւոր դեր կատարել հայ կրթական եւ մշակութային կեանքին մէջ: Կարճ ժամանակէն անիկա կը բարձրանայ առաջնակարգ կրթական հաստատութեան մը վիճակին: Իր ուսուցչակտն կազմով, ուսումնական ծրագրով եւ նիւթական ապահովութեամբ աւելի բարձր էր կանգնած, քան ժամանակի շատ մը վարժարաններ:

Թէեւ պայմաններու բերմամբ Լազարեան ճեմարանի մէջ ուսումնական նիւթերու մեծ մասը կ'աւանդուէր ուսերէն, այսուհանդերձ ճեմարանը իր ղոյութեան ընթացքին կրցաւ պահպանել իր հայկական դիմադիժը: Հայալիտական առարկաներու դասաւանդումը միշտ ալ ստացաւ մեծ կարեւորութիւն: Այդ բանին նախանձախնդիր եղած է ճեմարանի Հիմնադիր եւ առաջին խնամակալ Յովակիմ Լազարեան:

Մեծ տեղ յատկացուած էր զբարարի ուսուցման: Ուսուցիչներու եւ սաներու մեծ մասը հայեր էին. հաստատութեան ղեկավարութիւնը հայերու ձեռքն էր:

Լազարեան ճեմարանը ուսուցիչներ կը պատրաստէր հայ դպրոցներու, եւ հոգեւորականներ՝ հայ եկեղեցիներու համար: Մինչեւ 1870ական թուականները ճեմարանը միակ ազգային հաստատութիւնն էր, որուն շրջանաւորները իրաւունք ունէին ընդունուելու ուսական համալսարաններ: Շրջանաւարտները կը տիրապետէին հայերէնէ դատ ուսերէնի եւ օտար այլ լեզուի մը:

Լազարեան ճեմարանի մէջ դորժած են անոր առաջին տեսուչ Սերովբէ



ԼԱՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՇէՆՊԸ

Կարնեցին, Մխիթարեաններու սան Միքայէլ Աալլանթեան, Ստեփանոս Նազարեան, Միքայէլ Նալբանդեան, Ամբատ Շահազիզ եւ ուրիշներ :

Ճեմարան ուսանած են հայազէաներ Մկրտիչ Էմին, Գր. Խալաթեան, Կարապետ Մելիք-Օհանջանեան, բանաստեղծներ՝ Գէորգ Դողոխեան, Ռ. Պաականեան, Յովհաննէս Յովհաննիսեան, Վահան Տէրեան, նկարիչ Վարդղէս Աւորէնեանց, դրական քննադատ Յովակ Խանգաղեան, Պօղոս Սակինցեան, պետական դործիչ Ալեքսանդր Միասնիկեան, եւ այլն :

Լազարեան ճեմարանի շնորհիւ կը բարձրանան Մոսկուայի հայ դպրութի կշիռն ու հեղինակութիւնը : Մկրտիչ Էմինի ջանքերով ճեմարանի մէջ կը ստեղծուի հայադիտական կեդրոն : Էմինի դործը կը շարունակեն Գ. Խալաթեան, Քերովրէ Պաականեան, եւ այլն :

Լազարեան ճեմարանի շուրջ համախմբուած հայ մտաւորականներու շնորհիւ եւ Ատ. Նազարեանի եւ Միքայէլ Նալբանդեանի նախաձեռնութեամբ ու ջանքերով Մոսկուայի մէջ 1858ին հիմը կը դրուի հայ մամուլին, երբ կը սկսի լոյս տեսնել «Հիւսիսափայլ» ամսադիրը :

Ճեմարանը ունէր սեփական մատենադարան, որ խնամքով կը պահէր հայ եւ օտար լեզուներով դրքերու հարուստ հաւաքածոյ : Տպարանը լոյս կ'ընծայէր հայադիտական հրատարակութիւններ, ուսումնասիրութիւններ, դասադիրքեր : Այս տպարանի մէջ է, որ կը շարուէր ու կը տպադրուէր նաեւ «Հիւսիսափայլ»ը :

Այսօր ալ դրութիւն ունի Լազարեան ճեմարանի շէնքը Մոսկուայի «Հայկական նրբանցք» կոչուող փողոցին մէջ, բայց այլեւս դպրոց չէ : Անոր ձախ թեւը յատկացուած է հայկական ներկայացուցչութեան, իսկ շէնքին մնացեալ մասերը կը ծառայեն իբրեւ «Արևելեան դպրութեանց ինստիտուտ» :

ԱԻ. ԶԱՆԶՈՒՂԱԶԵԱՆ



ՆԵՐՍԻՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

ԴՊՐՈՑ ԱԶՆԻԻ

ՈՒ

ԲԱՐԻ ԱՆՈՒՆՈՎ

Ներսիսեան դպրոցն աւարտած ամէն ոք պարտք էր համարում առաջին 5-10 տարին, եթէ ոչ աւելի, լինել ուսուցիչ, որից յետոյ միայն ամէն մէկը ընտրում էր իր ցանկացած մասնագիտութիւնը:

Ա. Զ.

Այս տարի լրանում է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի 150ամեակը: Հայրենասէր կաթողիկոս Ներսէս Աշտարակեցու բազմաթիւ դործերի մէջ նշանաւոր է այս դպրոցը:

Այն ժամանակաշրջանում, երբ սկզբնաւորում էր Ներսիսեան դպրոցը, Ղազարոս Աղայեանի ընտրուումով «լուսաւոր մարդուն պէտք էր լապտերով փրկուանք»:

Լէոյի վկայութեամբ՝ «Աշտարակեցու տենչանքն էր Թիֆլիսում բացել մեծ ու բարեկարգ դպրոց՝ հայ երեխաների համար: Այդ դպրոցի հետ նա կապում էր զեղեցիկ ծրարներ, ուղում էր դպրոցի շուրջը կենտրոնացնել դրական գործունէութիւն, ուղում էր ազգը լուսաւորել զրքեր հրատարակելով... Ներսէսը կարօտ էր նիւթական միջոցների, իսկ Թիֆլիսի հայերը սկզբում վերաբերում էին սառն անտարբերութեամբ, նոյնիսկ թըշնամութեամբ»:

Ներսէս Աշտարակեցին յուսահատուել չդիտէր եւ, ի վերջոյ, 1824 թուականին հասաւ իր ծրարի իրականացմանը՝ դպրոցը բացուեց:

Հիմնադրման սկզբի վեց տարիներին (1824-1830) դպրոցի դռները բաց էին բոլոր ազգերի համար, այնտեղ սովորում էին ո՛չ միայն հայ, այլեւ՝ վրացի, թուրք, յոյն, հրեայ երեխաներ: Այդ շրջանում դպրոցի տեսուչն էր Յարութիւն Ալամդտրեանը եւ այդ տարիներն էլ յայտնի են իբրեւ «դար Ալամդարեան»:

Արժանի դնահատական տալով հայկական ուսումնական հաստատութիւններին, պէտք է ասել, որ ո՛չ Մոսկուայի Լազարեան, ո՛չ Խլմիսի Պէտրքեան ճեմարանները եւ ոչ էլ Միլեանի, Շուշու, Նոր Նախիջևանի եւ այլ հայկական դպրոցներ այնքան շատ ու նշանաւոր մտաւորականներ, հասարակական գործընկերներ, հասարակական գործընկերներ, չեն տուել, որքան Ներսիսեան դպրոցը:

1826 թուականի Դեկտեմբեր ամսին դըպրոցը տուեց իր առաջին շրջանաւարտները՝ 18 հոգի, որոնց թուում՝ Պաշատուր Աբովեան, Ստեփանոս Կարաբեկ, Հայրապետ Կոստանի կողմակերպիչ Դաւթուս Երեմյանեան, Թիֆլիսի օրիորդաց Յովնանեան դպրոցի Հիմնադիր Յովհաննէս Յովնանեան, դրակտնադէտ Պետրոս Մաղաթեան եւ ուրիշներ:

Իր հարիւրամեայ գոյութեան ընթացքում Երեսնեան դպրոցն աւարտել է մօտ 2000 շրջանաւարտ՝ մանկավարժներ, դիտնականներ, դրակտնութեան եւ դիտութեան, ինչպէս նաեւ հասարակական կեանքի այլեւայլ բնագաւառների դործիչներ:

Ես նոյնպէս բախտ եմ ունեցել սովորելու ուսումնական այդ նշանաւոր հաստատութիւնում: Դպրոցն աւարտել եմ 1914 թուականին, 20 տարեկան հասակում: Իմ աշխատանքային 45 տարիներից 30ը, հաւատարմիմ մնալով Երեսնէս Աշտարակեցու պատգամներին, նուիրել եմ տարրական, միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներում մանուկների եւ երիտասարդների կրթութեանն ու դաստիարակմանը:

Աշտարակեցու Հիմնադրած Երեսնեան դպրոցին իրօք շատ եմ պարտական, որովհետեւ նա ինձ ո՛չ միայն կրթութիւն եւ դաստիարակութիւն է տուել, այլեւ՝ ներթափան հնարաւորութիւն իմ ամբողջ ուսման ընթացքում, 8 տարի՝ 1906ից մինչեւ 1914 թուականը: Սկզբնական տարիներին ես ստանում էի հազուստ, կօշիկ, դրճեր եւ ձաշ, իսկ վերջին տարիներին նաեւ ապրում էի դպրոցի հանրակացարան-պանսիոնում՝ ստանալով բացի միշտաներից նաեւ բնակարան: Պանսիոնում կային շատ ջիշ աշակերտներ, ամբողջ դպրոցից մօտ 20 հոգի, որոնց թրում երեքը՝ Լոտուց:

Իմ սովորելու տարիներին Երեսնեան դպրոցի վերատեսուչը Յովսէփ Խունուցն էր՝ նա հարուստ էր եւ կամովին հրաժարուեց աշխատավարձից, դպրոցին նուիրեց Դարբաղում դստնուղ իր սե-

փական անտառը եւ կալժուածքները: Չափազանց խիստ էր ու շիտակ, նրանից պատկառում եւ վախենում էին ո՛չ միայն աշակերտները, այլեւ՝ ուսուցիչները:

Վերջին երեք տարին բախտ ունեցայ սովորելու Երեսնեան դպրոցի նոր շէնքում: Այս եռայարկ, դեղեցիկ շէնքում պահպանուում էր բացառիկ կարգ ու կանոն եւ մաքրութիւն: Դիւաւոր մուտքի մօտ, ստորին յարկում հանդերձարանն էր, որտեղ պարտադիր կարգով պէտք է փոխէինք կոշիկները, հազնէինք մեզ յատկացրած համարակալած փափուկ բրդեայ սոլեր՝ յատակը մաքուր պահելու համար, ինչպէս ընդունուած է նշանաւոր թանգարաններում:

Երեսնեան դպրոցն աւարտած ամէն ոք պարտք էր համարում առաջին 5-10 տարին, եթէ ոչ աւելի, լինել ուսուցիչ, որից յետոյ միայն ամէն մէկը ընտրում էր իր ցանկացած մասնագիտութիւնը:

Պէտք է սասել, որ մի ժամանակ Երեսնեան դպրոցի դասատուները շատ ժըլատ էին դնահատում աշակերտների պատասխանները՝ գովելի (լաւ) եւ, մանաւանդ՝ յոյժ գովելի (դերագանց) դնահատականներ նշանակելիս: Ուսուցիչներից ոմանք պատճառաբանում եւ հիմնաւորում էին, թէ Ծր իրենց է պատկանում, իսկ մնացածը՝ 4ը, 3ը եւ 2ը՝ աշակերտներին: Սակայն վերջին տարիներին, հաշուի առնելով բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ ընդունելու հնարքը, մանկավարժական ժողովում որոշուեց լինել որոշ չափով «զիջող», այսինքն՝ աշակերտների պատասխանների դնահատականները նշանակել ըստ արժանւոյն:

Դասերին զուգընթաց աշակերտները պէտք է կարդային պարտադիր ձեւով սահմանուած դրճեր: Գրքերի ընտրութիւնը կատարում էր դրադարանավար Սիմակ Մահակեանը, որը ճանաչում էր բոլոր աշակերտներին:

Ինչպէս արդէն ասուեց, իր հարիւրամեայ գոյութեան ընթացքում Երեսնեան դպրոցը տուել է դիտութեան ու դրա-



կանութեան նշանաւոր դործիչներ, որոնք մեր հողեւոր կեանքի զարկերակն են եղել. Յովհաննէս Թումանեան, Պերճ Պոռչեան, Ղազարոս Աղայեան, Երուանդ Լալայեան, Դերենիկ Դեմիրճեան...

20րդ դարի առաջին տասնամեակներում Ներսիսեան դպրոցն են աւարտել աւանաւոր դործիչներ Աշոտ Խումարեանը, Սերգօ Խանոյեանը, լեդէնզար Հերոս Գայը, Անաստաս Աիկոյեանը, Յովսէփ Պօղոսեանը, Շաւարշ Ամիրխանեանը, Ջայլաղ Կոստանեանը, Արամայիս Երզընկեանը, Բաղդար Յարութիւնեանը, Գէորդ Ալիխանեանը, Թադեւոս Անդալեանը, Աւադ Կոծինեանը...

1924 թուականին Ներսիսեան դպրոցի 100ամեայ յորելեանին մասնակցել է նաեւ ՌՍՖՍՀ լուստողկոմ Ա. Վ. Լունաչարսկին: Եւ նշել է. «Ներսիսեան դպրոցը կուտուրայի մեծ օճախ է եղել հայ ժողովրդի համար եւ իր առաջաւոր տեղն


ունի հողեւոր մշակոյթի պատմութեան մէջ»:

Այս բոլորին հետ պէտք է նշել, որ Ներսիսեան դպրոցում դասաւանդում էին շատ նշանաւոր դիւանական-մանկավարժ դասախօսներ: Իմ աշակերտութեան տարիներին Ներսիսեան դպրոցում դասախօսում էին Մանուկ Աբեղեանը, Ստեփան Մալխասեանը, Ասեփան Լիւիշէանը, Ստեփան Քափտնակեանը, Նիկոլ Աղբալեանը, Մամբէ Մասենճեանը, Պարոտ Հովբեանը, Միսաք Ասիլեանը, Պետրոս Տիգրանեանը, Իսահակ Յարութիւնեանը, Գրիգոր Սիւնին, Սպիրիդոն Մելիքեանը, Յարութիւն Շամշինեանը եւ ուրիշներ:

Ներսիսեան դպրոցը մեր ժողովրդի մշակոյթի պատմութեան մէջ ունի իր արժանի տեղը եւ ես, իբրև նրա սաներից մէկը, այսօր՝ նրա հիմնադրումից 150 տարի անց, իմ երախտագրտութեան աուրքն եմ մատուցում նրա անուանր ու հայրենաւոր դործին:

Ա Ր Տ . Ա Բ Ե Ղ Ե Ա Ն

Դ Ո Ր Պ Ա Տ Ի  
Դ Ե Ր Ը ...



Դորպատը, որ այժմ Բաղլեան անկախ Էստոնիա Հանրապետության սահմաններում է գտնուում, մեզինք մէկ դար առաջ, զեռ աւելի մաղ, մշակութային ծանօթ կեդրոն էր: Բնակիչները թէեւ մէկ մասով միայն զերման էին, իսկ միւս մասով ընկի՛ Հատոնացի, սակայն քաղաքը զերազանցօրէն զերմանական դրոշմ էր կրում իր վրայ, զերման լեզուն, զխոսութիւնը եւ քաղաքակրթութիւններն էին այնտեղ զերիշխողը: Թէեւ ուսւ պետականութեան սահմաններէ մէջ, Դորպատի պետական հասնայարանը եւս զերմանական էր, եւ ո՛չ թէ ուսուսկան: Համալսարանի բոլոր ճիւղերում գաստախօսութիւնները կարգացում էին զերմաներէն լեզուով: Դասախօսները բնականաբար զերմանացիք էին, զերմաներէն լեզուով էլ լոյս էին ընծայում իրենց զլետական աշխատութիւնները — յաճախ մինչեւ իսկ ուսուցեալական զբաժանիչով:

Ուսւ ազգայնականութեան զարթնումի Հետեանքով՝ Հետադային վերացւեց ալլ զբութիւնը, Համալսարանում զերմաներէնին, փոխարինեց ռուսերէնը (բացի ստատաճարանական ճիւղից, որ

կոչում ունէր Հոկեարականներ պատրաստելու Ռուսիայ բողոքական եկեղեցիների Համար), անգամ քաղաքի Դորպատ անունը փոխարինուեց մի նոր՝ ուսուսկան Խլլիեւ անունով:

Ռուսաստանի Հիւսիսի այն Հեռուոր կեդրոնից էր աճա, որ 1829ին նորանըւում Հայկական նահանգն էր եկել Ֆ. Պարբտար, Մասիս սարը բարձրանալու նպատակով:

Նախ քան Մասիս բարձրանալը՝ պրոֆեսոր Պարբտար էջմիածին այցելեց: Եւ ոչով Հեան նա ո՛չ Հայերէն զիտէր, ոչ էլ սեղական մի ուրիշ լեզու, խնդրեց իրեն տալ զոնէ ռուսերէնին քիշչատ ծանօթ մի ստաջորդ եւ ուղեցոյց, որ շփեցնէր նրան Հայաստանի պատմական վայելքը եւ տալ անհրաժեշտ ծանօթութիւնները:

Վանքում միայն երիտասարդ զպիլիսաչատուր Արովիանն էր, որ կարող էր քաւարարութիւն տալ այլ պահանջներին. նրանից զուր ո՛չ սք չլիտէր ռուսերէն, ոչ էլ բուսականաչափ Հմտութիւն ունէր մեր երկրի անցեալի եւ ներկայի մասին:

Արովեան ամենալաւ տպաւորու-

թիւնն է թողնում դերման դիտնականի վրայ : Վերջինս խորհուրդ է տալիս երիտասարդ, ուսումնասիր վանականին՝ իր ուսման եւ կրթութեան թերին լրացնել Դորպատի դերման համալսարանում :

Ինչ խօսք, որ պրոֆեսորը խօսում էր հայրենասէր երիտասարդի սրտից : Եւ որովհետեւ ուսման համար պահասում էին նրան նիւթական անհրաժեշտ միջոցները, ուստի եւ Պարրոտ վերադարձին Պետերբուրգում միջնորդում է Ռուսիոյ լուսաւորութեան նախարարի առաջ եւ ուսման թողակ նշանակել տալիս Արովեանի համար :

1830 թուականին Արովեան արդէն Դորպատում էր : Ամբողջ վեց տարի նա մնաց այնտեղ եւ Պարրոտի հայրական խնամքի ու դեկավարութեան տակ նուիրւեց համալսարանական ուսման եւ կրթութեան : Նա իր ջոնասիրութեամբ, ընդունակութեամբ եւ օրինակելի վարք ու բարքով սիրելի դարձաւ իր նոր շրջապատի համար :

Բացի Պարրոտից եւ նրա ընտանիքի անդամներից՝ Դորպատի ուրիշ ուսուցչապետներ եւ ուսուցիչներ եւս իրենց անհաշխարհիւր ու սիրալիւր աջակցութիւնը բերին հեռուոր Հայասանի ընտրեալ զաւակի ուսման եւ կրթութեան դործին, որին այնչափ մեծ դեր էր վերապահուած որպէս մեր դրականութեան եւ ընդհանրապէս ազգային վերածնութեան ստպարէզում, այնպէս եւ դերման մշակոյթի ռահվիրան լինելու հեռուոր Արեւելքում :

Հմտացած եւրոպական գիտութեան մէջ, ձեռք բերած բազմակողմանի կրթութիւն, տողորուած լաւագոյն զաղափարներով անհունապէս սիրած իր երկրի եւ ժողովրդի ապագայի համար, Արովեան 1836ին վերադառնում է հայրենիք : Մեռած էր արդէն իր հողեւոր հայրը եւ հովանաւորը՝ Եփրեմ կաթողիկոսը : Էջմիածնի կաթողիկոսական դահն էր բարձրացել Յովհաննէս Կարբեցին, որ իր զլխաւոր կոչումն էր համարում՝ նախ եւ առաջ լինել ռուս պետականութեան մի հաւատարիմ չինովնիկ (պաշտօնեայ) :

Ռուս կառավարական շրջանակներն էլ, հայրական հողերը հայերի սպնութեամբ զով նայել հայութեան եւ նրա ազգային ճշգրտաների վրայ : Ներսէս Աշտարակցին, որին այնչափ բան էր պարտական ռուս ղէնքի յաջողութիւնը Անդրկովկասում, դրեթէ քաղաքակառն օրհր էր ապրում Քիւնեւում :

Ահա այդ շրջապատի մէջ է, որ ռոք է դնում, հազար ու մի ծրագրիներով ծանրաբեռնուած եւ լաւագոյն յոյսերով տողորուած՝ Դորպատից նոր վերադարձած երիտասարդ Արովեանը : Նրա մտադրութիւնն էր՝ առաջին հերթին էջմիածնում հիմնել մի նոր տիպի դպրոց, ուր եւ պատրաստել հայ եկեղեցու եւ հայ դպրոցի ու մշակոյթի նուիրուած սպասաւորներ : Ինքն էլ, բնականաբար, իբրեւ էջմիածնի վանքի միաբան, պիտի մնար կրօնաւորի սքեմում : Իր այս ծրագրիներով նա ահա ներկայանում է Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսին : Վերջինս թէ՛ «Հրաւանա գաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատայ : Դու լու խաղիկ կարես զմիտս անմեղաց, այլ կրթել գնաս չէ քո գործ» :

Հարկադրուած՝ Արովեան Թիֆլիս է դնում : Այդտեղ էլ մեր ազգային շրջանակներ եւ հիմնարկութիւնների կողմից լաւագոյն ընդունելութեան չէ արժանանում Արովեան : Նրան համարում էին «վտարանդեալ» հայրենի եկեղեցուց, հերձուածող, բողոքական : Եւ սակայն փաստն այն էր, որ բողոքական միջավայրում Արովեան սովորել էր ակել խոր եւ մեծ սիրով սիրել էր հայրենի կրօնը, իր հայրենիքը եւ իր լեզուն : Իսկ նրան հասկացող եւ գնահատող չկար հայոց խաւար երկնակամարի տակ :

Այդպէս է արդէն ճակատագրիբ բոլոր մեծ ռահվիրաների բոլոր երկիւնքներ տակ :

Ու Արովեան, ինչպէս ինքն է ասում, «ստիպեալ ի չբաւարութեմ մտի ի պաշտօն արբանակամ, գոր ոչմ երբեք կամէի» : Սկիզբը Թիֆլիսում, իսկ վերջին տարիները Երեւանում Արովեան վարում

է պետական գրաստական վարժարանում ուսուցչի և անուշի պաշտօն: Միևնույն ժամանակ նա է՛ր մէկ, է՛ր միւս քաղաքում պահում էր իր մասնաւոր գրպոցը, իր շարժն հասարակ լինելով 20-30 հազ մանուկներ: Այդպէս Արափեան միանգամայն պատ էր վարելու կրթական գործը իր հասկացողութիւնների և նոր բմբրանդութիւնների համաձայն: Եւ այդ սուղարկելով նա հիմնովին սարբերում էր իր ժամանակակիցներից:


Արափեան խիստպէս որ հանդիսացաւ ինչպէս մեր նոր գրականութեան, այնպէս և մեր նոր գրչոյցի սահմիլրաններից մէկը, ամէնից սաղանդաւոր նբանցում:

Յայտնի է արդէն Արափեանի վախճանը, թէ և նրա հիմնական պատճառները ամէն կողմից յատարանուած չեն: 1848 թ. Ապրիլ 2ին յատպէմին նա գտար է գալիս ասնից և այլևս չի վերադառնում: Դորպտաի ասոջին հայ ուսանողը և արևելահայ վերածնութեան գորպառան սահմիլրայի վախճանի պարագաներն իսկ անծանոթ են մնում ժամանակակիցներին և յաջող սերունդին:

\*\*

Արափեան — գրողէի ճակատադիրը ևս, յէբաւի, սղբերգական է կղել, անկախ նրա անհատական կեանքի սղբերգութիւնից:

Սի գրողի, այն ևս սահմիլրայ-գրողի և յուսուորութեան առաքելայի համար անելի մեծ սղբերգութիւն կարելի չէ երևակայել, քան այ՛ն՝ որ ծանրաղին երկունքից յետոյ, գծուարաղին ներքին պայտարների գնով իսկ սակեցմպործած իր երկերը կենդանութեան օրով մնում են փոշիների տակ ծածկուած, «մէկ թիղ թողու՛մք վէր բնիւած», արևել յոյս չեն տեսնում, հեղինակին դէժ բարոյական վարձաւորութիւն չեն պատճառում: Արափեան յախտան փակում է իր աչքերը՝ առանց իմանալու, թէ իր երկնած աշխատութիւններին որևէ արժէք տրուելու է, թէ նրանք կատարելո՞ւ են իրենց պատմական առաքելութիւնը:



ԱՐԱՓԵԱՆԻ ԱՐԱՓԵԱՆԻ

Յայտնի է արդէն, որ Արափեանի գլուխ-գործոցն անգամ, նրա «Վէրք Հալաստանի», որ գրում է 1840 թուականին, յոյս աշխարհ տեսաւ 17 տարի յետոյ միայն, 1858ին, ասել է՝ հեղինակի մահանից սմբողջ 10 տարիներ յետոյ:

\*\*

Թէ և Արափեան սուղարում չտեսաւ դէժ իր «Վէրք», յայց վերջինս ճեռագիր վիճակի մէջ անգամ կատարեց մի պատմական գեր: Արափեանի անհատական օրինակը ևս, իրբեւ Դորպտաի նախկին ուսանողի, անկցաւ իոչոր նշանակութիւն մեր գրականութեան և կեանքի վերածնութեան համար:

Արափեանի հարթում ճանապարհով գէպի Դորպտա, հետուոր հիտիսի գլուխ-առախ-մշակոյթային սուղ կեղանը գլեմել սկսան, իւմմր-իւմմր, ուսումնածաւրաւ հայ երիտասարդներ: Արափեանի օրինակը վարակիչ էր հանդիսացել շատ-

չտօների, ինչպէս նրա զարոյցական մի քանի ընկերները ու հասակակիցները, այնպէս նաեւ նրա մի շարք աշակերտները եւ ուրիշները համար:

Արդիեանից յետոյ Դորպատ զնաց նրա աշակերտական ընկերը ներսիսեան զարոյցից, Ստեփանոս Նազարեանց, յետոյ նաեւ՝ Ռափայէլ Պատկանեան, Դոդոխեան, Գ. Բարխուդարեանց եւ շատ ուրիշներ: Դէպի հիւսիսի գերմանական այդ փոքրիկ քաղաքն էին դիմում, իրենց հայրենիքին եւ Ժողովուրդին օգտակար լինելու բուն տենչով ըռնուած, հայ պատանիներ եւ երիտասարդներ՝ առաւելապէս Մոսկուայից եւ Քիֆլիսից:

1814 թուին հիմնուած Լազարեան ճեմարանը — որ այն ժամանակ հայ ազգային հիմնարկութիւն էր, զիմնադրական ծրագրով — եւ 1824ին հիմնուած ներսիսեան զարոյցն էին, որ ընթացաւարտներ էին տալիս Դորպատի համալսարանի համար: Վերածնութեան շրջանն էր նախապատրաստուում այդտեղ, հայ վերածնութեան առաջնախներն էին իրենց հոգին ու սիրտը դարբնում իրենց մեծ կոչման համար:

Այսպիսով Դորպատը դարձաւ արեւելահայ դարձօնի առաջին որդաններից մէկը, իսկ Ս. Արդիեան՝ նրա նախակարգաբար:

Ահա այդ շրջանում է, Դորպատի հայ ուսանողութեան շարքերում, որ «Վերք Հայաստանի» ձեռագիր վիճակի մէջ անդամ կատարում է ղեկավարի եւ ուսուցչի դեր, հանդիսանում անսպառ ողբերութեան աղբիւր:

Արդիեանի նախկին աշակերտներից մէկը, Գէորգ Աքիմեան, Քիֆլիսից իր հետ Դորպատ էր տարել «Վերք»ի ձեռագրի մի արտադրած պատճէնը, որ եւ դարձել էր տեղի հայ ուսանողութեան ներշնչման առարկան:

Աւելի լաւ է խօսքը տանք Դորպատի ժամանակակից ուսանողներից մէկին, բօխիկ Լեւոն Տիգրանեանին, որ դրի է առել իր յիշողութիւնները նոյն շրջանի մասին եւ ուր ցայտուն կերպով պատկերացուած է այն, ինչպէս եւ «Վերք»ի ա-

ռաջ բերած յեղաշրջումը նոյն տեղի հայ ուսանողութեան մէջ:

«Սեպտուոր Արդիեանը եւ Ստոլիանու Նազարեանը, — սուսւ է Տիգրանեան, — որպէս Դորպատի առաջին ուսանողներ այնպէս էին ներգործել հայ երիտասարդների վրայ, առաջինը Կովկասում, երկրորդը՝ Մոսկուայում, այնպէս ոգեւորելուց գերմանական ուսում եւ գիտութիւն մեռէ բերելու, որ դո՛ւք գիմնագիտներից եւ Լազարեան ճեմարանից դուրս գալով գնում էին Դորպատ... Այդտեղ գերմանացուց ազդեցութեամբ սկսեց զարգանալ հայ ուսանողութեան մէջ իմբնացանաւորեան գրգայումները եւ հենց այդ էր պատճառը, որ օտար լեզուների հետ գուցընթացաբար սկսեցին ուսանել հայերէնը եւ մշակել աշխարհաբար լեզուն: «Վէրք Հայաստանի» մի մեռագիր օրինակը գտնուելով Գ. Աքիմեանի մօտ, որ Արդիեանի աշակերտներից էր, ընթերցանութեան եւ ողբերութեան ճիւղ էր տալիս՝ ուսումնասիրելու լեզուն, վառւելու հայրենեաց սիրով: Ամէն մէկը ձգտում էր բանաստեղծական երկեր գրելու փորձեր անում եւ ուր ստացան ուներ, զարգացնում էր»:

«Կասկած չկայ, որ այդքան երիտասարդներ ժողովուած մի տեղ, միեւնոյն գաղափարներով վառուած, պէտք է օղբ թնդացնէին երգելով՝ «ով չդիտէ հայրենին, ոչ ճանաչէ նա զօրէն»... Սրանք հիմք էին դրել աշխարհիկ լեզուի Դորպատում եւ լայն ծաւալ տուին, ու մի օրինաւոր ոն կազմակերպեցին իրանց համար, որով կարողանում էին մինչեւ անգամ գիտական հարցերի մասին հայերէն խօսել... Իրանցից մի բանիսը լինելով եւ Արդիեանի աշակերտներից, վառ սրբունով ոգեւորուած էին նրա գաղափարներով: Հաստատել էին գրական երկերիցներ եւ շարքաբ մէկ անգամ ժողովուած էին Գէորգ Աքիմեանի մօտ, կարգում էին իրանց քարգումարքիւններն, իմբնարայն գրուածքներն եւ վիճում էին դրանց մասին»:

«Որովհետեւ՝ նորեկներից շատերը (քիֆլիսեցիք) դժուարանում էին հայն-

րէն խօսել, այս պատճառով էլ որոշեցին հայերէն խօսելը պարտադիր դարձնել, որ եւ սրբութեամբ կատարում էին»:

«Մի նիստում կարդացուեց «Վէճը Հաստատել»-ն, որ լեզուի եւ գրագմուճկ-ներէ վերաբերմամբ մի յեղաշրջում առաջ բերեց եւ մեծ զարկ տուեց ուսանող-ներէի եւս աշխարհիկ լեզուի կանոնաւորութեանը»:

Ժամանակակից մարդու այս մի քանի դիտողութիւններն անկամ բուսական են՝ պարզելու համար ա՛յն հսկայական դերը, որ խաղացել է Դորպատը մեր նոր կեանքի շեմքին: Ուրիշ ժամանակակից-ներէ յիշողութիւնները եւս հաստատում են այդ փաստը, մա՛նաւանդ 1851-1857 թուականներէ մասին, որ համարոււմ է Դորպատի հայ ուսանողութեան «ոսկե-դարը»:

Ինչ է տուել Դորպատը հայ կեանքին եւ դրականութեան:

Մենք տեսնք արդէն, որ Պաշտօտը Արուսեան, իր աշխարհահայեացքով եւ ուղղութեամբ, արդիւնքն է Դորպատի: Կարելի է փաստուեցնել, որ Արուսեան դժուար թէ աշխարհաբար ռուսիական հանդիսանար մեղմում, եթէ նա Դորպատում եղած չլինէր, եթէ յիշ պարսիկներէ ընթացքում նա սերտորէն չլուծած չլինէր եւրոպական միջավայրի հետ, եթէ նա այդպիսով իւրացրած չլինէր հիմնովին մի նոր աշխարհահայեացք կեանքի եւ դրականութեան մասին: Նա, եւրոպական կրթութեան տէր Արուսեանը տեսնում էր իր աչքերով, թէ յառաջագէժ աղբերը ի՛նչ նանդաբարձով են ընթանում, որով եւ անակամարար պիտի քայլէր հայ ժողովուրդը, եթէ նա ուզում էր հաղորդանք լինել լուսաւորութեան բարիքներին: Ինչ դրան հասնելու միակ միջոցն էր՝ եւրոպիկին հասկանալի, աշխարհաբար պարունակ գործնէլ դործիք այդ լուսաւորութեան: Բանի որ գրաբար վաղուց արդէն կարգուել էր նման դործիք լինելուց: Արուսեան Արուսեան ինքը եւս, որ Դորպատը գրաբար առաջ գրաբար լեզուով էր շարժուելու մի շարք գրուածքներ, անձամբ իր համոզուել էր այդ բանում:

«Մեր գրաբար լեզուն անգին է, նմանը՝ չունի, — ասում է նա, — ինչքան լեզու էլ որ գիտեմ, մէկն էլ ա՛ է՛ն համը, է՛ն՝ քաղցրութիւնը, է՛ն՝ ճշտութիւնը չունի. բայց մեր վատ բախտիցը՝ հազարիցը մէկը չի հասկանում, ի՞նչ պէտք է առաջ... Էս մտածելով՝ ուզում էի, որ գրած բանս ամէն մարդ հասկանայ, ու էնտար համար աշխարհաբար գրեցի: Թո՛ղ գիտուն մարդիկը ինձանից չնեղանան, նրանք շատ գիրք են կարդում, իրանց սիրտը մխիթարում, ամա հասարակ մարդը մէկն էլ ա չունի, որ նա էլ նրանով իր պարտապ վայտը՝ ժամանակն անց կացնի»:

Այսպէս է, որ «Վէճքը» եւ նրա հեղինակը, ինքը սան Դորպատի, դառնում են ուղեցոյց եւ միեւնոյն ժամտնակ ողբերութեան աղբիւր՝ Դորպատի հետագայ ուսանողութեան համար:

Դորպատում է, ուր հայ ուսանողութիւնը դիտութիւն եւ օտար լեզուներ ուսանելուն զուգընթաց, եւ նրանց իսկ աղբերութեան տակ՝ ձեռք է բերում, ինչպէս Տիգրանեանն է ասում, ազգային «ինքնաճանաչութեան զգացմունք» (դիտակցութիւն): Եւ դա հիմքն էր արդէն մի նոր կեանքով ապրելու եւ այդ կեանքի ուղղին հարթելու անհրաժեշտութեան գիտակցութեան: Դրա հետեւանում է լինում, որ Դորպատի հայ ուսանողները մի կողմից ուսանում են հայերէնը, միւս կողմից էլ՝ մշակել սկսում աշխարհաբար լեզուն:

«Վէճքը» արդէն «յեղաշրջում» էր առաջ բերել Դորպատի հայ ուսանողների մտայնութեան մէջ: Եւ նրանք Դորպատում արդէն «հիմք էին դրել աշխարհիկ լեզուին», «բայն ծաւալ տուել» նրան, կազմակերպել էին մի «օրինաւոր ոճ, որով կարողանում էին մինչեւ անգամ դիտական հարցերի մասին հայերէն խօսել»:

Բայց լեզուն եւ ոճը չեն կազմակերպուում միայն խօսելով եւ վիճարանութիւններով, այլ անուելապէս՝ դրական երկերով: Եւ բարեբախտութիւնն այն է, որ Դորպատի ուսանողութեան մէջ ազգային ինքնագիտակցութեան եւ ողբերութեան, մայրենի լեզուի սիրոյ հետ միասին չէր

պակասում, զոնէ մի քանխում, զբարէտի բնական ձիրքը: Ուստի եւ՝ «ամէն մէկը ձյտում էր բանաստեղծական երկեր գրել», «ոյ որ տաղանդ ունէր, զարդացնում էր»:

Շրջապատը, մթնոլորտը նպաստուոր էին դրան, ոգեւորութեան աղբիւրը անսպառ էր: Ամէն մէկն էլ հայրենի երկրից հետո էր բերել իր մտքին եւ զղացմունքին շատ բան ասող առատ նիւթ. փոքրիկ Հայաստան էր կազմուել Դորպատում, իր զանազան դաւաններով:

Ուրեմն Դորպատում էր, ուր արւում են առաջին հաստատուն քայլերը՝ արեւելահայ աշխարհաբարի եւ դրականութեան հիմքերը դնելու համար: Եւ այդ շրջանի դրական երախայրիքներից շատերը, որոնք մեծ մասով ոտանաւորներ էին, զուտ բանաստեղծական կտորներ, աւելի լաւ բախտի են արժանանում, քան իրենց ուսուցչի երկնած աշխատութիւնը. նրանք աւելի շուտ են լոյս տեսնում, քան իրենց դրական ճամբան լուսաւորող Արովեանի «Վէրք»ը:

Անէք տեսնեք արդէն, որ Դորպատեան շրջանին էին պատկանում այնպիսի՛ դէմքեր, որպիսիք էին՝ բանաստեղծներ Ռ. Պատկանեան եւ Գէորգ Դոդոխեան: Վերջինիս «Միծեռնակը», պտուղ՝ դորպատեան ուսանողական շրջանի, բաւական է եղել արդէն, որ նրա հեղինակը անմահանայ հայ դրականութեան պատմութեան մէջ: Օտար երկրում, պանդըխտութեան մէջ, հայրենիքի կարօտով բռնուած, խորը սրտից զգածուած հայ ուսանողը ծիծեռնակին, զարման աւետարերին է դիմում, իր հայրենի Աշտարակը յիշում, այն երգում եւ նրանով ոգեւորում իր բնկերներին: Մի երկրորդ «Կրօնակ» դարձաւ Դորոխեանի «Միծեռնակը», մինչեւ օրս էլ սիրելի եւ անմոռաց երգ՝ հայ պատանիի բերնում:

Մեր ազգային երգիչը, Ռափայէլ Պատկանեան, իր բանաստեղծական առաջին փորձերը Դորպատում արաւ, թէեւ նա այնտեղ շատ չմնաց, ընդամէնը մէկ տարի (1851):

Նշանակալիցն այն է, որ թէ՛ Պատկանեան եւ թէ՛ միւսները Դորպատի ու-

սանողներից դրում էին ոտանաւորներ միայն, զուտ բանաստեղծական կտորներ: Սրանք էլ մեծ մասով ինքնուրոյն էնէն, այլ փոխադրութիւններ զերմաներէնից, բայց՝ հայացրած բոլորովին: Այդ ոտանաւորներից շատերը կազմուած էին երգելու նպատակով:

Տեսանք արդէն, որ մեր ուսանողները յաճախակի իրար քօլ էին դալիս, հաւաքօյթներ ունենում, ուր նրանք ո՛չ միայն պարապում էին եւ դրական հարցեր շօշափում, այլեւ ուրախանում ու երգում մայրենի լեզուով, իրենց խի յօրինած երգերը: Դերման ուսանողական կեանքը նրանց համար օրինակ էր, դերման ուսանողական երգերից շատերն էլ հայացրած երգուած էին մեր ուսանողների կողմից:

Ռ. Պատկանեանը երգեր էր ձօնում «Հայոց գիմի»ին, ոտանաւորներ հիւսում «Ուսանողի կեանք»ի մասին, նրա ազգական Քերովը՝ Պատկանեան «Կենաց բաժակ» էր խմում եւ երգում, Գ. Միրիմանեան երիտասարդ ուսանող սիրոյ երգեր էր հիւսում «Հայոց աղջիկների» մասին, եւ ուրիշ շատ նման երգեր ու ոտանաւորներ:

Կենդանի շիման ու խօսակցութեան եւ, մա՛նաւանդ՝ երգի միջոցով է, որ արեւելահայոց աշխարհաբար դրական լեզուն կազմապարւում, կարճակերպում է հեռաւոր Դորպատում, մի խումբ կոչեցեալ, հայրենալառ հայ ուսանողների շրջանում, զանազան բարբառների ազդեցութեան տակ:

Բայց վերեւ յիշուած եւ զետ մի քանի ուրիշ բանաստեղծներով չէ, որ սահմանափակուած է Դորպատի դերը հայ գրականութեան եւ կեանքի համար: Մենք տեսանք արդէն, որ Դորպատի սանն էր նաեւ Ստեփանաւ Նազարեանը, մեր աշխարհաբար լեղուի կերտողներից, հայ հրապարակագրութեան հիմնադիրներից մէկը:

Ոչ ոք մեր հեղինակներից, չհաշուած Արովեանին, այնչափ չէ ազդուել Դորպատից եւ դերման դիտութիւնից ու կրթութիւնից, որչափ Նազարեանց: Առանց Դորպատի եւ դերման ուսման՝ ուղղակի

անհասկանալի պիտի լինէր Նաղարեանց իր աշխարհահայեացքով եւ զրական ուղղութեամբ: Անդամ իր մասնաւոր կեանքը նա կաղապարեց Դորպատ-դերմանական օրինակով: Յայանի է, որ նա եւս ամուսնացած էր մի դերմանուհու հետ:

Նաղարեանց իր «Հիւսիսափայլ»-ով որպէս աշխարհաբարի շառագով եւ հայ եկեղեցու բարեփոխութեանց կողմնակից՝ ծնունդ էր Դորպատեան մտայնութեան: Իրբեւ ներհուն զիտնական եւս, ուսուցչապետ Կաղանի համալսարանի արեւելագիտական ճիւղի, յետոյ Մոսկուայի Լազարետոն ճեմարանի, վերջէն տեսուչ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի, Նաղարեանց իր նախնական արեւելագիտութեան ամբողջը զբաւեց ու հոչակ ստացաւ իր մի շարք զիտական աշխատութիւններով, Դորպատեան ուսանող էր 50-ական թուականներին (նրա յաջորդը եղաւ Պետերբուրգի համալսարանում ծանօթ հայադէտ պրոֆ. Ն. Մառ, հոչակաւ մի շարք զիտական ուսումնասիրութիւններով):

Յետոյ՝ Գեորգ Բարխուդարեանը, աշխատակից «Հիւսիսափայլ»ի, հեղինակ «Ոլոր մոլոր կուրս եւ քալիք» թէեւ արդէն հինգած, բայց ժողովրդականացած երգի, երկարամետոյ ուսուցիչ, հեղինակ մի քանի դործերի եւ, որ վլլսաւորն է, անուն հանած մեղնում որպէս Շիլլէրի թարգմանիչ: Բաղմաթիւ ընթերցասէր հայ պատանիներ Բարխուդարեանի թարգմանութիւնները միջոցով են ծանօթացել դերման հանճարեղ դրողի «Օրլլամի կոյս»ին «Դոն Կարլոս»ին, ինչպէս նաեւ՝ Դէօթէի «Փատուտ»ին, Լէսսիդի «Նաքամ իմաստուն»ին, եւ այլն:

Ապա, եթէ Դորպատից էր դուրս ելել հայ ազատամիտ հրապարակագրութեան հիմնադիրներէրի Ա. Նաղարեան, նոյն այդ շրջանից էր եկել նաեւ Պետրոս Սիմոնեանց՝ հայ պահպանողական ուղ-

ղութեան ծանօթ դեկավարը, «Մեղու Հայաստանի» խմբագիրը: Վերջապէս Դորպատեան դպրոցից ելան նաեւ իր շարք հասարակական դործիչներ եւ մտաւորականներ, որոնք, հանրային-դաղափարական դործիչի շիւր ժառանգած լինելով Դորպատեան մթնոլորտում, երկար տարիներ ընթացում ամենաեռանդուն մասնակցութիւնը ունեցան հայ կեանքի զանազան ասպարէզներում:

Յիշենք զրանցից մի քանիսին. բժիշկ Լ. Տիգրանեան, Գ. Ափմեան, Գ. Միրիմանեան, Մ. Միսնաարեան, Գրիգորիս Եպիսկոպոս Աղայիիիեան, Մ. Ռօտիեան, Գուղիեան, Մ. Ամատունի, Փափագեան վարդապետ, Խ. Աւագեան եւ ուրիշներ:

Ահա այն դործիչները փաղաղը, որոնք Դորպատի դաղափարական սերմերէին, եւ որոնք հետագային այնչա՛փ լաւապէս բեղմնաւորեցին հայ դրական, մշտլույթային եւ հանրային անդաստանը:

Ընկերական մի եզակի սիրով էին կապուած դորպատեան սաները իրար հետ, մի հողի եւ մի շունչ դարձած, միեւնոյն պաղափարով տողորուած: Դաղափարապաշտական միեւնոյն հողի՝ դորպատեան դպրոցի մէջ կուուեց ու կուուեց սրանց ամէնի սիրան ու միտքը: Կատարեալ իրաւունք ունի բժիշկ Տիգրանեան ասելու.

«Այդ համալսարանը ունեցել է այնպիսի՝ մի մեծ բարեբար ազդեցութիւն հայոց մորազոյն լեզուի եւ գրականութեան, մեր մտաւոր եւ բարոյական առաջադիմութեան վրայ, որ զա մեզ համար բոլոր համալսարաններէ մէջ բընում է առաջին տեղը: Այստեղ են ուսել մեր երկրում լուսաւորութիւն տարածող առաջին ուսիվիբաները»:

Եւ այդ ուսիվիբաները տասնամեակներ ընթացում պայծառացնում էին հայոց երկնակամարը: Դրանցից մի քանիսը ապրեցին մինչեւ խոր ծերութիւն եւ հասարակական ասպարէզից իջան միմիայն անցեալ դարի վերջերին եւ ներկայ դարի սկզբին: Ահա՛ Դորպատի դերը հայ կեանքում:



Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## ՊԵՏՐՈՍ ՄԱՂԱՔԵԱՆ



Հայ դերասանուհիներին շատերը Մաղաֆեանի ձեռնասուններին են: Մաղաֆեանի կողմէ՛ բեմ հանուած ու մարգուած են Արուսեակ, Բոյրը՝ Ազաւնի, Մարիամ Մալիկեան, օր. Կտօրիւհնեան, Շաղիկ, Պիստոս Արաբիա, Բոյրը՝ Ազաւնի-Չապել, Ազնիւ-Հրայեայ, Ասողիկ, Սիրանոյշ, Մարի-Նուարդ եւ ուրիշներ ալ, որոնք երկրորդական դերասանուհիներ եղած են կամ՝ քիչ մնացած են քեմի վրայ:


Իսկ դերասաններին իրեն աշակերտած են Ազաւեան, Մնակեան, Սիսակ, Խաչիկ Փափագեան, Թրեանց, Պետրոս Պալթագար, որոնք եղած են իր գործակիցները:

Մաղաֆեան, ամէնուրեք, աչքը չորս բացած էր, դերասանուհեո մը որսալու համար: Փողոցը, շոգեմալի կամ շոգեկառքի մէջ եւ, մա՛նուսանդ՝ եկեղեցիին մէջ, աչքը ամէն կողմ էր՝ քեմի ընդունակ ազդկան մը հանդիպելու, գայն հետապնդելու ու համոզելու համար, որ դերասանուհի ըլլայ: Երբ պատահէր շնորհալի, լեզուանի, համարձակ օրիորդի մը՝ կը դիմէր հազար միջոցի, անոր ծնողքին հաւանութիւնը ստանալու համար: Անշուշտ, ընդհանրապէս կը մերժուէր, բայց պատահած է, որ յաջողի ալ:

Իր անյաջողութիւնները նոյնութեամբ եւ մանրամասնութիւններով իր ընկերներուն պատմելու սովորութիւն ունէր, ու կ'աւելցնէր.

— Թատրոնի սիրոյն՝ անարգուիլ չէ, ծծծ ուտելն իսկ յանձն առած եմ: Կարեւորութիւն չեմ տար այս կարգի նուաստացումներու: Կը ներեմ այդ պատուական ու օգէտ մարդոց: Քրիստոս Ել ճախտուեցաւ, հալածուեցաւ, ծեծուեցաւ, չարչարուեցաւ ու խաչուեցաւ, բայց այսօր, միլիոնաւոր հաւատացեալ ունի:

Բ Ա Ֆ Ֆ Ի



### ՏԵՐ ԹՈՂԻԿԻ ԴՊՐՈՑԸ

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ դիր-կարգալ սովորեմ եւ «մարդ» դառնամ: Տասր տարեկան էի, երբ ինձ մեր թաղի քահանային մօտ տա-րաւ:

— Տէ՛ր հայր, ծառայ լինեմ սուրբ աջիւղ, որդիս քեզ ծառայ եմ բերել, մի-սր քեզ, սոկորն ինձ, ինչ ուզում ես՝ արա՛, միայն թէ երեխաս մի բան սո-վորի:

Տէր Թողիկ էր վարժապետիս անու-նը: Նա մեծ համարում ունէր ո՛չ միայն բաղնաքի մէջ, այլեւ՝ մեր ամբողջ դաւա-

սում: Ով մի երազ էր տեսնում, նրա մօտ էր վազում եւ մեկնութիւն խըն-դրում: Ում երեխան հիւանդանում էր՝ նրան նարեկ կամ Աւետարան էր կար-դացնել տալիս, որ առողջանայ: Ով մի զործ էր կամենում սկսել՝ նրա «Տէր ու զորմեա»-յի վրայ էր փորձում իր բախ-տը: Մի խօսքով՝ նա մեր դաւառի մար-դարէն էր. ամէն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամէն մարդ նրանից խրատ էր ընդունում:

Ամբողջ զպրօցը բազկացած էր մէկ դասարանից. նրա մէջ էին աւանդուում թէ՛ բարձր եւ թէ՛ տարրական դիտու-թիւնները, սկսած այրենարանից մինչեւ այն ահաղին դիրքը, որ ես հազիւ էի կարողանում բարձրացնել եւ որը «Յայս-մաւարժ» էր կոչւում:

Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնաւ յատակի վրայ, առանց տախ-տակամածի, որը ծածկուած էր խաիր-ներով: Վարժապետը իր տակին փռած ունէր այժի մորթի. մի քանի հարուստ-ների որդիները նոյնպէս ունէին փոքրիկ օթոցներ, որ բերել էին իրենց տներից:

Միակ առարկաները, որոնք յիշեց-նում էին, թէ այդ մթին ու իոնաւ սնն-եակը զպրօց էր, Ֆալախիան էր եւ մի խուրձ դալար ճիւղոտներ: Աշակերտների մերկ ոտները դնում էին այդ պատմա-կան մեքենայի մէջ, պտտացնելով վեր բարձրացնում, յետոյ դալար ճիւղոտնե-րով այնքան հարուածում, մինչեւ ողոր-

մեկը զոհը բոլորովին թուլանում եւ ուշտօսի էր լինում: Պատժուող աշակերտին ծեծել էին տալիս նրա բարեկամի կամ ամենասիրելի ընկերի ձեռքով: Եթէ նա հարուածները թուլացնում էր կամ հրաժարում ծեծելուց, սրան եւս ենթարկում էին միեւնոյն դանահարութեանը:

Առաւօտեան վաղ սկսւում էր դաստառութիւնը: Վարժապետը իր անկիւնում նստած էր լինում. նրա առջեւ դրած էր մի փոքրիկ դրակալ: Աշակերտները հերթով մօտենում էին, վարժապետի աջը համբուրում, չոքում էին նրա առջեւ եւ դասադրքերը դնելով դրակալի վրայ՝ սկսում էին «համար տալ»: Սովորաբար ամէն մի սխալի համար աշակերտը ընդունում էր «խրատ»ի մի-մի սաստիկ զարկ ակին: Իսկ եթէ դուք բոլորովին սերտած չէք, նրա համար պատրաստ էր Փալախկան:

Այդ խրատ կոչուածը Աստու մի առանձին պատժ էր. շինուած էր ամենամուր փայտից եւ փոքրիկ թիակի ձեւ ունէր: Հին դրքերի մէջ կտնուած բոլոր ասացուածքները, որոնք վերաբերում էին ծեծելու, դանահարութեան, փորարուած էին նրա վրայ:

Պատիժների մէջ մինչեւ այսօր չեմ մոռացել մէկը, որը որքան ծիծաղելի, այնքան էլ սարսափելի էր. Աշակերտին կանդնեցնում էին ոտքի վրայ եւ երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղիւս կամ մի ահադին «Յայսմաւարբ»: Տղան ժամերով այդ ծանր դիրքը պէտք է պահէր զլիսից բարձր, երկու ձեռքով: Թեւեւը յոգնում էին, Ղըերը թուլանում, բայց ոչինչ: Գլխաւոր տանջանքը նրանումն էր, որ յանցաւորը պէտք է կանդնէր մէկ ոտքի վրայ. սովորաբար բնորում էին ձախ ոտքը: Մի աշակերտ էլ մտորակը ձեռքին, կանգնած նրա մօտ, հսկում էր այդ անտանելի մարմնամարդութեան. երբ յանցաւորը ոտքը դետին էր դնում, ընկերը իսկոյն մտրակով զարկում էր

ոտին: Այդ սատանայական պատժին եւ այն աստիճան սովորած էի, որ երկար կարողանում էի սալի նման մէկ ոտքի վրայ կանգնած մնալ:

Առաւօտները պէտք է դպրոց դառնէր բոլորովին անօթի: Վարժապետը ասում էր. «Կուշտ փորով չի կարելի դաս սովորել. երբ մտքը մի բան ուտում է, խելքը պակտում է»: Եւ նա օրինակ էր բերում ճղնաւորներին, վարդապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից դրքեր էին շարադրում:

Մեր վարժապետը շարածիտ մարդ չէր, ընդհակառակը, նա շատ բարի էր: Այս բոլոր խստութիւնները, այս բոլոր անպարտութիւնները առաջ էին դալիս նրա հասկացողութիւնը: Նա համոզուած էր, որ առանց տանջանքի աշակերտը ոչինչ չի սովորի: Նա այնքան հաւատում էր Փալախկային, որքան հաւատում էր թալիսմաններին եւ կախարդական արարողութիւններին, որոնցմով հրաշքներ էր գործում:

Այս դպրոցին մէջ եւ անցկացրի ամբողջ եօթը տարի: Այդ եօթը տարուայ ընթացքում եւ անցայ զիտութեան բոլոր աստիճանները, այսինքն՝ սովորեցի այնքան, որքան կարող էի սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտը: Կարդացել էի բոլոր դրքերը, որ յայտնի էին մեր երկրում, Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, Հին Կտակարան, Նարեկ եւ մինչեւ անդամ այն ահադին գիրքը, որ ես փոքր հասակումս դժուարութեամբ կարողանում էի վերցնել: Եւ կարողանում էի դրել եւ զբաժն կարգալ, եւ գրտէի նաեւ մի քանի կանոններ գրաբար լեզուի քերականութիւնից: Բայց մի բան, որ չկարողացայ ձեռք բերել, դա վարժապետիս ունեցած խորին գիտութիւնն էր ողկները եւ կախարդութիւնների մասին: Այդ գիտութիւնը վարժապետս պահում էր որպէս մի դադունք, որի մասնակից լինելու համար պէտք էր տասը-քսան տարի ծառայել նրան:

## Տ Ե Բ Թ Ո Ղ Ի Կ Ը

...հեղինակը անկողնից հեռուներն ու խորունկները գացած մարդիկ, իրմէ շատ առաջ, գրեր էին Աստուծոյ գիրքին մէջ, եւ Տ Ե Բ Թ ո Ղ Ի Կ Ը իր կարգին իմաստուն եղեր էր արտագրելու դաստիարակչական փայտի վրայ անոնց իմաստութիւնը.— «Դասն է ծառ խրատոյ, իսկ պտուղ նորս քաղցր...»:

Կեանքն ու բոլոր վարչակարգերուն բոլոր իմաստութիւնները չկրցան հակառակը փաստել դժբախտաբար: Եկան բոլորն ալ այդ ծանր տողը հաստատելու, նիպտի եւ փախսկայի պէս գէշ տողը:

Տարօրինակ պիտի ըլլար, որ իր գոյութեան ընթացքին առուելաբար սաստկութիւն խմած ժողովուրդի մը տէրտէրը, բան ստրկեցնելու համար, չընտրէր սաստկութեան համբան, դաստիարակութեան ձմեռնային ուղի մը այսինքն: Գիրին տուած իր անհուն վարկին համար իսկ դժուար է դրախտ չտամիլ իր այբեցիմին ի խնդիր ամէն վայրկեան դժոխք մը կերտելու տրամադիր այս թթու ֆահանգն:

Գիրի՞ն գտնուեցան, երկինքէն դիրի՞ն բերուեցան, ի՞նչ աղօթք է յոգնութիւն, ի՞նչ սպառում չարժեցին այս ազգին, — կրնար ենթագիտակցօրէն մտածած ըլլալ Տ Ե Բ Թ ո Ղ Ի Կ Ը, հայ տառերը ստրկեցուցած պահուն: Եւ ի՞նչ կ'արժեն մանաւանդ, դիրին ստրկած անտառապանք կերպով քանաչուած բաները, մեղքերով ու մեղանչումներով ծանր այն աշխարհին մէջ: Ապու՛շ էր Տ Ե Բ Թ ո Ղ Ի Կ Ը, որ չգիտնար հոգեբանական խոր արժէքը այրմունքով ու տեսակ-տեսակ խորովումներով ձեռք բերուած դրամագլուխներուն: Գիտէր առնչւածն, որ իր գիտցած աշխարհին մէջ ոչ մէկ բան չի կրնար մնայուն ըլլալ եւ արդիւնաւոր՝ առանց չարչարանքի:

Եւ ապա՝

Քաղաքակրթական կուրաստան այդ Արեւելի մէջ, բոլորովին ստած խաւարի մը դէմ մարտի ելած հին ու անհուն Մեսրոպի մը այդ տժգոյն, այդ առկայծեալ եւ սակայն իր մտադրութիւններով սքանչելի ներկայացուցիչը՝ ինչ թող ընէր: Իր ներքին համոզումով մա՞րդ կը ծեծէր միքէ, քէ փալախկայի մէջ դրած կը չարչարէր մարդացեալ տգիտութիւնը, անկէ լոյս հանելու կամ անոր մէջ մտ մը վառելու բոլորովին հայկական յամառութեամբ: Ընդհանրապէս վերջապէս կը բարձրանար Տ Ե Բ Թ ո Ղ Ի Կ Ը ձեռքը, քէ Մաշտոցի աշխարհին մէջ, տգիտութեան վտանգ կազմող տղոց: Ըստ ամբողջ անցեալի մը՝ ծեծը ծնողական իրաւունքներ ունէր գիտութեան եւ քաղաքակրթութեան վրայ: Զէ՞ր օգնած հարտարապետութեան, գրականութեան, նկարչութեան եւ ամէն ինչի: Բնա՛ւ ծեծ չկար բերդի մը շինութեան մէջ: Զուարթնոցի հեռու հիմքերուն մէջ չկա՞ր այն հարտարապետութեան տրուում միջոցէն: Իսկ մեծագոյն յեղափոխութիւնները ո՞ր հնոցին մէջէն բուսան եւ ուրկէ՞ առին իրենց առաջին սընունդը:

Ա. Զ Օ Պ Ա Ն Ե Ա Ն

## ՄՈՒՐԱՏ ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Կարելի է ամբողջ գիրք մը լեցնել: Բուելու համար Մխիթարեան կրթարաններէն ելած սուտոր գանգամ ուժերը եւ մեկնարանելու համար անոնց ամէն մէկուն, մահաւանդ կարեւորագոյններուն, կատարած գործին նշանակութիւնը, հայ ժամանակակից ազգային կեանքի, գրականութեան, արուեստի, բանասիրութեան վրայ ունեցած ազդեցութիւնը:


Ա. Զ.

Հայ ժողովուրդի ազգային ու մտաւոր վերածնունթեան մէջ՝ Մխիթարեանց ճիւղը ամէն ինչ չէ. ուրիշ տեսակէտներով կարեւոր տարրեր մեծ ուժեր երեւան եկած են թրջահայաստանի կամ Կովկասեան Հայաստանի մէջ, էջմիածին ու Վարազ, Պոլիս ու Թիֆլիս, Մոսկուա եւ Իդմիր: Արուսեան մը, Պարոնեան մը, Պետրոս Դուրեան մը եւ Եղիշէ Դուրեան մը, Առնդուկեանց մը, Թումանեան մը, Սրիմեան մը, Արուսնձտեանց մը, Զօհրապ մը, Թորամանեան մը, Կոմիտաս մը եւ այլք ըրած են ուրիշ էական բաներ: Բայց Մխիթարեանց ճիւղը՝ նոր ժամանակներու սկիզբը ճամբայ բացող առաջին մեծ շարժումը եղած է եւ ընդհանուր զարթնումէն յետոյ՝ մշակութային ստեղծագործ աշխատանքի կամ ուսումնասիրական վաստակի մեծագոյն վարարաններէն մին կաղաժ է:

Ազգասիրական ու մտաւորական այսպիսի բարձր դեր մը կատարելու կոչուած Մխարանութեան մը յանձնելով՝ կրթական նպատակի մը յատկացւելու համար՝ կարեւոր զումարներ, Մուրատ եւ Ռափայէլ ամէնէն հետետեսորէն ազդողուտ դործը կատարած եղան: Այդ զումարներով Մխիթարեանք 1834ին հիմնեցին նախ Մուրատեան վարժարանը Փատուայի մէջ, տասներկու տարի վերջ՝ 1846ին փոխադրելով զայն Փարիզ:

Մուրատեան վարժարանի հաստատութենէն երկու տարի յետոյ Վենետիկի մէջ բացին Ռափայէլեան վարժարանը, որուն հետ եկաւ-միացաւ Մուրատեանք 1870ի Ֆրանքեւրոսիական պատերազմի միջոցին, եւ անկից է վերայդ վարժարանը Վենետիկի մէջ երկու բարերարներուն միացեալ անունով՝ կը շարունակէ իր կրթական բեղմնաւոր դործը:

Մխիթարեան հայերը իրենց տրուած կտակներու զումարներն անցընելով խղճամիտ եւ զոհարեր ջանքերով՝ մէկ վարժարանի անդ դարոցներու խումբ մը հիմնեցին՝ իբրեւ Մուրատ-Ռափայէլեան նախապարաստական վարժարաններ Պոլիս ու Փոքր Ասիոյ քանի մը քաղաքներու եւ Պալքանեան երկիրներէ ոմանց մէջ. ու վերջին տարիներուն Փարիզի մէջ վերահաստատեցին երբեմնի հռչակաւոր Մուրատեան վարժարանը, Փարիզի, այսինքն՝ լոյսի մեծագոյն կեդրոնին, դեղարուեստի եւ դիտութեան արեգակնափայլ



ՎԵՆԵՏԻԿԻ ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

վառարանին մէջ, ուր արդէն երկար ժամանակէ ի վեր Արեւելքէն մեր երիտասարդութեան մէկ ստուար մասը կու դայ իր միաբը զարգացնելու եւ ուր Մուրաթեան վարժարանը՝ իր հին շրջանին՝ ինչպէս եւ այսօր՝ Փրանսական մաքին ու հայ մաքին մեծ միջնորդներէն մին հանդիսացաւ :

Կարելի է ամբողջ գիրք մը լեցնել՝ թուելու համար Մխիթարեան կըրթարաններէն ելած մտաւոր զանազան ուժերը եւ մեկնաբանելու համար անոնց ամէն մէկուն, մանաւանդ կարեւորագոյններուն, կատարած գործին նշանակութիւնը, հայ ժամանակակից ազգային կեանքի, զրահանութեան, արուեստի, բանասիրութեան վրայ ունեցած ազդեցութիւնը : Հոս կ'ուզեմ յիշատակել դոնէ ամէնէն նշանակալից անուններէն քանի մը խումբեր :

Ծերենց (առքթ. Յ. Շիշմանեան), որ իր հայ սրտամական գեղեցիկ վէպերով հանրածանօթ, Մխիթարեան սան մըն էր, մանուկ հասակէն՝ Ալիշանի հետ՝ Պոլսէն Ս. Դազար զրկուած՝ քահանայական կեանքի նուիրուելու համար, իր ուսումը վանքին մէջ ստացած է, բայց յետոյ եկեղեցական ասպարէզէն հրաժարելով՝ Փարիզ գացած է բժշկութիւն ուսանելու : Փատուայի եւ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարաններէն ելած են

Մկրտիչ Պէշիկթաշեան, պաշտելի բանաստեղծը, մեծ աղլաւակները եւ ուրիշ Ռափայէլեան սանի մը՝ Արտպիտն Հէքիմեանի հետ՝ հայ-թատրոնի հիմնադիրը, Թովմաս Թէրզեան, ու Մկրտիչ Աճէմեան զմայլելի բանաստեղծները, որոնց առաջինը նաեւ բազմաբղիւն ուսուցիչ, Արփիայ Արփիարեան, որ իր Միխիթարեան վարպետներուն գործը խորտապէս յարողող, բայց լեզուական հարցին մէջ անոնցմէ տարբեր մտածող, Բաշալեանի, Ջօհրապի եւ ուրիշ քանի մը գրողներու հետ՝ շարունակելով Գրիգոր Օտեանի եւ Պետրոս Գուրեանի սկսած գործը՝ նոր հայերէնի դոման մէջ, զբաբարախառն աշխարհաբարի արուեստակեալ ու անընական լեզուին դէմ պոյքորոյղ եւ անխառն ու կենդանի արեւմտահայ աշխարհաբարը կազմելու համար ամէնէն աւելի վճռականօրէն ու արդիւնաւորապէս աշխատողներէն մին եղու, Վահրամ Սյովաճեանը, տաղանդաւոր երաժիշտ ու մեծտրփէջ զբաղէա, Վարուժանը, հայ ցեղի հորդագոյն բանաստեղծներէն մին, Ահարոն Տատուրեան ներշնչեալ ու նրբորուեստ քերթողը, դեռ նոր ծաղկիլ սկսող ինքնատիպ ու առողջ բանաստեղծ Հրայր Գալարեանը, Փարիզի երբեմնի Մուրատեան վարժարանին՝ Մամուրեան մեծ զբաղէալը, Միքայէլ Փորթուզալը ու Յովհաննէս Սաղղղեանը, Եւան մ'ըսէս պետական բարձր անձնաւորութիւններ օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին մէջ, այլեւ խորտապէս տղաւէր հայեր ու հայ բանասիրութեան իրենց նպաստը բերել ցանկացող խուզարիւ մտքերը, Գրիգոր Պըլլըլը, ուսմանտահայ անուանի անձնաւորութիւնը եւ ուրիշներ :

Կարելի է ու պէտք է նաեւ յիշատակել Երուանդ Ոսկան արժէքաւոր արձանագործը, Էսկար Շահին եւ Կարապետ Աղտմեան յայտնի նկարիչները, Գուրգէն Ալէմշահ տաղանդաւոր երգահանը, որոնք Վենետիկի Մուրատեան-Ռափայէլեան վարժարանի աշակերտներ եղած են, ինչպէս եւ Պետրոս Աղաճեան մեծ դերասանը, որ իր նախնական կրթութիւնը ստացած է Պոլիս, Միխիթարեան վարժարաններու մէջ : Եւ ասոնց հետ դեռ ուրիշներ, զորս կը մտնամ յիշատակել : Իսկ ասոնց շուրջ ստուար հոյլ մը լաւ հայերու, իրենց աղօն ու հայրենիքը, իրենց տոհմային լեզուն եւ դրականութիւնը ջերմօրէն սիրող, արուեստի, դրականութեան, գիտութեան հասկացողութիւն ու յարկանք ունեցող հայերու, որոնք մեր ժողովուրդին նոր ժամանակներուն մէջ կատարած յառաջընթացի բոլոր ձեռնարկներուն իրենց անկեղծութիւնը բերած են :

Այս անուանացանկը, սակայն, ինչքան ալ անկատար, արդէն իսկ շատ պերճախօս է ինքնին եւ հասկնալի կը դարձնէ, թէ ինչու բովանդակ հայ ժողովուրդը արդարեւ պարտականութիւն ունէր Մուրատեան եւ Ռափայէլեան վարժարաններու հարիւրամեակին առթիւ թողէ մը ոտքի կանոնելու եւ մեծարանքի ու երախտագիտութեան իր տուրքը ընծայելու այդ մեծ կրթարաններու հիմնադիրներուն ու վարիչներուն :

Նոր ժամանակներուն մէջ մենք ունեցեր ենք Մոսկուայի Լազարեան ճեմարանը, Էջմիածնի Գէորգեանը, Թիֆլիսի Ներսիսեանը, Խրիմեանի օրով Վարազդ զպրօցը, Խարբերդի մէջ Թիկատինցիին վարժարանը, Պոլսոյ Իւսկիտարի ճեմարանը, Կեղրոնականը, Պէրպլէրեանը, Արմատի զպրեկանը, Երուսաղէմի եւ այժմ Անթիլիասի ժառանգաւորաց վարժարանները . ասոնց մեծագոյն մասէն ժամանակաւորապէս առաջ, ու յետոյ՝ ասոնց հետ մինչեւ ցարդ հայ կրթական գործին առաջին կարգին վրայ՝ շողացած է ու կը շարունակէ շողալ, անշիջելի փայլով մը, Մուրատեան-Ռափայէլեան վարժարաններու մտաւորական-ազգասիրական շքեղ լոյսը :

Ս. Վ Ր Ա Ց Ե Ա Ն

Գ Ե Ո Ր Գ Ե Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ը

Կարիքի է յիշել բազմաթիւ անուամբ նմա-  
բանակամներ՝ հոգեւորական, գիտնական, գրող,  
լրագրող, սրտեստացէտ, հասարակական գոր-  
ծիչ, բայց մա՛նուածը ուսուցիչ:

Ս. Վ.

Թորք դարու Ամենայն Հայոց կաթո-  
ղիկոսների շարքում երկու դէմք, իրենց  
բացառիկ անհատականութեամբ, անջըն-  
ջելի կնիք են դրել Հայ կեանքի վրայ՝  
Գէորդ Չորրորդ եւ Խրիմեան Հայրիկ:

Հայրիկը, յեղափոխական ու բանաս-  
տեղծ՝ աչքի զարնոց նիւթական հետք չի  
թողել էջմիածնում, Գէորդ Գ. դործի  
մարդ էր եւ, որպէս շինարար, իրաւամբ  
արժանի է մեծագործ անուան: Իր հիմ-  
նած ճեմարանը միայն բաւական էր ան-  
մահացնելու Գէորդ մեծագործ անունը  
Հայոց պատմութեան էջերում:

Գէորդ Գ. դալիս էր Պոլսից, ուր Հա-  
յոց կեանքում արդէն գոյութիւն ունէր  
սահմանադրական իրաւակարգ — մշա-  
կութային համեմատարար զարգացած  
հաստատութիւններ, ազգային հարցեր  
արծարծող եւ հանրային կարծիք մշակող  
մամուլ:

Ռուսահայոց իրականութիւնը, այդ  
տեսակէտից, խիստ տղբատ էր, իսկ էջ-  
միածնում ամալութիւն էր տիրում: Մի  
խեղճուկ Ժառանգւորաց զարժարան,  
որտեղից ղուրս էին դալիս տպէտ Հողե-  
որականներ, եւ իր կոչման անարժան  
միարանութիւն:


Գէորդ Գ., որ պահպանողական եւ  
ոչ-ռուսասէր մարդու համբաւ ունէր,  
հետեւարար եւ չէր վայելում ռուսահայ  
ազատամիտ ասարբերի համակրանքը,  
հասկացաւ, որ ռուսահայերը եւ, ընդ-  
հանրապէս բոլոր Հայերը, ամէնից աւելի,  
պէտք ունէին մասուր լուսաւորու-  
թեան եւ զարգացած, ժամանակի գիտու-

թեան եւ ոգուն բաւարարող մտաւորա-  
կանութեան, յատկապէս, առողջ մտքի  
տէր Հողեւորականութեան: Հայութիւնը  
ամէն տեղ գոյութիւն ունէր իբրեւ եկե-  
ղեցական համայնք, եւ եկեղեցական ո-  
գին դիւ ուժեղ էր ամէն տեղ:

1874 թուին, էջմիածին վանքին կից,  
ընդարձակ Հողի վրայ, Գէորդ Գ. իր  
ձեռքով հիմը դրեց մի դպրոցի, որ իր ա-  
նունով կոչուեց Գէորդեան ճեմարան: Իր  
ժամանակի համար փառաւոր էր ճեմա-  
րանի շէնքը, որի համար կաթողիկոսը ո-  
չինչ չխնայեց: Թուրք կառավարութեան  
արտօնութեամբ Մողանլուի Հռչակաւոր  
անտառից ըրելի տուեց խոշոր դերան-  
ներ: Գործի կանչեց անուանի վարպետ-  
ներ: Ինքը անձամբ հսկում էր շինութեան  
վրայ: Ասում էին, որ յատակադիծն էլ  
էր պատրաստել իր ձեռքով:

Եւ, իսկապէս, իր ժամանակի հա-  
մար Հոյակապ էր Գէորդեան ճեմարանը:  
Վաղարշապատ դիւղի դէպի Երեւան առ-  
նոյ մեծ պողոտայի վրայ, վանքի արեւ-  
ելեան կողմը, պարտէզի մէջ, արեւ-  
մուտքից արեւելք երկարող, բարձրանում  
էր սրբաւատ շարքերից կարմիր ներկուած  
երկայրկանի մի շէնք, որի ներքի լայն  
միջանցքով բաժանում էին երկու շարք  
լուսաւոր դասարանները: Ենչքի մէջակե-  
զը, հարաւային մուտքի վրայ, տեղա-  
ւորուած էր Հոյաշէն դմբէթը, ճեմարա-  
նի համբաւաւոր սրահը, ուր տեղի էին  
ունենում ճեմարանի հանդէսները: Այս-  
տեղից հարաւային պարտէզի վրայ նա-  
յոյ լայն պատուհաններից երեւում էր





ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

վեհափառ Մասիսը՝ իր ամբողջ հասակով: Վարը, պարահղում, տարածուած էին աշակերտների հայրենակցական մարգերը: Այստեղ, այս սրահում, Մասիսին նայող դաշնամուրի առջև նստած՝ Կոմիտասը յօրինում էր իր անմահ երգերը:

Սրահի ճակատին կախուած էր Գէորգ Գ.ի իւղաներկ մեծ նկարը: Նրանից քիչ հեռու բազմած էր Խրիմեան Հայրիկը՝ ծխախոտից դեղնած պեխերով: Մի քիչ անդին՝ Այվազովսկիի նշանաւոր նկարը՝ «Նոյը իջնում է Արարատից», եւ միւս կողմը՝ Թադէոսեանի «Էջմիածին» նկարը, Յիսուսը իջնում է երկնքէց՝ հիմքը դնելու նպատակով:

Սրահի առջև, միջանցքում, ամէն առաւօտ, դասերից առաջ, երկու շարքով կանգնում էին ճեմարանի երկու հարիւր աշակերտները՝ երգելու համար աղօթքը՝ «Առաւօտ լուսոյ», եւ երեկոյեան՝ «Հրեշտակ գուարբալն»: Միջանցքի արեւելեան ծայրը տեսչարան-ուսուցչանոցն էր, իսկ հիւսիսային կողմը՝ ընդարձակ սերտարանը եւ ընդարձակ մատենադարանը՝ 40 հազար գրքերով ու պարբերականներով:

\*\*

Գէորգեան ճեմարանը, կրթական ծրագրի տեսակէտից, բաժանուած էր երկու մասի. 1) վեցամեայ միջնակարգ դպրոց եւ 2) եռամեայ յարաններ:

Հայոց եկեղեցական-ծիսական դըպրոցների չորրորդ դասարանը յաջողութեամբ աւարտողները ընդունուած էին ճեմարանի առաջին դասարանը: Ճեմարանի դասարանական բաժինը իր ծրագրով համապատասխանում էր թեմական դպրոցների կամ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի ծրագրին, միայն ճեմարանում ուժեղ էին հայագիտական առարկաները եւ, իրրեւ օտար լեզու՝ սովորում էին, ռուսերէնից զատ, գերմաներէն եւ հին յունարէն: Ճեմարանի դասարանական բաժինն աւարտողը ստանում էր համապատասխան վկայական եւ, իրրեւ միջնակարգ դպրոց աւարտած՝ իրաւունք ունէր Հայոց եկեղեցական-ծիսական դըպրոցներում պաշտօնավարելու կամ քահանայութեան աստիճան ստանալու եւ կամ եւրոպական բարձրագոյն դպրոցներում ուսումը շարունակելու: Ռուսական հա-

մալարաններ ընդունելու համար պէտք էր դիմնադիտի կամ ուշալիան դպրոցի ըննութիւն անցնելին :

Ճեմարանի դասարանական բաժինը աւարտողների մի մասը զուրս էր գալիս եւ մտնում էր դործնական կեանքի ասպարէզ, իրրեւ ուսուցիչ, քահանայ, եւայլն, միւսները շարունակում էին իրենց ուսումը երեք տարի եւս, լսարանական բաժնում :

Ճեմարանի լսարանները, կարելի է ասել, եռամեայ բարձրագոյն դպրոց էր, մի տեսակ համալսարան : Նման հաստատութիւն մենք չենք ունեցել ուրիշ ոչ մի տեղ :

Լսարանական բաժնում դասաւանդւում էին հետեւեւայ առարկաները .

- ա) Հայոց լեզու, աշխարհարար եւ դրարար, քննական,
- բ) Հայոց պատմութիւն, քննական,
- գ) Մատենադիտութիւն եւ դրակասութիւն,
- դ) Փիլիսոփայութեան պատմութիւն,
- ե) Հողերանութիւն,
- զ) Տրամաբանութիւն,
- է) Մանկավարժութիւն,
- ը) Հայոց եկեղեցական իրաւունք :

Իսկ վերջին տարիները նաեւ՝ ընկերաբանութիւն եւ քաղաքատնտեսութիւն : Եթէ նկատի ունենանք դասախօսների որակեւ կազմը, այլեւ հարուստ մատենադարանը եւ առատ ընթերցանութիւնը, հասկանալի կը լինի, որ ճեմարանի լսարաններինց զուրս էին դալիս բազմակողմանի եւ խորունկ զարգացման տէր երկուսասարգներ, որոնց համար դործը ապաստարան էր հայ մշակոյթի, կրթական եւ հասարակական ասպարէզներում :

Գէորգեան ճեմարանում իբրեւ տեսուչ կամ ուսուցիչ, զանազան ժամանակներում, պաշտօնավարել են բազմաթիւ բարձր մտաւորականներ, ինչպէս Մաղաքիս արք. Օրմանեան, երբ դեռ վարդապետ էր, Գարեգին վարդապետ Ճովսէփեանց, ապաղայ Կիլիկիոյ կաթողիկոսը . բազմաճմուտ գիտնական Կարապետ վարդապետ Տէր Մկրտիչեանը, երաճտագէտ Կոմիտաս վարդապետ, մանկավարժ Սեդրակ Մանգիլեանը,

Ստեփանոս Գալասեաններ, Կարապետ Կոստանեանը, Մանուկ Աբեղեանը, Մինաս Բերբերեանը, Հրաչեայ Աճառեանը, Յակոբ Մանանդեանը, Միքայէլ Տեղբանեանը, Յովհաննէս Յովհաննիսեանը, Լէոն, Եր. Տէր Մինասեանը, Աւ. Տէր Գողոսեանը եւ բազում ուրիշներ :

Գէորգեան ճեմարանը, որպէս կըրթական հաստատութիւն, պատմական մեծ դեր կատարեց հայ ժողովրդի աղքատի կեանքի բոլոր ասպարէզներում : Կարելի է յիշել բազմաթիւ անուանի ճեմարանականներ՝ հոգեւորական, գիտնական, գրող, լրագրող, արուեստագէտ, հասարակական գործիչ, յեղափոխական, բայց մանաւանդ ուսուցիչ : Միայն իբրեւ օրինակ, այստեղ առաջ բերենք, լոկ յիշողութեան վրայ հիմնուած, մի քանի անուններ, որոնք ասելի քան որեւէ ներողանք՝ ցոյց կը տան Գէորգեան ճեմարանի աղջային արժէքը :

ՀՈՒԳԵՆՈՐԱՎԱՆՆԵՐ —

Գէորգ Զ. Զէօրէջեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, գիտնական Գարեգին Ա. Յովսէփեանց, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, երաճտագէտ Կոմիտաս վարդապետ Սողոմոնեան, Կարապետ եպիսկոպոս Տէր Մկրտիչեան, Ներսէս արքեպիսկոպոս Մելիք-Քանդեան, Գիւրե եպիսկոպոս, Յուսիկ եպիսկոպոս Զոհրապեան, Սրսէն աւաղ քահանայ Սիմոնեանց :

ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐ, ՔՆՆԱԳԱՏ —

Ակադեմիկոս Մանուկ Աբեղեան, փրոֆ. Ն. Աղոնց, Նիկոլ Աղբալեան, Ա. Աբեղեան, Ստեփան Մալխասեան, Ստեփան Կանոյեան, Երուսանդ Տէր Մինասեան, Վահան Խորէնի, Գառնիկ Գլուզէրեան, Արսէն Տէրաբեան, Գարեգին Խատակ :

ԳՐՈՂ, ԲԱՆԱՍԵՆՎՈ —

Աւ. Ահարոնեան, Լ. Շանթ, Աւ. Իսահակեան, Գ. Դեմիրճեան, Ալ. Բակունց, Լեո Կամսար, Գառնիկ Քեալաշեան :

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՑ.—**

Ա. Վառժան, Ա. Գիւլիանդարեան,  
Բ. Տէր Մինասեան, Ա. Զամալեան, Ա.  
Մառեան, Սահ. Թորոսեան, Ա. Միկոյ-  
եան, Խ. Կարճիկեան, Ա. Խոնդկարեան,  
Յ. Տէր Յակոբեան (Իրազիկ), Արտակ  
Գարրինեան, Ար. Միքայէլեան:

**ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՑՆԵՐ.—**

Ա. Տէր Պօղոսեան, Աբշ. Շաւարշ-  
եան, Գ. Իգիլեան, Ա. Բարսեղեան, Վ.  
Հախնազարեան:

**ԵՐԱՃՇՏԱԳԷՏՆԵՐ.—**

Կոմիտաս վարդապետ, Սպիրիդոն  
Միլիբեան:

Այսքանը միայն պատահարս յիշ-  
ած անուններ են. եթէ ճեմարանական-  
ների լրիւ ցանկը ունենայինք, անկաս-  
կած, կարելի պիտի լինէր ուրիշներ եւս  
աւելացնել: Խօսքս միայն անուանի դար-  
ձածների մասին է, իսկ անդին ղեռն Հա-  
րիւրաւոր ճեմարանականներ կան, որոնց  
անունը պակաս յայանի է եւ կամ ընաւ  
յայանի չէ եւ որոնք ապրել եւ գործել են  
ժողովրդի մէջ եւ ժողովրդի համար՝ ազ-  
գային կեանքի զանազան ասպարէզնե-  
րում: Չկայ ուրիշ մի հայ դպրոց, որ ու-  
րան կարեւոր գէմբեր առած լինի ազ-  
գին:

Գէորգեան ճեմարանը գործեց 43 տա-  
րիներ անընդհատ: Հիմնուելով 1874ին,  
Գէորգ Դ. կաթողիկոսի ձեռքով, նա ընդ-  
միջո փակուեց Գէորգ Ե. կաթողիկոսի  
օրով, Թուսաստանի յեղափոխութեան  
հետեւանքով: Յարական կառավարութիւ-  
նը մէկից աւելի անգամներ փորձեց իր  
ակազիլոսի տակ առնել ճեմարանը, ինչ-  
պէս եւ միւս հայ դպրոցները, բայց չյա-  
լողուեց՝ հանդիպելով հայ ժողովրդի  
դիմադրութեան: Ինչ որ չկարողացան ա-  
նել ցարերը, արին նրանց յաջորդ՝ կոմի-  
տարները:

Ճեմարանը եւ թեմական դպրոցնե-

րը, ըստ Պոլսեանի, հոգեւոր վարժա-  
րաններ էին՝ նպաստակ ունենալով հայ  
հոգեւորականներ պատրաստել եւ հայ  
ժողովրդի հոգեկան մակարդակը բարձ-  
րացնել: Փաստօրէն, սակայն, նրանք  
ազգային աշխարհիկ ուսումնարաններ  
էին: Ճեմարանից, օրինակ, շուրջ 200 ա-  
շակերտներից, միջին հաշուով, տարեկան  
հազիւ մէկերկու հոգեւորական էր դուրս  
գալիս, իսկ լինում էին տարիներ, երբ  
չըջանաւարաններից ոչ մէկը հոգեւոր  
կարգ չէր ընդունում: Ճեմարանը եւ թե-  
մական դպրոցները, որոնց մէջ ամէն առ-  
բի սովորում էին, միջին հաշուով, առը-  
ւաղն 200 աշակերտներ, տալիս էին,  
հայկական աեսակէտից, ազգային առողջ  
կրթութիւն ու դաստիարակութիւն, որ  
չէր համապատասխանում ցարերի ուս-  
սական ջաղաքականութեան:

Հայասանի Հանրապետութեան օ-  
րով, համալսարանի հիմնումով, նախ-  
կին ձեւի ճեմարանի պէտքը չզգացուեց,  
նրա որակիւլ ուսուցիչները՝ Մ. Արդ-  
եան, Գարեգին եպիսկոպոս Յովսէփեան,  
Յ. Մանանդեան, եւայլն, դարձան հա-  
մալսարանի փրոֆեսօրներ, եւ ճեմարա-  
նը չվերարարուեց, թէեւ էջմիածինը ի-  
րաւունք եւ հնարաւորութիւն ունէր վե-  
րարանալու: Խորհրդային յեղաշրջումից  
յետոյ, էջմիածինը այլեւս ո՛չ իրաւունք  
ունէր եւ ոչ հնարաւորութիւն բանալու  
Գէորգ Դ-ի հիմնած ճեմարանը: Այն՝ ինչ  
որ դոյութիւն ունի այժմ էջմիածնում,  
Գէորգ Զ. Չէօրէջեան կաթողիկոսի հաս-  
տատած Գէորգեան ճեմարան անունով,  
ծաղրանկարն է նախկին Գէորգեան ճե-  
մարանի՝ անընդունակ թէ՛ ծրարքով եւ  
թէ՛ ողիով նախկին ճեմարանականների  
նման սերունդ պատրաստելու:

Ճեմարանակամ, արեւելեան իրակա-  
նութեան մէջ, նշանակում էր ուսեան,  
բազմակողմանի հայագէտ, ազգային դա-  
դափարներով տողորուած եւ ազգին ծա-  
ռայելու պատրաստակած մաււորական:  
Անուրանալի է ճեմարանի լուսաւորիչ եւ  
յեղաշրջիչ գերբ հայ կեանքի բոլոր ըն-  
գաւաններում:

ՍԻՄՈՆ ՎՐԱՏԵԱՆ

Ն. Թ Ա Շ Ճ Ե Ա Ն

Երոզպակամ ազատ միջավայրի մէջ դաստիարակուած եւ սզատ կեանքի պահանջներու գիտակից ուսուցչական խումբ մը, աւելի քան երեսու տարի, անընդհատ եւ յարատեւ աշխատամեով կատարեց իր դերը՝ տալով գաւառի կայուն կարիքաւոր ուսուցիչներ, կամրայն զործիչներ:

Ն. Թ.

Ս Ա Ն Ա Ս Ա Ր Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն

1881 Հոկտեմբեր 1ին, բարերար Մկրտիչ Սանասարեանցի կտակով հիմը կը դրուէր համանուն վարժարանին:

Կրթական այդպիսի հաստատութեան մը բացումը աւելի նշանակալի կը դառնար անոր համար, որ տեղի կ'ունենար Բարձր Հայքի մայրաքաղաք Կարինի մէջ, ուր, այդ օրերուն, տեղի կ'ունենային հայկական ազատագրութեան առաջին խրատումները:

Թուրք կառավարութիւնը շարտօնեց վարժարանի սեփական շէնքի կառուցումը՝ այդ նպատակին համար դնուած հողին վրայ, առարկելով, որ այդպիսի բարձր շէնքի մը կառուցումը մերձակայ ամրոցներուն մօտերը, թոյլատրելի չէ: Աւելի չարամտութիւն, քան ռազմադատական լուրջ արդելք:

Հրատարելով սեփական շէնք ունենալու գաղափարէն, Սանասարեանը մըշտապէս կը հաստատուի քաղաքին ծայրը, եկեղեցիին կից եւ անոր պատկանող շէնքի մը մէջ, որ աստիճանաբար ընդարձակուելով՝ հիմնադիրին ծախքով կը յարմարցուի վարժարանի պահանջներուն:


Վարժարանը, իրրեւ զլիւսաորապէս գիշերօթիկ, վանական կեանքի շատ մօ-

տիկ վիճակ մը կը ներկայացնէր, մանաւանդ իր առաջին քանոնակներն: Ամփոփուած պարսպաման չորս պատերու մէջ, զրեթէ ամբողջովին կտրուած էինք արտաքին աշխարհէն: Պարսպի դուռը կը բացուէր մեր առջեւ այն տան միայն, երբ ուսանողութիւնը, այս կամ այն առիթով, խմբովին դուրս պիտի ելլէր:

Գիշերօթիկ աշակերտներուն համար գետնը եւ անոնց խիստ կարգ ու կանոնի տակ ապրած կեանքը այն տպաւորութիւնը կը ձգէին այցելուին վրայ, թէ անոնք մտանաւոր ուխտի մը պատկանող անձեր են՝ նուիրուած գեղեցիկ իտէպի մը եւ իրարու կապուած ուժեղ կապերով: Եւ այդ զգացումն ալ ունէր ռուսնողութիւնը:

Վարժարանը կը ներկայացնէր իր նւթապատակին ծառայող շատ յարմար միջավայր մը, իր ընտիր ուսուցչական կազմով, իր ճոխ զրադարանով եւ թանգարանով:

Երոզպական ազատ միջավայրի մէջ դաստիարակուած եւ ազատ կեանքի պահանջներուն գիտակից ուսուցչական խումբ մը, աւելի քան երեսու տարի, անընդհատ եւ յարատեւ աշխատանքով կատա-



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

բեց իր դերը՝ աստով դաւառի հայութեան հարիւրաւոր ուսուցիչներ, հանրային գործիչներ:

Սանասարեանը յաականչողը ո՛չ այնքան իր առած բարձր կրթութիւնն էր, զիտական ճոճոան ֆորմիւլներով հարուստ, որքան այն մաջուր, հայկական ոգին, նուիրումի ոգին, որ կը ներշնչուէր հոն:

Դպրոցական ճոխ ծրագրին մէջ, դաստիարակչական մեծ դեր կատարող, նկարագիր կերտող դասերն էին.

— Հայերէմ (գրաբար եւ աշխարհարար), հայ մատենագրութեան խղճամէջ ուսումնասիրութեամբ,

— Հայոց պատմութիւն,

— Նկիզեցական պատմութիւն (որ ուրիշ րան չէր, բայց եթէ տարբեր ձեւով աւանդուած ազգային պատմութիւն մը),

— Ընդհանուր ազգաց պատմութիւն,

— Աշխարհագրութիւն (էրբէւ լրացուցիչը այս դասերուն):

Իսկ ֆրանսերէն եւ, մասնաւորապէս

գերմաներէն դասաւանդութիւններուն զուգընթաց, կ'ընարուէին ազատաշունչ եւ դաստիարակիչ դիրքեր՝ ընթերցանութեան եւ ուսումնասիրութեան համար:

Այս ուղղութեամբ անդերագնացելի դեր կատարած է վարժարանի ոգին, տեսուչներէն պր. Գ. Արուլեան, որ իբրև ուսուցիչ ընդհանուր ազգաց պատմութեան եւ աշխարհագրութեան, զիտէր նջանչելի վարպետութեամբ ուսանողութեան ուշադրութիւնը կեդրոնացնել ազգային ոգին դարձնող, հայրենասիրական կրակը հրահրող երեւոյթներու շուրջ:

Գ. Արուլեանի աւանդած գերմաներէնն ալ տեսակ մը ազատագրական պատմութիւն էր, որովհետեւ ջերականական գիտելիքներէն յետոյ, մեր դաստիարակը գրաւուած էին գերմանական հայրենաշունչը գրականութեան հատրնտրներուն ընթերցումով, զորս Արուլեան զիտէր այնքան հետաքրքիր դարձնել իր լուսարարութիւններով եւ մեկնարարութիւններով: Այսպէս էր, օրինակ, Շիլլերի «Վիլիելմ Տէյքը», Զուրկերիոյ ազատագ-

բական պայթույթը ներկայացնող այդ սթանդեյնի դործը՝ այդպէս էին գերմանական աղատաշունչը զբաղւում էին թէ՛նտոր Բէօրնըրի եւ ուրիշներու բանաստեղծութիւնները, որոնցմէ շատերը գոց կը ստրվէինք: Զափազանցութիւն ըրած չեմ ըլլար, եթէ ըսեմ, թէ ասոնց ընթերցումն ու ուսումնասիրութիւնը նոյնքան ներշնչող եղած են մեզի համար, որքան մեր աղայիս պատմութեան դասերը, եւ նոյնքան հրահրող մեր հայրենասիրական դպրոցները, որքան ընթերցումը Բաֆֆիի, որուն «Կայծեր»ը զազաագողի ներս կը թռչէին վարժարանի պարիսպներէն...

Ուսանողութեան ուղղակի դաստիարակութեան զուգընթաց՝ կար նաեւ ամուղակի, գաղտնի դաստիարակութիւնը, որ կու գար դուրսէն եւ բարձրագոյն կարգի ուսանողներուն միջոցով աստիճանաբար կ'անցնէր իրենց յաջորդներուն:

Կարինը, իրբեւ միջնաբերդներէն մէկը Չ. Յ. Գաշնակցութեան, չէր կրնար իրեն անհաղորդ պահել կրթական այս բարձր հաստատութեան չափահաս սաները, որոնք բնականօրէն կոչուած էին իրենց դործակիցները ըլլալու կեանքին մէջ: Վարժարանի կահադործութեան ուսուցիչներէն կարնեցի Արամ Վահանեանն էր յարաբերութեան կապը ներսի եւ դուրսի հետ, իսկ յաջորդաբար ուրիշներ, որոնց միջոցով ուսանողութեան բարձրագոյն կարգերը կը ստանային «Իրօջակ» եւ յեղափոխական զբաղանդութիւն, բնականաբար շատ դաղանի, որովհետեւ տեսութիւնը, չափ իրաւամբ, կը զրուշանար վարժարանը վտանգուած սենեկ այսպիսով:

Ահա՛ այսպիսով կը դաստիարակուէր

հայ պատանին Սանասարեանք հովանիին տակ: Եւ բարձր անձնք, որ լրացնելով դասընթացը, մեկնեցան ծննդավայր, իրենց հետ տարին այս նոյն ուղին, իրենց կարգին փոխանցելու համար գաւառէ պատանեկութեան:

Ծանօթ Հայասէր եւ զիտնական ճանապարհորդ Լինչ, Սանասարեան այցելած ասան, հետեւեալ կերպով արտայայտուած է աշակերտութեան մասին.

— Սաներու բոլորի դէմքին վրայ վեհակամուրթին կը տեսնես, որ ապացոյց է գորեղ նկարագրի մը գոյութեան: Վարժարանի հարեւարող աշակերտներուն մէջ թիւեր, աննշան թիւով բացատրելիներ միայն գտնուած են, որ չեղած են իրենց ցոյց արուած ճամբէն, կամ չեն արդարացուցած իրենց վրայ դրուած յոյսերը:

Գաղափար մը աալու համար Սանասարեանէն շրջանաւարտ դէմքերու մասին, ահաւաստի Քանի մը ծանօթ անուններ. —

Արամ Արամեան (Ալուա-Փաթուլ), Գարեգին Փաստրմաճեան (Արմէն Գալու), Միսաք Գոյումճեան (Առանձար), Տիգրան Խաչիկեան (Արղուման), Տիգրան Ամոյեան (Մամհուր), Սերովբէ Նուրատուկեան, Վահագն Քրմոյեան, Խոսրով Պապեան, Մկրտիչ Պարամեան, Փայլակ Սանասար, Յ. Տէրպէտէրեան, Արասչես Յոյսէփեան (Մայիսա), եւ այլն:

1912ին, Կարոյն «Յառաջ» թերթի կատարած վիճակագրական ուսումնասիրութեան մը համաձայն, Հայաստանի զաւազաներու ուսուցչութեան 60-65%ը եղած են Սանասարեանի ընթացակարգներ՝ կամ իրբեւ տեսուչ եւ կամ իրբեւ աւագ ուսուցիչ:

### Ն. ՍՐԻՄԱՔԷՇԵԱՆՆԻԱՆ

Տարիներ ետք, երբ պարոմ Սարգիս Հեկուխեան եղաւ, գրեթէ մութացիկ մը, յարգամբով կը բարեւէի Սուրէժ գիմը, վասնզի Մեսրոպի անձնած տառը ա՛ն ինձի ցոյց տուած էր արտօյն ուձգամ:

Ն. Ս.

## Թ ո ու ց ի կ Յ ի ւ ա ա կ ն Ե ր

Ուսանող հայկեակներուս



Միտած եմ Պասադէնը, 1870ին, աղէտալի տարի մը, ուր Ֆրանսա եւ Գերմանիա սկսան զիրար փողոտել եւ ուր պատահեցաւ Ֆերայի մեծ հրդեհը՝ առասժարդ կային զոհերով: Գուցէ այս է պատճառը, որ կեանքս եղած է դժբախտութեանց եւ ձախողութեան հետ շարք մը:

Աւանդական յարպետ տուտուէն յետոյ, ծնողքս զիս զրած են Պասադէնի Ներսէսեան յարժարանը, ուրիշ անցած են այնքան մեծ հայեր, — ձիւլայիրի մեծերայէն, Աղաթունէն մինչեւ Չերազ եւ Տէմիրճիպաշեան: Այդ պատմական շէնքը հիմակ չկայ: 1908ին, Պոլիս վերադարձիս, անիկա անյայտացած էր, ու տեղը կը բարձրանար քարէ յտիտ ու անբարբառ շէնք մը, զոր բարեդործութիւն մը կերտած էր Մութ եւ քայքայուն շէնք մըն էր առաջուանը, ուր ի սկզբան զիս նետեցին զետնայարկ սենեակ մը, չպէտքարանձախ պատկից եւ անոր հետ սերտ յարաբերութեան մէջ՝ ձեռքունին եւ որմերուն յանախոսիկ ծերպիւնէն: Իբր երկու տարի այդ տխուր եւ «նոտաւէտ»

շնորհիւն մէջ անցուցի՝ ինձի պէս երկու ժամուկներու խումբի մը հետ, եւ այսօր կը դարձանամ, թէ ինչպէս ողջառողջ դուրս ելեր ենք այդ ահռելի վերապէս:

Պարոն Սարգիս մեր յարժապետն էր, զոր հացի կարօտը միայն նետած էր կըրթական ասպարէզը: Այբուրենը այդ մարդը սորվեցուց ինձի՝ զլիտու եւ թիկունքիս վրայ փայտի հարուածներով, որոնց եթէ ոչ ցաւը՝ յիշատակը անմեռ կը մընայ ինձի համար: Տարիներ ետք, երբ քրտոն Սարգիս էմվալիտ եղաւ, գրեթէ մուրացիկ մը, յարգանքով կը բարեւէի նորէն զինք, վասնզի Մեսրոպի անձնած տառը ա՛ն ինձի ցոյց տուած էր առաջին անգամ:

Քանի մը տարիէն վեր ելանք, նախակըրթարան:

\*

80էն ետք, մեր ընդհանուր դաստիարակն էր Պ. Պիւքիւճեանը, պարթեւ

Հասակով պատկանելի մարդ մը, որ ամբողջ եօթը տարի «տէրութեամբ» քաշեց: Այդ պատճառաւ, ան անմահացաւ ինչպէս համար: 87ին, մեկնեցաւ Պատմաբանաց, եւ տարին ետքը միայն, 95ին, «Արեւելեացի» խմբագրատան մէջ օր մը տեսայ զինքը. բնականաբար չճանչցաւ զիս. կարծեմ եկած էր տեսնուելու Քէչեան Էֆէնտիին հետ՝ պաշտօնի մը համար: Իր խոչըր հասակը կըթած էր զիչ մը. մօրուքը ճերմոտած էր. չորսնկած էր. իմ պատանեկան կեանքիս է՛ն քայցը շրջանին կենդանի յիշատակարանն էր ան. մօտեցայ եւ ձեռքը համբուրեցի:

— Ձեմ ճանչնար կոր, ո՞վ ես, — քսաւ զարմացմամբ երեսս նայելով:

— Խաղիւղի վարժարանին մէջ աշակերտնիդ եղած եմ, Երուանդը, չէ՞ք յիշեր:

— Հո՞ն ինչ կ'ընես, — հարցուց:

— Խմբագիր եմ:

— Խմբագիր. ուրեմն «Արեւելեացի» մէջ Երուանդ ստորագրութեամբ տըպուած աղուոր բաները զերողը դո՞ն ես:

— Այո:

— Ձարմանալի բա՛ն, — կ'ըսէր պր. Պրեքիւնեան, — բայց որքան կը յիշեմ, դպրոցին մէջ կարդիդ յեաններէն էիր:

— Ճիշդ է:

Արդարեւ, վարժապետս շատ իրաւունք ունէր զարմանալու, որովհետեւ ամբողջ դպրոցական կեանքիս մէջ զըժբարխտաբար եղած եմ եթէ ոչ ծոյլ՝ բոլորովին թոյլ աշակերտ մը. ստոր վկայ են ո՛չ միայն ես, այլեւ՝ բոլոր ուսուցիչներս...



Ներսէսեանի մէջ ճանչցած եմ նաեւ, իբրեւ ուսուցիչ, եզական դէմք մը, — Տիգրան Մանսիկանը, որ հայերէն կը սորվեցնէր, զբաւար եւ աշխարհարար: Իրաւ է, որ բան մը չսորվեցայ իրմէ՝ թերեւս անոր համար, որ սորվելու կամք չկար — բայց իր ուղիղ նկարագիրը, ա-

նչաւ եւ արդար, մեծապէս ազդած է վրաս եւ իմ մէջն դրած է կորիզը այն ըմբոստ ուղիին, որուն զո՛հ ինկաւ վերջապէս ինք եւ որ զուցէ օր մըն ալ իմ զլիւսուս փորձանք մը բերէ:

86ին, հայրս ուղից բժշկական վարժարան դնել զիս. ես ալ կը փափաքէի աղատական ասպարէզ մը ընդգրկել. քըննչութիւնն անցուցի, թեթեւ խմբացի մը, եւ ընդունուեցայ. մինչեւ իսկ զասարան ալ մտայ օր մը: Բայց այդչափ: Չար ոգի մը վրայ հասաւ, — Գրիգոր Էֆէնտի Մարգարեան, մեր ընտանիքին բարեկամ մը, որ յաջողեցաւ համոզել հայրս, որ զիս՝ փոխանակ բժշկական վարժարանի՝ Կեդրոնական վարժարանը դնէ, որուն բացումը կը կատարուէր այդ թուականին: Հայրս համոզուեցաւ եւ զիս Կեդրոնական դրաւ: Ա՛հա թէ ինչպէս իմ պատուական ուսուցիչս եւ բարեկամս՝ Մարգարեան, զուցէ առանց ուզելու, պատճառ եղաւ, որ ապագաս խորտակուէր եւ վերջապէս ինչայի ուսուցչութեան եւ դրականութեան ասպարէզը, ասպարէզներուն ամէնէն անկախը մեր մէջ, ափսո՛ս:

Ինչուիցք. մասնք Կեդրոնական: Չբարձր հոն էր, անօրէն: Վաթսուս աշակերտ էինք, Պոլսոյ ամէն թաղերէն հոն եկած խմբուած, բոլորս ալ իրարու անձանթ: Անշուշտ այդ վարժարանին հիմը զնոցները — ամէնքն ալ մենծ աղաներ, թունդ պահպանողականներ, պատկանելի հակադիմադրականներ — այդ վայրկեանին միտուելուն անդամ չէին կրնար անցընել, թէ իրենք իրենց ձեռքորովը հիմը կը դնէին ազգային յեղափոխութեան հրաբորոք վառարանին: Ատոնցմէ ո՞մանք եաքը ձեռուրնին զլուխնուն զարկին անշուշտ, բայց եղածը եղած էր:



Կեդրոնականի անդամիկ կարգին խառնաչփութեանը մէջ շուտով սկըսան անջատուիլ այն դէմքերը, որոնք



հաքէն ցեղին փառքը պիտի ներկայացը-  
նէին դիտութեան եւ գրականութեան ա-  
մէն ճիւղերուն մէջ:

Դպրոցը բացուելէն երեք կամ չորս  
ամիս հաքն էր, որ օր մը, Չերազ՝ դա-  
սարան բերուածուսանցող զուգ եւ խար-  
անաչ ժողերով պատանի մը, աղջկան  
պէս խնկոտ եւ շիկոտ, եւ որ շարանճի-  
ններու ծաղրու առարկան եղաւ:

— Աղջիկ՝ թէ մի ծանշ է, — կը  
հարցնէին իրարու:

Ո՞վ կ'ըսէր, թէ այդ գանդրահեր  
պատանին օրին մէկը պիտի ըլլար ժամա-  
նակակից Հայ ժառանգորութեան ամէ-  
նէն արդիւնաշատ վարպետներէն մէկը,

— Արշակ Չօպանեան:

Գաղով ինծի, ամէնէն սկսանքէն  
մէկն էի շարադրութեան մէջ: Բացար-  
ձակապէս անկարող էի նրիթ մը ընդլայ-  
նել: Գախադասութիւններու խեղանդամ  
էին եւ անարիւն: Արդէն սէր ալ չունէի  
գրելու: Եարադրութիւններս այնքան հա-  
մառու էին, որ Չերազ «Նեոազիր» կ'ան-  
ւանէր գանոնք:

— Երուս'նդ, հեռագիրդ կարգա, —  
կ'ըսէր այն անուշ զմծիծաղովը, որ վար-  
ժարանին հմայքն էր:

Տիւրք եղաւ կեանքս Կեղզոնականի  
մէջ. Չօպանեանի, Գարեպեանի, Եսայ-  
եաններու, Միհրդատեանի, Տէր-Պաշա-  
ատուրեանի, Սիւքերեանի, Մանուէլեանի,  
Մեծարպեանի պէս կարկառուն եւ ուժեղ  
միտքերու ու կամքերու քով՝ իմս մնաց  
նկուն, աննշան, վաատի: Իրաւ է, թէ  
ինծի պէս շատեր կային, որոնք ինծի պէս  
կէս ճամբան թափփփեցան՝ ապարէզը

թողով արժանաւորներուն: Հովառակ  
սակայն անյաշնողութեանս, կրցայ առա-  
ջին սարին բուրբիլ եւ անցնիլ Բ. կորդ,  
որ արդէն բուսական դասուած էր:

Այս երկրորդ սարին, Կեղզոնականի  
ասճաններուն մէջ երեցաւ նոր շէճ  
մը, շրտեմ նոր փորձանք մը, Յովհաննէս  
Շահնազարը, իբրն ուսուցիչ, կարծեմ  
իշտապիտութեան: Եթէ բռեմ, որ այս  
մարդը կառարկապէս սարսափաւոր է-  
րած էր դիտ եւ բնկերներէս շատերը, հա-  
ւասացէք, որ չափազանցութիւն չէ:  
Աստուած իմ, ի՞նչ խոժոտութիւն, ի՞նչ  
արհամարհանք, ի՞նչ անխորտակելի գա-  
ժանութիւն: Եւ անշուշտ, իբր քառորդ  
դար հաքը սակաւին իրճէ պահած սար-  
սափս էր պատճառը, որ մերձեցի սասնե-  
նել «Հայրենիք» իմբադրական ժառն  
անօրէնութիւնը, զոր Շահնազար էֆէն-  
աի ինծի առաջարկեց 1909ին: Իրաւ է  
սակայն, որ անկէ առաջ, 1908ին, չէի  
կրցած մերժել աշխարհաբարի դասախո-  
սութիւնը, զոր ինծի յանձնեց Կեղզոնա-  
կան վարժարանի մէջ, եւ կեանքիս ամէ-  
նէն քաղցր յուզումներէն մէկը ապրած  
եմ այն օրը, երբ Շահնազար դիտ ներ-  
կայացուց Կեղզոնականի ուսանողու-  
թեան՝ ամէնէն փառաբանական բառերովը,  
որ երբեք բխած ըլլան աղնիւ հողիէ մը:

Եւ ճիշդ այն դասարանէն, ուր կը  
ներկայացուէի իբր դասախոս Հայրենի,  
ուսելի քան քառորդ դար առաջ մեկնած  
էի՝ հողիս ախրութեամբ եւ յուսաւա-  
սութեամբ լեցուն, իբր ուսման անբե-  
զունակ աշակերտ, աննշան ու եղկելի:

ՅԵՐՈՒԱՆԳ ՄՐՄԱԲԷՇԵԱՆԼԵՆՆԵՆ



# ՄԵԼԻՈՆ ԿԻՐՔԵԱՆ

Իրոն էր, որ մեզի կը բերէր իր դասնաբուն հետ, գանձով համեմտով իր հայազնու քեան անսպառ նորութիւններով, որովց ծարաւի էլ միշտ մեր կոչս ու սպասանքի էութիւնը, եւ տերեւի մը պէս կը դողար իր շունչիլ տակ: Անբողջ լեզու մըն էր, որ իր գանձերով, իր երաշայլէմներով կը մատուցուէր մեր շքեցեցեաց, իր բարձուրեանք գրգռելով ու մահու բարձրով մեր հոգին, որ զայն կը խմէր զինիի մը մեան, զայն կը մաշակէր իբր հաց եւ մամուռայ: Անբողջ դպրութիւն մըն էր, որ կը փայլատակէր դասարանին մէջ, իր պտղատատ քերթով եւ շլացուցիչ յաղթանակներով, իր պահակներով, որոնք կոչուեցան Կորիւն եւ Նդիշէ, Եզմիկ եւ Փաւստոս, Անյաղք, Պարթեւ կամ Գլակ, եւ որոնց բանք կը բռնկէր արշալոյսէն առաջ, ու դեռ կը վառէր պատմութեան մայրամուտէն յետոյ:

Այս ուսուցիչն էր Կիրճեան, համարուրութիւնը իր ժողովուրդին երակներէն հոսոյ կենսունակութեան, որ մեջնացած էր իր հարուստ մտքին եւ զգայուն հոգիին հետ, մերք կ'ըլլար վերացում ու մեզ կը տանէր գաղափարական առաջին վայելքներուն, մերք պաշտամունք կ'ըլլար եւ մեզ կը հրախիւրէր սիրելի դարէ դար փոխանցուող մատուցները, բայց յամախ կ'ըլլար գասում եւ խաբազան, եւ խստօրէն կը սաստէր անհատները:

Սեղանին դէմ կեցած իր պարզութեան եւ մաքրութեան մէջ, ձայնը՝ խորունկ եւ յուզումէն մրրկավար, Մելիոն Կիրճեան պանքէն մըն էր անբողջ, որուն դուռները լայնօրէն կը բացուէին եւ մեծ սխրանքով կը դիտէինք սերունդներու կերտած մտային յիշատակարանները:

Դեռ գինի կը տեսնեմ դասարանէն ներս, իբր հաւատքի ու տառապանքի մարդկային արձան մը: Դեռ կը լսեմ իր ջերմեռանդ ձայնը, որ կը պատգամէր ամենուս.— «Սիրեցէ՛ք ձեր մայրենի մշակութիւնը եւ Հաղորդուեցէ՛ք գրականութեանը»: Ո՛չ մէկ խօսք այնքան խոռվիչ արձագանգ մը պահած է յիշողութեանս մէջ, որքան աղաքակը այս հոգը Բալուցիին: Ան կու գար իր գաւառի լեռներէն, ձորերէն, ամփոփելով իր ներքին տիեզերքին մէջ այդ պանծալի բնութեան անմահ գնդեցկութիւնը, անոր բուրբերուն, աղբիւրներուն, ակերուն հեփաբային զլլանքը, անոր բարձուրներուն դարուր պատմութիւնը, եւ հովը, որ կը փչէ անոր սարերէն ու կ'իջնէ մրցիւն ձիւնապառ կիրճերուն խորունկը:

Մելիոն Կիրճեան այս ամառու-

Գ. Ս Տ Ե Փ Ա Ն Ե Ա Ն



Ամեն մի հայ երկու անուս պետք է լաւ յիշի, մէկ՝ Մեծարդ Մաշտոցի անուանը, մէկ էլ այն ուսուցչի, որ առաջին անգամ մեծարդեան տալիսը սովորեցրել է իրեն: Է՛նչ տառը ուսմից որ սովորել ենք, նրան երախտագարտ պիտի մնանք մինչեւ մեր կեանքի վերջը:

Հ. Ա.

Ա Հ Ա Ռ Ե Ա Ն Ի Հ Ե Տ

... Յաջորդ օրն արդէն ինձ ընդունեց աւելի դուարթ, թուաց թէ նոյնիսկ սպասում էր:

— Որտե՞ղ էինք հասել, — հարցրեց ուրտի արտմազրութեամբ:

— Կենտրոնական վարժարանն աւարտեցիք. նկարագրում էիք ջննութիւնները:

— Հա, — ասաց, մի պահ խորատուզուց մտքերի մէջ, շարունակեց, — տարբեր էին այն ժամանակները:

Պօսեց ուսուցիչներից Ե. Տէմիրճիպաշեանի մասին, ասաց, թէ նա է իրեն մղել դէպի սանսիբարը, հնդկական փիլիսոփայութիւնը եւ եղել է իր ատարին զնահատողներից մէկը մամուլում: Յետոյ արդէն խօսեց նրա հիւանդութեան մասին, ասաց, թէ հնդկական խախտման նշանները նկատելի էին դեռեւս 1890ական թուականների սկզբներին: Պօսեց Մեղքոն Կիրճեանի մասին, որը Երուսաղէմում ապագրուած հայ եկեղեցու պատմութիւնը թեւեւ ասի, լեչուի փոխարէն փաստօրէն հայ ժողովրդի պատմութիւնն է դասաւանդել դաղանի, որ եթէ իմանային, կ'աքսորէին:

— Առհասարակ մեր Կենտրոնական վարժարանի մթնոլորտը շատ էր հայրենասիրական: Առաջ, երբ դպրոցի տնօրէնն էր Մինաս Զերազը, համիդեան խտրութիւնները դեռ ծայրայեղ ատարճանի չէին հասել, իսկ Մոստիշեանի շրջանում լրտեսները վիտում էին շրջապատում: Նոյնիսկ այդ պայմաններում մեր ուսուցիչները գտել էին ձեւեր՝ հայրենասիրական դաճափարներ հարգողնու սնդ: Մտեղծուել էր եղողոսեան մի լեզու, որը օգտակարում էին շատերը: Իսկ թուրքական դրաքնութիւնը գլխի չէր ընկնում: Այսպէս, արգելուած նուններ էին Արովեանն ու Նալբանդեանը. մինչդեռ մամուլը համարձակօրէն խօսում էր նրանց մասին, միայն թէ՛ Արովեանին կոչում էր Քանաքեռցի Կաշատուր, Նալբանդեանին՝ Պայտարեան Միքայէլ: Գրաքննիչները դարակում պահուող արգելուած անուններից ուղեակում ո՛չ Պայտարեան կար, ո՛չ Քանաքեռցի Կաշատուր: Տիմար դրա-

քննիչի ինչ խնդրի բանն էր հիմանաւ, թէ զբանք ճննչ Արոյկանն ու Նարանդեանն էին: Արբաճամ Այվազեանք էր ճշարտ այ կենսագրութեանց զբրում յատուկ գլուխներ յատկացրեց Նալրանդեանին եւ Արոյկանին նոյն այլ եղանակով եւ ոչ ոք էլ չիմացաւ: Բայց ամէնից համարձակ քայլը կատարեց Ամբաս Դաւթեանը: Դու գիտե՞ս նրան, — Նարբեցի:

— Կարգացել եմ. եղիւ է սուսուցիչ, բանասէր, ճնդիտակէլ է դասուորքեր:

— Այո, բայց նրա ամենամեծ դարձը 1890ական թուականներին, այնքն՝ համիդեան բռնութիւնների ամենախտապօրոյն շրջանում Մ. Նարանդեանի յայտնի «Ազատութիւն» բանաստեղծութիւնը սպազրել ու մեր սեղաններին դնելն էր:

— Ի՞նչ էք ասում:

— Հասարձ: 1880 թուականից սկսած այդ բանաստեղծութիւնը խափարդնուած էր: Բայց ազատարարձ երեսասարդութիւնը ուզում էր ինչ գնով լինի ձեռք բերել այն եւ արտագրել, անդիք անել, դազանի երգել: Եւ ահա Դաւթեանք գտնում այն տարածելու շատ իւրայատուկ ձեւ: Իր հրատարակած «Փունջ» րնթիւնը բանում զետեղում է այդ բանաստեղծութիւնը՝ ամէնուր չազատութիւն» բառը փոխելով «աշխատութիւն» ու կարող էր արգելել աշխատանքի գովքը:

Բարձրեայլն Աստուած այն օրից,

Երբ հանցաւ շունչ փշել

Իմ հոգամիւթ շինուածքին

Կենդանութիւն պարգեւել:

Եւ անբարբառ մի մանուկ

Երկու ձեռքս պարգեցի

Եւ իմ անգոր թեւերով

Աշխատութիւն գրկեցի:

— Յետո՞յ:

— Յետոյ մենք այդ դասագիրքը պահելու եւ օգտագործելու իրաւունք ունէինք: Այժմ կարիք չկար արտագրել «Ազատութիւնը»: Վերջնում ամէնուր աշխատութիւն բառը դարձնում էինք ազատութիւն եւ մեր արամադրութեան տակ ունենում էինք Նալրանդեանի հայրենասիրական բանաստեղծութիւնը՝ սպազրուած:

— Հրաշտի գիւտ, — ասացի, չկարողանալով զսպել զարմանքս:

Ի՞նչ նման շատ բաներ պատմեց: Դրանք ինձ համար չափազանց ճետազբբական էին, քանի որ զբաղում էի արեւմտահայ գրականութեամբ, հասարակական մտքի պատմութեամբ:

Յաջորդ օրը Հանրային գրադարանում դոսայ թէ՛ Այվազեանի դիրքը եւ թէ Մ. Դաւթեանի «Փունջ»ը: Միանգամայն ճեշդ էին նրա յիւղուրթիւնները: Իսկոյն լուսանկարել տուի երկուսն էլ: Դրանք եւս օգտագործեցի ճննչ Աճառեանի կենդանութեանը լոյս տեսած իմ ընդարձակ յօդուածում զբաղալքարի մասին, իսկ ճետազայում արդէն՝ լուսանկարներով՝ «Նալրանդեանի «Ազատութիւն» բանաստեղծութեան հարիրաւմայ կեանքը» խորագրով յօդուածում:

Առաջինը երբ կարգաց, ուրախացաւ, արաց:

— Թող պատմութիւնը չմոռանայ զաւառացի այդ ազնիւ ուսուցչին՝ Դաւթեանին:



### ԹԼԿԱՏԻՆՑԻՆ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԿԵՏ

Հիմա կուան պէս միտքս է դեռ առաջին օրս Թլկասիցիի դասարանին մէջ: Մէկ կողմը, պատուհանին առաջը՝ նըստարաններու շարք մը տեղաւորուած էր: Դիմացը՝ սեւ պատը: Վերի կողմը՝ խաշոր գրասեղան մը, թերթերու դէղ մը վրան: Ետեւը, պատին ճակատը՝ Թլկասիցիի նկարը, որ գործն էր ու նուէրը իր աշակերտներէն մէկուն, Չաւէն Եսփիւանի:

Նստարանները գրաւուած են բոլորն ալ: տղաքը ցած ձայնով կը խօսին, կը կատակին իրարու: Հետո՛ւ Դուռը կը բացուի: Չայները կը մարին, դէմքերը կը լըրջանան: Կամացուկ մը, կատուի քայլերով՝ ներս կը մտնէ ուսուցիչը: Յովհան-

նէս Էֆէնտին: Ոտքի վրայ են տղաքը, մէկ շարժումով, կարծես միեւնոյն զըսպանակէն ազդուած:

— Բարե լոյս, տղա՛ք, — կ'ըսէ Թլկասիցին, ժպիտը աչքերուն: Եւ ձեռքով նշան կու տայ, որ նստին տղաքը: Հայրական բան մը կայ իր շարժումներուն ու նայուածքին մէջ, որ ժպիտին տակ անդամ տրտմութեան ցոլք մը կը պահէ կարծես:

Հասակը միջակ է. միջակէն ալ քիչիկ մը վար թերեւս:

— Պաշտօնապէս «Քաճմարան»ն է ձեր դասադիրքը, Անտոնեանի կազմածը, — կ'ըսէ, — կր կարդաք զայն մաս առ մաս եւ միասին կր խօսիք տրուած կտորներուն եւ հեղինակներուն մասին: Բայց ես դասադիրքի չեմ հաւատար այնքան. գրականութեան դասադիրքի՛ ըսել կ'ուզեմ: Դասադիրքը մենք ենք, ես ու դուք, եւ կեանքը, որ կը յորդի ձեր շուրջը, ամէն օր, ամէն վայրկեան:

«Փառք ընդ, Աստուած», կ'ըսեմ մըտքիս մէջ, ժպիտ մը զսպելով: Կը նկատեմ, որ ընկերներս ալ դո՛ւ են ինծի պէս:

— Բայց չկարծէք, թէ դիրտութեամբ պիտի աղատիք ձեռքէս, — կը շարունակէ մեր ուսուցիչը, — շարաթը մէկական շարադրութիւն անպայման՝ իմ պահանջն պիտի ըլլայ ձեզմէ: Նիւթերնիդ ես կու տամ երբեմն, բայց դուք կ'ընտրէք յաճախ, պայմանաւ, որ մտնաք ասուցիներն ու լուսինը, վարդն ու սոխակը, եւ ոտքերնիդ դնէք կարծր, իրական դետնի վըրայ, կեանքի դետնին վրայ:

Այս կամ ասոր մօտաւոր խօսքով մը մեր ուսուցիչը՝ Թլկասիցին, նոր ու լուսաւոր ճամբայ մը կը բանար մեր պատանեկան միտքերուն առջեւ, որ մինչեւ այդ օր՝ աղայական երազներու մէջ խաբխափեր էին, կամ դետնէն վեր, ամպերուն մէջէն քայր էին կարծես:


Դասի պահանջն, յոճարն մեղի կը կարդնար իր՝ նոր դրած կտորները, թերթերուն զրկելէ առաջ: Այս ընթերցումներն ալ մէկ-մէկ դասախօսութիւններ կ'արժէին՝ իրենց ընկերացող խօսքերով:



Ս. ՅԱՎՈՐԱՑ ԹԱՎԸ, ԽԱՐԻՆԻՐ՝  
ՎԱՐԸ՝ ՀԱՄԱՆՈՒՆ ԵՎԵՂԵՑԻՆ ԵՒ ԹՎԱՏԻՆՑԻՆ ԴՊՐՈՑԸ

և վայրկեանէն թելադրուած սրբազրու-  
թիւններով: Մեր աշակերտութեան տա-  
րիներուն (1910-1913) դրած եւ մեզի  
կարգացած է իր ստեղծագործութիւննե-  
րէն «Քարէ գիրքեր»ը, «Մագաղաթէն ալ  
հին՝ քանկագին»ը, «Կուլիկն ու վարժա-  
պետը», երեքն ալ այդ տարիներուն ե-  
րեցած իզմիրի «Հայ գրականութիւն»  
ամսաթերթի մէջ: Նոյնպէս՝ «Կոստի»ը  
և «Իէպի արտասահման» թատերախա-  
ղերը — մէկ արարուածով — որոնք, եր-  
կուքն ալ, թարմ վիճակով բեմադրուե-  
ցան դալորցին մէջ, իր աշակերտներուն  
կողմէ, Թլիատինցիին իսկ ղեկավարու-  
թեամբ: Իր «Ձալըմ տղան» թատերգու-  
թիւնը — Հինգ արարուածով, որ ատե-  
նին լոյս տեսած էր Թիֆլիսի «Մուրն»  
հանդէսին մէջ, ներկայացուեցաւ նոյն-  
պէս, բայց Հիմնովին սրբազրուած: Իր  
ձեռագիրներուն ցաւաղին կորուստներէն  
մէկն է այդ թատերգութեան վերջին ձե-  
ւը, որ ով գիտէ ի՞նչ կրակի կամ ի՞նչ  
խորշի գո՛հ գնաց՝ 1915ի այն սեւ օրերուն:  
Թլիատինցիին յաճախ մեզի կը կար-  
դար նաեւ Հատուածներ օրուան հայ դրա-  
կանութենէն: Յակոբ Քիւֆէճեանի — որ  
յետոյ պիտի ճանչցուէր Օշական գրչա-  
նունով — առաջին պատմուածքները,  
«Խոնարհներ»ու շարքէն, դուռեր էին իր  
ալ ուղադրութիւնն ու Համակրանքը: Օր

մը մեզի կարգաց այդ նորահաս գրագէ-  
տին «Հօրհօր վարդան»ը «Հայ գրակա-  
նութիւն» ամսաթերթէն: Միտքս է դեռ  
կմախքը այդ ընթերցումին, եկեղեցիի  
մը ստուերոտ ներքնամասովը:  
Մեր շարաթական շարագրութիւննե-  
րուն հանդէպ այնքան խիստ էր մեր ու-  
սուցիչը: Բայց կը զգայինք, թէ հօր մը  
խստութիւնն էր այդ, որ բարի էր խոր-  
ջով եւ շինարար: Սկսնակի մեր դրական  
փորձերը տուն կը տանէր հետը, կը կար-  
դար Համերանջով եւ կը վերադարձնէր  
իր դիտողութիւններուն հետ, զորս կ'ը-  
նէր բերանացի, երբեմն ալ դրաւոր:  
Ու իր թելադրանքները չոր խօսքե-  
րով չէր, որ մեզի կու տար Թլիատին-  
ցին, այլ իր իսկ դրական փորձերուն ու  
լրացուցած գործերուն կենդանի օրինա-  
կովը: Միշտ ալ կը զուշացնէր մեզ ա-  
ծականներու գէղին շարքէն, որ, կ'ը-  
սէր, ինքն իր վրայ կը փըւ եւ կը փլցնէ  
ձեր փորձերը:  
Իր մեծագոյն հողերէն մէկն ալ ա-  
շակերտներու պատրաստութիւնն էր: Իր  
ուրոցի տաղին շրջանաւարտներէն է  
Ռուբէն Զարդարեան, որ շարունակեց  
Թլիատինցիի բացած ճամբան, զայն աւե-  
լի լայնցնելով եւ յղկելով, ու մեր դրա-  
կանութեան ասլով «Յայգալոյս»ի նման  
արժէքաւոր էջեր, որ կ'ապրին դեռ:



Վերջապահից եւ Քրիստոսափոխից իմ արարտի, հապա ուսմ' ըր...

Երկար խորհեցի, ճար չկար. զհաս էր անել Ա՛ ձէկը, Ա՛ ձիւսը. անհասցին էր ձերեկ Քրիստոսափոխին: Ո՛չ ձիւսն ըրքանից ամաչում էի, այլ նոյնիակ անբարեկամի, խորհրդաւոր վախ զգում: Հետեւեալսց յետոյ, նրա ձայնը երկար ժամանակ հնչում էր իմ ականջներում:

Եւ վեհաբար զբեշ ձեռք տառյ, իմ տառջին պատճառածքը պատրաստելու Վերջապահի համար: Գրեցի ձի թափով, սցեսքով թեւաք, եւ անպէս երջունիկ էի, որ կարող եմ այն ժառույցանէլ Քրիստոսափոխին: Վեհաստութեան ճանապարհին՝ սերային տառջին պատճառածքն էր: Սեռ՝ ձիւսայնս պատանն յանձնեցի, Վերջապահի հասցեով: Երկու որ յետոյ, Շարքով, ճառչից փերթ շատակցի ժրննէ, հենց անպէս դրստանքի, բայց իրօք ձիւսայն Քրիստոսափոխի կարծիքը յսելու իմ տառջին զեղարուեստական պատճառածքի ժառն:

Ներս ժառյ Վերջապահի խմբակրատուն, որտի թրթրով կանդ տառյ զբան տառջ, Քրիստոսափոք բարձրացրեց զյուսք սեղանից, ակնոյնների վրայից նայեց իր հմայիչ ձայնով եւ բաղդրութեամբ տառյ:

— Հը, տառն էի անք, որ զա իր զորան է, լուրթ տունց քայքայ, զէ, շիբբ աչտուհետեւ:

Մեծապէս զուխառն էր: Մի գուպրեի վարպետութեամբ, որ անպէս ստղում էր նրան, երկրից հասած սրտաշայ իր ճերտապատում նամակներ, ընկերների յիշողութիւններ գրումամբ զգիւում էր ինձ կարգալու, իբր թէ հետաքրքրութեան համար, բայց իրօք ինձ զեղարուեստական երկերի նիթ ժառակարարելու գուպտի ջաննութեամբ: Եւ ես բաղում էի այլ նիթերը՝ Վեհաստութեան ճանապարհին՝ իմ պատկերներէ համար: Եւ ինչ որ զրեցի, ամբողջ Քրիստոսափոխի բարձր, արնուական ներշնչումով է եղած: Ստանց Քրիստոսափոխի Վեհաստութեան Շարքապարհին չէր գրուի:

## ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒԵՑԱԻ «ԱՍՏՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊՈՒՅԻՆ»

... Հապի ժրննէ հուամ, նոյն թախ արնանք, նա ձի որ եկաւ Լոյսն, զտու ինձ, երկար խոսեց, բացատրեց ձեր հարցի վիճակը, ձեր ժողովուրդի կամը հոգեկան ծանր տայնայն ու յեկուժք, հուսանն ամբարայնելու անհրաժեշտութիւնը: Խոսեց, համարեց, հմայեց ինձ՝ իր թառ, սրբերգական ձայնով, եւ պարտադրեց փարսիկ պատկերներ դրան Վերջապահի համար: Եւ տառջին իսկ պատկերի նիթը ինքն տունց ու գնաց: Գնաց եւ ես ժառցի խորունկ ժառանգով ձեզ:

Ա. ԱՆՍՏՆՈՒՆԻԱՆ

Կ. Պ Ա Լ Ժ Ե Ա Ն  
(ՎԱՋԳԻՆ Ա. ԿԱՌՈՎԻԿՈՍ)

### ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ՈՐՈՎԷՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Խրիմեան սովորական մարդ մը չէ, եւ ոչ ալ սովորական դաստիարակ մը: Առանց վարձան մը կրնամք բռնել, յէ ան մեծագոյն դաստիարակներէն մին է ո՛չ միայն հայկական շահերով, այլ ամբողջ գործը կրնայ փաստօր տեղ մը գրանցել աշխարհի մեծ մանկավարժներու շարքին, որպէս ինքնաստիպ ստեղծագործող:

Գաստիարակ Խրիմեանը, համեմատելով կարգ մը համբաւ ունեցող մանկավարժներու հետ, չես կրնար չառնել ու չհաստատել, յէ անմէկ ինչքան փոքր իր քույրն ալ դաստիարակին առողջ մտքերուն ու հզօր շունչին հով:

Ինչեւ՞ն շատ հեռագրուցիք եմ: Անք աչքերուն առջեւէն ալն զմայլելի հայելին, որ Խրիմեանի գործն է:

Հասկնալու համար Խրիմեան մեծ դաստիարակի մտայնական ուժը ու այն խնայար սպիտակութիւնը, գոր ունեցած է, հարկ է չիշել իր մէջ ուրիշ կրթական յատկանիշք, յատկանիշք, որ Խրիմեանին կու տայ առաջնայի շունչ, մարդոց հոգիներէն մերս բախանցելու ու փոքրիկներու անասնոստ կայրուութիւն: Այդ իր բաժանատեղի զգայնութիւնն է, որ Քիչ մանկավարժներու տրուած է:

Խրիմեան մանկավարժութեան մէջ չէ, որ բանաստեղծ է. սրտիկեանք երբեք իր դաստիարակին ու մտածումը չեն շնորհիւ իրենց բնական ուղիէն, եւ բանաստեղծական բոլոր երբեք չ'ալայայտեն իր մտքին նշգրտութիւնը ու յստակութիւնը:

Խրիմեան սակայն մեծ դաստիարակ մըն է, որ իր ձեռքին մէջ ունի բացառիկ միջոց մը եւս, մտայնական գործիք մը եւս՝ իր դաստիարակչական խօսքը աւելի չեքմ, աւելի բախանցող, աւելի մտայնելի ու հասկանալի գարնանկալ համար:

Առանտագէտի բոլորքն ու առաջնային շունչն են, որ իր խօսքը կը դարձնեն առեւ ու զուտար, իր խօսքը՝ համոզիչ, իր պատուէրը՝ կյանքիչ, իր սաստը՝ ազգու:

Թող շնու տառօրինակ չբուրի, երէ բանեք, յէ ապագային դեռ շատ պիտի խօսուի ու գրուի Խրիմեանի մասին, ո՛չ միայն որպէս «գաստիարակ գէմէ», այլ որպէս դաստիարակի հայ մտայնութիւն: Պիտի խօսուի մեծամասն աճող այժմեանքեան մասին:

Եւ գուցէ պիտի մնայ բնգովիշա այժմեակեանք, որպէս ՀԱՅՐԸ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐՃՈՒԹԻՒՆ:



# ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԳԸ ՏԱՐՈՆԻ ՄԵՋ

1862ին, Մկրտիչ վրդ. Խրիմեան ընդունելով Ս. Կարապետի վանահայրութիւնը եւ Տարօնի առաջնորդութիւնը, Ս. Կարապետ կը փոխադրէր իր տպարանը՝ «Արժուիկ Տարօն» թերթը հրատարակելու, իրեն հետ կը բերէր իր օգնականները՝ մշակութային աշխատանքի լծուելու եւ, մանաւանդ՝ իրեն հետ կը բերէր հայութեան ազատութեան գաղափարը, Տարօնի կորովի ժողովուրդը այդ նպատակին յենարան ունենալու, ճիշդ Յովհաննէսի սկիզբներէն պէս:

«Արժուիկ»ի թերթարական յօդուածները եւ Հայրիկի ազատասանէջ քարոզները՝ ուղղուած Տարօնի ժողովուրդին, դաս կը մղէին լուսաւոր ապագայի մը, Ս. Մեսրոպի եւ Ս. Սահակի ճանապարհով, դէմքեր, որոնք այնքան խօսուելէին ասրոնցիներու սրբին: Ու ապա, ազատութեան ձգտումը, իրաւունքի պաշտպանութիւնը, դայլերու դէմ առիւծ դառնալու թերթարանքը ո՞ր ժողովուրդին կրնային խօսիլ աւելի, քան Մամիկոնեան քաջերով փառաւոր անցեալ ունեցող ժողովուրդին:

Դեռ 1878էն սկսած Պոլսոյ Հայութեան ուշադրութիւնը կը կերպրոնանար Տարօնի վրայ: Համազգային նպատակներու համար Տարօնի լուսաւորութիւնը առաջնակարգ խնդիր մը կը դառնար: Ու ապա, Պոլսոյ մէջ կազմուած Միացեալ Ընկերութեան առաջին միջնակարգ դրպրոցը կը բացուի Մուշի մէջ՝ Մշտյ Կեդրոնական վարժարան անունով:

Գաղաքական եւ ընկերային խնդիր-

ներէն ծագում առնելով՝ կրթական եւ մտաւորական կեդրոն մը կը դառնար նորահաստատ միջնակարգ դպրոցը Տարօնի աշխարհին համար: Միացեալ Ընկերութիւնը կը ստանձնէր Կեդրոնական վարժարանի ամբողջ ծախքը, անշուշտ որով ժանդակութիւն ստանալով Պոլսոյ պանդուխտ տարօնցիներէն, որոնք Միացեալ Ընկերութեան մասնաճիւղ մը կազմած էին՝ Տարօնի լուսաւորութեան համար:

Հայոց պատմութեան վերջին 150 տարիներու ընթացքին ամէնէն լուրջ եւ ամէնէն ծաւալուն կրթական շարժումը Միացեալ Ընկերութեան շարժումն է: Թէեւ Կիլիկիոյ, Տրապիզոնի, Վանի, Էրզրումի մէջ ալ կրթական ձեռնարկներ անէր այս համազգային ընկերութիւնը, առկայ իր գործունէութեան դիվաւոր միջոցաւորը ընտրած էր Տարօնի աշխարհը:

Միացեալ Ընկերութեան Մշտյ Կեդրոնական վարժարանը միայն Մուշ քաղաքին համար չէր, որ հիմնուած էր: Հոն էր դայլին Մասունէն, Խնուսէն, Մշտյ դպրոցն եւ այլ գաւառներէ աշակերտներ:

Կեդրոնական վարժարանը 1878ին կը բացուէր 80 աշակերտներով եւ տարուէ տարի կ'աճէր աշակերտներու թիւը: 1885ին դպրոցը կու տար իր անդրանիկ շրջանաւարտները, որոնք անմիջապէս կը լծուէին կրթական գործին՝ Միացեալ Ընկերութեան նոր բացած դպրոցներուն մէջ:

Միացեալ Ընկերութիւնը չրաւականացաւ Կեդրոնական վարժարանով: Աստիճանաբար նոր դպրոցներ բացաւ Տարօնի գաւառներու կեդրոնական դիւղերուն մէջ, շրջակայ գիւղերուն ալ կրթութիւն տալու համար:

Դպրոցական այդ ցանցը եռանդուն նոր կեանք մը կը ստեղծէր Տարօնի աշխարհին մէջ, կրթական եւ մտաւորական վերածնունդի շրջանի մը մէջ մտցնելով Տարօնի ժողովուրդը: Շրջաններու գիւ-



ՎԱԳՆ ՍԱՐԱԲԻԱՆ

զական զպրոցները պարտաւոր էին շքեղակայ դիւղերու աշակերանները ընդունել եւ տուններու մէջ տեղադրել:

Մշոյ Կեդրոնականը աւարտած կամ անկէ թերաւարտ դէմքերէն կրնանք յիշել Հրայրը, Մշոյ Գեղամը, Գալուստ Անդրէասեանը, Անդրանիկ Սայեանը, Յովհաննէս Սաչիկեանը, Հայրապետ Համաճեանը, Գէորգ Մարդպետունին, Մուշեղ Նարպանտեանը, Մկրտիչ Բոլճեանը, Կստնէնի Մկրտիչը, Գոմսայ Կոբինը, Սասնոյ Սեմալ դիւղէն իշխան Մանուկը, Կոփեյի Մուշեղը, Վահան Պարոյեանը, Սլիւնի Արշակը եւ Վաղարշակը, Մօրուք Կարոն, Կայծակ Վաղարշակը, Կոտոյի Հաճի Յակոբը եւ այլ դործիչներ եւ ուսուցիչներ:

Ասոնց շարքին կրնանք դասել դասաւանդու մէջ հիմնուած զպրոցներէն աւարականներ, որոնք իրենց շնորհներու մատուրական վարիչները Հանդիսացան, ինչպէս Պուլանուխի Միհրան Գրիգորեանը, վարդենիոցի Հասրաթը, Մարուար Վարժապետը, ահարոնցի Գալուստը,

Արրահամ եւ Գէորգ Սասունցիները, Ֆարդինի Մանուկ Դանիէլեանը եւ Լուսինը, Մշոյ դաշտի Աւրան դիւղացի Արամը եւ ուրիշ բողոքաբիւ դէմքեր, որոնք Տօրօնի պատմութեան մէջ երեւան կու գան գերով մը:

Տօրօնի կրթական վերածնունդի այս մտաւորական պտուղները նոր թափով եւ ազատութեան դիտակից տենչանքներով կը լծուին հասարակական եւ աղատադրական գործերուն, պատմական անցեալի փառքը նոր փառքերով սրակելու համար:

Միացեալ Ընկերութեան այս լայն գործունէութիւնը մտաւորական թարմ շարժում մըն էր՝ դիտակից եւ երեսասարգական շունչով առցարուն: Շարժումը կաղզուրիչ եւ ոգեւորիչ էր իր նորութիւններով, որոնք հիմնովին կը յեղաշրջէին վանական հին խեղճուկ ձեւերը: Դասադիւրքերը նոր, ուսուցիչները պատրաստուած, երիտասարդ եւ մանկավարժ, դասաւանդուած նիւթերը նոր եւ հեաաքըքրական էին, որով՝ նոր շունչով երիտասարգութիւն մը կ'առաջանար: Հասարակութիւնն ալ կ'աղզուէր այդ շարժումէն եւ կ'ընթանար կրթական զեկաւարներու ճանապարհով:

Միացեալ Ընկերութեան Մուշի Կեդրոնական վարժարանի անսուչն էր Մկրտիչ Սարլեան, Տօրօնի աշխարհին մէջ գործող բացառիկ անձնաւորութիւն մը, լայն չափանիչերով կրթական մեծ գործիչ մը, որ եղաւ նաեւ հայ աղատադրական շարժման առաջին ասանմեակի (1879-1890) գլխաւոր վարիչը Տօրօնի մէջ:

1880-1890 թուականներուն Մկրտիչ Սարլեանի շունչով ու զստախարակութեամբ էր, որ Տօրօնի եւ անոր ղլխաւոր դասաւանդներուն մէջ հասունցաւ յեղափոխական եւ մատուրական սերունդ մը: Տօրօնի աշխարհը հարիւրաւոր դէմքեր հաշուէ Մկրտիչ Սարլեանի աշակերտներէն, որոնք ուշագրաւ դեր մը կանդնումներէն, որոնք ուշագրաւ եւ յեղատարեցին կրթական, հանրային եւ յեղափոխական ասպարէզներուն մէջ:

# ՈՒԹԷՆՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԻՐՐԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ապրեցաւ եւ խորհեցաւ իբրեւ դաստիարակ: Որովհետեւ ինչ որ այ եղած ըլլան այն գանգաւն ասպարէզները, ուր պարգուեցաւ Պերպէրեանի գործունէութիւնը. դաստիարակը. որ կը նշմարուի կամ կ'ընդհնմարուի ամէնուն ալ խորը: Առաջին օրէն մինչեւ վերջին օրը՝ ուսուցչութիւնն անոր կեանքը, անոր երջանկութիւնը եղաւ: Գեղեցիկը. Բարին, շնորհալիցը քարոզեց ան իբրեւ երեսման խան. իբրեւ Քաղաքական Ժողովոյ կամ Ուսումնական հարկողոյ անդամ, ինչպէս կը քարոզէր իբրեւ դաստիարակ՝ դպրոցին մէջ. եւ դաստիարակութեան դատին նուիրեց նախամեծարութեամբ՝ իր գրիչն ու լեզուն: Ուսուցիչ եղաւ ան՝ իր կեանքին բոլոր բովանդակներուն մէջ. — դպրոցը, դպրոցէն դուրս, պտոյտի միջոցին, նաշի ատեն, միշտ. անդադար. ամէն տեղ: Առանց չափազանցութեան կարելի է ըսել, թէ հայ վարժապետութիւնն իրմով սընձաւ ամբողջ քառորդ դար:

Իր սաները սիրելով իր կեանքէն աւելի, անոնց համար միշտ աւելի օգտակար ըլլալու, գանձեմ միշտ աւելի բարձրացնելու համար՝ ինքզինք միշտ աւելի

բարձրացուց, ի զին ամէն գոհողութեանց, ի զին իր կեանքին: Ազգային ծնողաց զաւակ, հազիւ նախակրթութիւն մը ստացած թաղային դպրոցէն մէջ, Պերպէրեան համայնագիտական բարձր ուսուցանմամբ մը օտոնց ինքզինք՝ ինքնաշխատութեամբ:

Երկու սկզբունքներ վարած են միշտ զր վարժարանը. —

Ա. — Կրթական գործը գերազանցապէս բարոյական գործ մըն է: Կրթական բարձրութիւն մէջ գերակշիռ նպատակը դաստիարակութիւնն է եւ անոր իբր միջոց պատի ծառայել եւ ստորադասել ուսումը:

Բ. — Կրթութիւնը ամբողջական պէտք է ըլլայ: Ինտելեկտուալ դաստիարակութիւնը կ'ըլլայ միանգամայն բարոյակամ, ժամանակակից, գեղագիտական ու փիլիսոփայական:

Ռ. — Պերպէրեան իր պատկառազօր եւ հրասպարիչ անձով ու խօսքով՝ վերացուցած է միշտ իր սաներուն հոգին: Պերպէրեան վարժարանի գործը բարձր իտեալի գործ մ'է եղած:

Յ. Թ. ՀԻՆՈՒՆԱՆ



ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԱՅՄԻՔԵԼ Ն. ՊԱՏՐԻԿ

## ՎԱՐՈՒԺԱՆ՝ ՄԵՐ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Վարուժանը կարծէք կերպարանափոխուել էր այդ պահին, ինքնամոռաց եւ տարուած՝ գգացումների հեղեղից, միանուլուած Դուրեանի հագու հետ:


Ա. Գ.

Կէտօրից յետոյ հասաւ վերջապէս իմ այնքան անհամբերութեամբ սպասած ժամը: Մեր դասարանը վերակազմուել էր արդէն. հնչեց դասապահի գանգը: Մենք շարժուեցինք դէպի Վարուժանի դասասենեակը: Նա արդէն մի քանի դաս անցկացրել էր մեզանից առաջ յանախող մեր ընկերներին, որոնք համարձակօրէն մտնում էին ներս: Տիգրանը եւ ես մի տեսակ վարանումով հետեւում էինք շարքին, ջանալով միշտ մնալ ետեւ: Երբ բոլորս դասարան մտանք, Վարուժանը, որ կեցել էր պատուհանի առջեւ եւ ընթերցում էր ինչ-որ մի գիրք, փակեց գայն, դրաւ առջեւի սեղանին եւ մեզ նայելով թեքերօրէն գլուխ տուեց եւ ձեռնով նշան արեց, որ նստենք:

Իմ առաջին տպաւորութիւնը կարծես յուսալսար արեց ինձ. իմ մտպատկերը բոլորովին այլ էր նրա արտաքինի մասին, այսինքն՝ գեղեցիկ, փարքամ մի տղամարդ, մինչդեռ նա միջահասակ էր. մուգ-լազուր *կոստիւմ* հագած, օպայումս բարձր օճիկով: Այ՛քառու էին նրա լայն նակատը՝ սեւ մազերը, աչքերի մթին խորութիւնը: Այ չէք ունէր մի թեքեւ շիւղաքիւն: Յօնքերը լաւ ընդգծուած էին: Քիթը բարեձև էր եւ տոնակալ: Ընչացքը սեփ-սեւ էր, ծայրերը թեթերօրէն վեր ամփոփուած՝ ասպետականօրէն: Երբ-նրը՝ մտտ ու բոսորագոյն, կզակը լիակազմ՝ որպէս արտայայտիչ կամփի, տակունութեան ու ինքնատիրապետման:

Նրանում ամէն ինչ մաքուր էր, խնամուած ու կոկիկ: Վարուժանը նայ բացեց դասատետրը. նշեց ներկայ գտնուողները եւ արձանագրեց նոր եկողներին անունները, առանց յատուկ ուշադրութեան: Յետոյ անցաւ դասաւանդման: Դախ՝ տուեց նախորդ դասի ամփոփումը. իսկ այդ դասին սկըսեց խօսել Պետրոս Դուրեանի կեանքի եւ ստեղծագործութեան մասին: Չայնը թե՛նորի հանքի հնչականութիւն ունէր, արտասանութիւնը՝ յստակ եւ նրբորէն ռիթմիկ: Բոլորս էլ պատկառանքով ունկնդրում էինք նրան, բացի Խորէնից, որ Դուրեանի իւրաքանչիւր փերթուածի յիշատակման ժամանակ նայում էր Տիգրանին եւ մերթ նրան մի բան էր շշմջում, որից մեր խեղճ բանաստեղծը հագիւ հպարտ էր իր գայլոյթը... Վարուժանի աչքից անշուշտ չէր վրիպում այդ բոլորը, սակայն չնկատելու էր տալիս ու անայլայլ շարունակում էր իր դասը:

Պէտք է այս առթիւ ասել, թէ նոր չէր, որ ծանօթանում էինք Դուրեանին եւ նրան նախորդող մի շարք մեր գրական դէմքերին: Այդ մէկ-երկու ամսուան ընթացքում Վարուժանի կատարածը մի ընդհանուր վերաբազ էր՝ իւրաքանչիւր գրակալ դէմքի մասին իր տեսակէտներն ասելու, իր գնահատականը տալու համար: Այդ պատճառով էլ մենք հետեւում էինք նրա դասաւանդութիւններին մեծ հետաքրքրութեամբ: Դուրեանը, օրինակ, նրա ծա-



ՍԵՐԱՍՏԻՈՅ ԱՅԳ. ՍՐԱՄԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՇէՆՔԸ,  
ՈՒՐ ԱՏԵՆ ՄԸ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՄԲ ՊԱՐԱՊԱՆ Է Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

նօթացումով ստացաւ կարծես մեր որակ եւ հմայք: Իսկապէս, մի բանաւտեղծ միայն կարող էր այդ հրաշքը գործել:

Ահա, օրինակ, նրա «Տրտունջ»ը: Ընթերցումից առաջ նա մի բալէ մնաց խորը ինքնամոխումով: Անշուշտ նա անգիր գիտէր այդ ողբերգական գլուխ-գործոցը, սակայն, որպէս դասաւանդութիւն, նպատակայարմար համարեց ընթերցել:

Ձայնը նախ յուզումնաբարձ էր. յետոյ հետզհետէ հզօր, համարձակ շեշտեր առաւ, եղաւ ամպրոպագոռ մի փոքորիկ, որ յանկարծ շանթաճիգ պայթեցրեց դէպի երկինք իր ընդվումը այն գերագոյն էակի դէմ, որին հաւատացել էր եւ որ իր անգոյութեամբ այժմ հիասքափ էր անոււ նրան՝ մահւան եզրին: Վարուժանը կարծէ՛ք կերպարանափոխուել էր այդ պահին, ինքնամտաց եւ տարուած՝ զգացումների հեղեղից, միաձուլուած Դուրեանի հոգու հետ...: Ամէնքս էլ քարացել էինք մեր տեղում: Առաջին անգամն էր, որ լսում էինք բանաստեղծութեան մի այդպիսի ընթերցում, որ մեզ ծանօթ ընթերցումների նման չէր, այլ իսկապէս մի ապրում էր մարդկային հոգու ամենախոր ողբերգութեան:

Վարուժանը երբ վերջացրեց ընթերցումը, դասարանում տիրեց մի խորին լուռութիւն, ինչպէս զգացում էր նուիրական մի արարողութիւնից յետոյ: Նրա դէմքը չափազանց տժգոյն էր, աչքերը անլի մթին, կարծես անլի շիւղացած...: Այդ լուռութեան եւ պատուհանից եկող արեւի լուսառորութեան մէջ նա կարծես հսկայի տպաւորութիւն էր թողնում մեր վրայ, խորհրդաւոր, պատկառելի ու վսեմ:

Հնչեց դասավերջի գաճը:

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ը



Դաստիարակն է: — Կը խօսի ծանր, յստակ.  
 Ձայնն աստղերէն, լոյսէն կու գայ,  
 Բուռը կ'ելլէ, քրոհչներուն վրայ հուր կայ.  
 Ձայն կ'արձակեն իրենց բոյներէն գիրքն ու կեանք:

Թո՛ք կը սպառէ, միտք կը լըկէ, շունչ կու տայ,  
 Եւ չի խորհիր իր վերքերուն.  
 Մանկութեան դէմ դըրած ամբողջ ծերութիւն՝  
 Կը քածնէ իր ծովը բազում լընի վրայ...

Վըսե՛մ կոչում: Հոգեակներու մէջ հըլու,  
 Ըզգուշաւոր հըպումներով՝  
 Կը գրէ գուրքն էջերու վրայ ապահով.  
 Կը ցանէ սէրն՝ անճանախորտիւն քաղիւ:

Անոնց կոկոն ուղեղին մէջ կիսարաց  
 Կը գետեղէ գառագայթներ,  
 Եւ կը լեցնէ խաւերն անոր՝ բարեբեր  
 Իր գիտութիւնն Աստուծոյ մէջ ամփոփումս:

Եւ հաւաքած ամանին շուրջն իր սըրտին  
 Մանկան շրթներ՝ որք կը ծըծեն,  
 Կը բաշխէ, հեզ, անոնց արիւնն արիւնէն.—  
 Այդ իր կեանքն է՝ որ կ'անցընէ ուրիշին:

Եւ այսպէս օր մ'երբոր ըլլայ գոհ մը ծեր,  
 Մեռնելու մօտ եւ հոգեվարք:  
 Պիտ՝ մընայ լոկ անոր այս մեծ մխիթարանք՝  
 Թէ՛ իր կեանքն իր սաներուն մէջ կ'ապրի՝ դեռ:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Ա. Ն Ա Զ Ի Ն Ե Ա Ն

**ԿՈՄԻՏԱՍԻ ԱՒԱՆԴՆԵՐԻ ԾԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԸ**

... երբ 1910 թ. Կոմիտասը ժամանում է Պոլիս, համարեղ հայ երաժրշտագետի համբարը արդէն տալածուել էր Արեւմտեան Հայաստանի քաղաքներում, աւաններում ու գիւղերում: Կոմիտասի շուրջն են հաւաքում խանդավառուած մտաւորականներ, երաժշտակերներ: Կոմիտասն ստեղծում է շուրջ 300 հոգուց բաղկացած երգչախումբ, որը անուանում է «Գուսան» ու ձեռնամուխ է լինում համերգային գործունեութեան:

Ահա այս ժամանակ է, որ Կոմիտասի երկրպագու աշակերտների մէջ աչքի են ընկնում 5 երիտասարդներ, որոնք ապագայում մկրտուեցին «Կոմիտաս վարդապետի հինգ սաներ» արտասուտը անուանմամբ: Դրանք էին՝ Բաբաեղ Ասնաշեանը, Աւարդան Սարգսեանը, Հայկ Սեմէրեանը, Վաղարշակ Սրուանտեանը եւ Միհրան Թումանեանը:

Կոմիտասը հոգու սրտեռ աչքով նկատում է իր այս աշակերտներին ազնի հակումներն ու մղումները, ուսման եւ երաժշտութեան ծարան ու տեղնը: Շուրջ չորս տարի նա անխնայ ու անձանձիր պարապում է սաների հետ. հաղորդելով նրանց երաժշտական ընդհանուր գիտելիքներ եւ ներառելով նրանց հոգում անհատում ու տեղնալստ սեր՝ հայրենի երգի, երաժրշտութեան, բառ ու բանի նկատմամբ: Կոմիտասն իր սաներին դաստիարակում է ժողովրդասիրութեան ու մարդասիրութեան, ճաշակի ու չափի զգացողութեան եւ ընտրած մասնանիւղին անվերապահ նուիրումութեան ոգով:

Այս տարիներին էր, որ Կոմիտասը ծրագրել էր Պոլսում հայկական երաժշտանոց (կոնսերվատորիա) հիմնել եւ երաժշտական բարձրագոյն կրթութեան մէջ կատարելագործուելու համար իր սաներին փարիզ ուղարկել: Սակայն վերահաս աղէտները՝ 1914 թ. պատերազմը եւ դրան յաջորդող ահաւոր եղեռնը հիմն ի վեր խափանեցին եւ տակնուվրայ արեցին գեղեցիկ ծրագրերն ու նախագծումները: Կոմիտասի հինգ սաները ցիրուցան նետում են տարբեր կողմեր, իսկ ինքը՝ հրաշքով փրկուած ախորից եւ ականատես սուկալի դէպքերին՝ արդէն կորցրել էր հոգեկան անդորրն ու յուսախար օրեր էր ապրում Պոլսում:

1918 թ. զինադադարից յետոյ Կոմիտասի սաները հաւաքուած են Պոլիս եւ գուրգուրանքով շրջապատում իրենց վշտահար ուսուցչին: Նորից երգչախումբ են ստեղծում, համերգներ կազմակերպում եւ գոյացած գումարը սրամաղում սիրելի ուսուցչի առողջական վիճակը հոգալուն: Օրըստօրէ Կոմիտասի առողջական վիճակը վատանում է եւ նրան տեղափոխում են Փարիզ՝ մասնագիտական բուժման:

1920 թ. Կոմիտասի հինգ սաները նորից հաւաքուած ու հանդիպում են Փարիզ, նախագծուած ծրագրի համապատասխան երաժշտական ուսումնառութեան մէջ կատարելագործուելու եւ խորանալու նպատակով: Սակայն կեանքի ալեկոծութիւնը նորից գատում է նրանց եւ մէկընդմիջտ անջատում: Ապրում են իրարից հեռու աշխարհի տարբեր անկիւններում, բայց խոհերով, զգացումներով եւ նպատակներով նրանց հոգիները գոդուած ու շաղախուած էին կոմիտասեան սուրբ աւանդներով:

Հանճարեղ Կոմիտասի հինգ սաներից իւրաքանչիւրը իւրովի ժառանգում է նրա շնորհն ու համապարփակ անհատականութեան որեւէ գիծը:



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՉԱՊԵՏ ԵՒ ԻՐ ՍԱՆՆԵՐԸ

Բարսեղ Կամաչեանը կոմիտասեան տիպի երգահան-կոմպոզիտոր էր՝ ժողովրդական մեղեդու նուրբ ընկալման եւ վառ անհատականութեան դրսեւորմամբ:

Վարդան Սարգսեանը խորագիտակ խմբավար դարձաւ, ժողովրդական երգերի հմուտ մշակող, մասնատրաստէս խաչոր աւանդ ներմուծելով Կոմիտասի երգերի վերծանման ու խմբագրման ասպարէզում:

Հայկ Սեմէրնեանը ծտուած էր ձայնի կատարեալ տուեալներով, նա կոմիտասեան տիպի երգիչ էր եւ կոմիտասի սիրած ու անփոխարինելի մենբրգողը «Գուսան» երգչախմբում:

Վաղարշակ Սրուանձտեանը խմբավար-մանկավարժ էր:

Իսկ Միիրան Թումանեանը, քէն գրադուսեց խմբավարութեամբ ու ստեղծագործական որոշ փորձեր արեց, բայց վերջ ի վերջոյ դարձաւ Կոմիտասի գործունէութեան մի այլ, շատ կարեւոր բնագաւառի՝ ազգագրական-երաժշտագէտի ու բանահաւաքի աշխատանքների շարունակողը:



Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

## ՄԵՐ ՎԱՐՃԱՊԵՏՆԵՐԸ

### Յ. ՕՅՍԿԱՆ

1921ին, երբ Պոլսոյ Կեդրոնականի մէջ ուսանող էի, իմ ալ միւսինն նշաւ ան: Իրմէ առաջ, 1920ին, մեր շարադրութեան ուսուցիչն էր պր. Լ. Բարձրապետ, որ յունաց հին պատմութեան եւ հոյերէնի ընթերցանութեան դասերն ալ կ'աւանդէր միաժամանակ: 1921ի սկիզբն էր, որ դասարանին մէջ շուրջ մը տարածուեցաւ, թէ պր. Թաշճեանի տեղ՝ շարադրութեան դասերու ուսուցիչ պիտի ունենանք «Ազատամարտ»ի մէջ պատմութեան եւ «Հարքսեֆ»ները զրոյց Յ. Օշականը, որ այդ օրերուն, մեր դպակն հրապարակին վրայ, ամէնէն շատ խօսուած, դատուած, դատապարտուած, հանուած ու հալածուած անունն էր: Չմտնամ ըսելու, որ այդ տարին մեր դասաժամերու ցուցակին մէջ «Ծարազրութիւն» դասը փոխարինուած էր «Գրականութիւն» դասով, ինչ որ աւելի ուժ կու տար ուսուցչական կազմի մէջ անդի ունեցող փոփոխութեան մասին շրջող զրոյցներուն: Իրաւ ալ, երբ հասաւ դասի առաջին շինդարթին, հանդարտ ու ամուր քայլերով մեն մարդ մը մտաւ դասարան, անցաւ ուսուցչական սեղանին ետեւ, աչքերը մեր վրայ պարզացոյց անդամ մը ու ըսաւ.

— Բարի լոյս, աղա՛ք, նստեցէ՛ք:

Ինքն ալ նստաւ: Աթուրը, որուն վերայ դրաւ ան իր մտեղ ու խոշոր մարմինը, ճարճատեց ու սպառնաց փլիւլ, բայց, ի մեն յուսախաբուութիւն մեզի, միաքը փոխեց ու որոշեց տոկալ:



— Ձեզմէ ով որ բան մը դրած ունի, թող տարի ելլէ ու կարդայ, — ըսաւ ան՝ խօսքը ընդհանուրիս ուղղելով:

Բարակներու ծառաստանի մը վրայէն հովը անցածի պէս շուրջ մը մտաւ դասարանին մէջ. ոչ ոք կը յանդիներ առաջինը ըլլալու, ու ամէն մարդ, քովին կ'ըսէր, որ ինք ելլէ ու կարդայ:

— Աղէկ, հասկցանք, — կը միջամըւակ Օշական, — հարկ չկայ իրար անցնելու ու, մատով ցոյց տալով խոշորիկի տղայ մը՝ կ'ըսէ.

— Գուն ել կարդա՛ տեսնեմ, մենծ տղայ:

Ու մինչ «մենծ աղան» կը կարդայ, ան կը ծամածուէ իր դէմքը ու հրասթափման նշաններ ցոյց կու տայ (մեղի այնպէս կը թուի):

— Կը բաւէ, — կ'ըսէ ան վերջապէս՝ խօսքը կարգացողին ուղղելով, ու անմիջապէս յետոյ՝ մեղի — տղա՛ք, մտիկ ըրէ՛ք, ձեզի քանի մը ընդհանուր խորհուրդներ տամ. լաւ մտիկ ըրէ՛ք, որ կարենաք օղտուել անոնցմէ:

Ու կը դնէ թեւերը սեղանին վրայ, մտաներ կը հրաւիրարու, եւ թե՛նս մը արտօք, ու արմուկներուն վրայ հակած, իր սկսի խօսիլ:

— Մոռցէք մինչեւ հիմա ձեր դիտցածը ու որեցէք ձեր ապրած ու տեսած միջավայրէն, ձեր յուզումներէն, ձեր անորհայ կենտրոնէն: Ձեզիք ուղուածը՝ այդ ապրումներուն կարելի իրաւութիւնն է, հարազատութիւնը, համողկերութիւնը: Ենթեր: Դնարութեան մէջ կը ձգեմ ձեզ ազատ, որեցէք ինչ բանի մասին, որ կ'ուղեք ու կը խորհէք թէ կրնաք: Սկսեցէք արտօքն աշխարհէն, ձեր շրջապատէն, անշունչ իրերէն, մարդերու արտաքիններէն, ու ասոնք թող առաջնորդեն ձեզ մարտը ու ձեր ներքին աշխարհներուն: Ձեր շարագրութիւնը թող միջակ գերականութիւն չըլլայ, ոչ այ՛ ածականներու շնորհակոյտ: Հողի դնել վանացէք անոր մէջ: Դրէք ձեր անմէն ու անմահանու թունէն մասնիկներ, երեսիկներ: Ծարագրութիւնը միակն է, որ ձեզի պատահութիւն կու տայ ձեր ետ ցուցադրելու: օգուտնցէք այդ պատահութիւնէն:

«Սուրբնցէք դիակել. նայիլը անսնել չէ. տեսնելը՝ ուրիշին նայուածքէն խուսափածը, ուրիշին անսնել չկրցածը բըռնելն է. ահա այդ խուսափածը, թաքնուածը անսնել եւ ճշգրտօրէն նկարագրելը դրականութիւն ընել ըսել է, արուեստ ըսել է: Ճշմարիտ արուեստը, ցանցառ վիճակներ վերարտադրելուն մէջ կը կայանայ... Ու երբ կը վերարտադրէք, այսինքն՝ երբ կը նկարագրէք ամէն բան, մասնաւանդ մէկ անասիկ բան մի դիզէք իրարու վրայ, ասարանեցէք, քիչ մը կհանք, քիչ մը շարժում, քիչ մը սիրտ, քիչ մը խոռվիք եւ քիչ մըն ալ՝ նկարագրական, որ եթէ ասոնցմէ մէկէն կամ միւսէն ձանձրոյթ յառաջանելու վտանգը դուրս վերցնէ՝ ճշմուի:

«Քրեցէք ձեր հայրենի երկրէն, իր դաշտերէն, մարդերէն, անուշութիւններէն, կարօտներէն: Ձեր դէմքերէն կը կոհակեմ, որ շատ դաւառացիներ կան ձեր մէջ, բարխաւորներ, որոնք մեծ հայրիկներ ու մեծ մայրիկներ, պապեր են

ձանցած. հարս ու կեսորդ վէճերու եւ պարբարութիւններու են ունկնդրած. թող իրեն անոնց մասին: Ամէն զեղ ունի իր խնթը: Իրապէս պակասաւոր խնթը, նաեւ չահերտուած խնթը, որ միշտ ալ, ազուտը տիպ մըն է, յանդուգն, կտրիճ, դապառաջի, սիրուած: Սիրուած՝ մասնաւոր աղջկաններէն, որոնց միշտ ալ կ'արգիլուի անոնց հարսը դասնալ... Հաստարեմ մնացէք նախատեսներուն, Իշապաշտ արուեստը, ամէնէն առաջ, պարկեշտ ու հուսատարիմ դժադրութիւն մըն է, ուր դոյներու խացումը չափազանցութեան չի տարուի որ ներքին կեանքին հանդէպ կը պահէ իր լրջութիւնն ու հարազատութիւնը: Այսօր այսքան»:

Իր մէկնումէն ետք, իր մէջ քառասունէ աւելի աշակերտ համրող դասարանի կտրծիք՝ շուկային մէջ Օշականի մասին տիրող կարծիքէն բնաւ տարբեր չէր:



Ամէն Հինդաբի, դասակիրըր ծանուցող դանդակէն հինգ վայրկեան առաջ, անպատրաստները կ'աճապարէին ապաստանիլ դասարանի հեռուոր ու անմատչելի անկիւնները, մինչ ուրիշներ, դրածոնի կարողալու մարմաջով, կը դրաւէին անոնց լքած դիրքերը, աղմկելով, կըռուելով, իրար հրելով:

Խաղաղութիւնը ետ կու դար դասարան, երբ դուռը բացուելով ներս կը մտնէր եթէ ոչ կորիկ, դէ՛թ դիրուկ ու ամբակազմ մարդ մը, բարի դէմքով ու հաստատ քալուածքով:

Գուրսի աշխարհը Օշական անունով կը ձանչար դիւք, մենք՝ «Մենծ աղա»: Ուսուցչական սեղանին առջեւ «բարի լուս» մը կը նետէր ոտքի վրայ սպասող աղոց ու ժպտող աչքերը պարագնելով անոնց վրայ, որ ցուաղնօրէն կը ճարճատէր, խօսք կ'ուղարկըր առաջին տղան.

— Ել նայիմ, «մենծ փիլիսոփայ», ո՞ւրտեղացի ես:

— Մշեցի:

— Մուշը կը յիշե՞ս, քանի՞ տարի է անկէ հեռանալը :

— Վեց տարի :

— Քաղաքէն ես :

— Ո՛չ, դիւղէն :

— Հիլէ ատոր դեղ բէ՞լ : Ձեզի խրատ՝ որչոր անոնք, որոնք դատաւարի են, թո՛ղ գիւղի տեղ գնդ գործածեն : Կարդա՛ :

— «Վերջալոյսի պատկերներ»...

— Ս՛յ, ի՞նչ շողշողուն փրկնապէր է. քալէ՛ :

— «Երիկուն է. հարիզովիմ վրայ արեւ մահիմ կը մտնեմ, միմչ՝ հուադկոտ ու մաշած ցոլքեր կը վէտովէսիմ՝ մերմակ ամպերու խառնիխառն գեղմիմ մէջ ոսկեգօ...»

— Ճանրը, — անձնաբնիկ Օշական, — տղան քա՛մ բանաստեղծ է : Ես ձեզի ըսած չե՞մ, որ պարզ գրէք, առանց դարդի : Գրականութիւն բրած ըլլալու համար մի գրէք. աշխատեցէք պարզ ու բնական ըլլալ. մի տարուէք շի՛մ բտտերու հրապոյրէն : Շարունակէ՛ :

— «... ծելով անուամի մէջ միհար քազուկներու պէս նետուող, մահիկաւոր միմարէքներու երկար սիւնէքները եւ հեռուար հարիզովներու կապոյտիմ մէջ գծագրուող նոսրներու ստուերախիտ պուրակները, որոնց մէջ...»

— Կեցի՛ր, — կ'ընդմիջէ Օշական, — ես չարունակեմ, հաւանարար թռչնոց խումբեր եւ անոնց կապած քաղցր դայլալիկներ ունիս :

— Սյո՛, միւսիս :

— Գետի՛նն անցնին այդ բոլորն ալ, նոճիներն ալ, թռչուններն ալ, պուրակն ալ : Հի՛մա անցիր տեղդ եւ աշխատէ չմոռնալ խրատներս :

— Միւսիս, վերջը պարզ դրած եմ :

— Սկի՞րբը ինչու այնպէս է. սա նախարա՞նն է. քալէ՛, տեսնենք :

Խեղճ տղան թաշկինակը կ'անցընէ ճակտին վրայէն ու քանի մը հատուած ցատկելով՝ կը սկսի կարգալ.

— «Բլխարկս գլուխս կը քննմ ու հացիս ծրարը առած...»

— Կը բաւէ, անցի՛ր տեղդ, — կը

սրտնեղի Օշական, — դիտարկը ոտքերուն չենք պնդեր, ոչ ալ կրճտնք ուտել. յետոյ, վերջալոյսին հասցիդ ծրարով ո՛ւր կ'երթաս : Այո սովորական ու անկապ բաները մեզի մի պատմիր. ամէն մարդու տեսար ու լսածը մեզ չի շահադրուեր : Այնտե՛ղ նոր ու շտուած բաներ բնել, եթէ չես կրնար տեսնել զանոնք, դէ՞թ նոր ձեւ մը գտիր, մա՛նաւանդ գրէ տեսած ու տպրած միջոյլայրէլ. այլապէս անպոտ է այն ազատութիւնը, զոր ես ձեզի կու տամ նկութիւն որոտութեան մէջ : Բարեբախտ ես, որ Մուշի պէս անը մըն ես ճնած : Քեպապ դարձուած չէ՞ք ձեռն, Կշնաս հրամանակ մեզի անոր բերնի ջուր յապցնող գոյնը, հոռը, բրինձով լեցուած դատր կամ հեղհահաւի մը արքայական դիտար : Ասոնք բացառիկ բաներ են : Հասցիդ ծրարը իր երկու կուտ ձեթապառու գոյլ մի բանար մեր առջև վերջալոյսներու տակ, լսեցի՛ր : Անցիր տեղդ եւ մի մոռնար խրատներս : Ձե՛մ ըսեր, թէ որոտովին պարապ է դրածք. ձեռն քանի մը յաջողած պատկերներ կան, բայց կորած են ինչհատուր շիտթիւն մէջ : Յաջորդը թո՛ղ գայ :

— Դեղնած ու ճղած աղայ մը կը բաժնուի սեղաններէն ու, տետրակը ձեռքը՝ կը սպասէ հարցաքննութեան :

— Դո՞ւն եւրտեղացի ես :

— Գու՛մ-Գափուցի :

— Կարդա՛ :

— «Պալլեքնիները»...

— Թա՛մ դիտուն զարկիր. հայտէ՛ նայինք :

Ձկտրաներու առօրեայ կեանքէն առնելած հասարակ նկարագրական մըն է աս տղունը, զոր կարգաց առանց ընդմիջւելու :

— Ինձի նայէ, տղա՛ս, — կը խօսի Օշական, — դրածիդ մէջ ինչ որ դեանին վրայ է, կարելի է յաջողուած համարել, բայց զու ձկնորսը թուղթով չինուած է, հողի չունի : Յաճախ բառ մը, խօսք մը փրցուած անոր բերնէն, կամ ձեռն դըրուած, շատ աւելի բան կ'ըսեն մեզի, քան ամբողջ հատուածներ ու էջեր : Ձե՛ս լրանած, անոնք քահաճ խօսքը ունին : Օ-

րինակ, «հայտէ՛, դնա՛, դուն առ ձուկը չես կրնար ուտել, փշոտ է»։ Սուղ ձուկերու դժուրը ելլող աղբատ յաճախորդներու կ'ըսեն ատանկ բաներ։ Յաջորդը դայ։

Այս վերջինը դաւառացի մըն է, որ դիւղի մը պատկերը կը վրձինէ քանի մը հարուածով։ Կը նկարագրէ յղրիւրին դիւղերուան երդը՝ ձմեռ ժամանակ։

Զգայուն աղայ մը ըլլալու է։ Բառերը, կարծես հնչիւն ու կարկաչ դարձած՝ կը հասնին մեր ականջներուն, եւ կարծես մէնք կը տեսնենք ձիւնապատ դաշտին մէջէն իր ուղին դժող առուին խաղաղ ու ջլեջ ջուրերը։

Կրօնականինք կարգալ ուսուցիչին գէժքը, որ ամփոփուած է. անոր աչքերը տարօրինակ ու անանուն բան մը ունին իրենց մէջ, որ չէ կարելի նկարագրել. կարծես ան ճիգ կ'ընէ մտաբերելու տեսարան մը ու անոր կապուած հնչիւն մը, որ կը փայլի առջէն եւ որ ըսուած է անդամ մը, այնտեղ, հեռուն, դեղի պարտէզներուն խաղաղ կիսախաւարին մէջ, հին ու երջանիկ օրերուն։

Երբ ընթերցողին ձայնը կը կարի, ան յաջորդ մը կանչելէ առաջ, իր չհասնող զբայցներէն եւ առարկութիւններէն հաստ մը երկուք ալ ասոր կու տայ՝ իր «աղէկ էր» ղնահատուածին պոչին փակցուած։

Զանդը կը փակէր վէճը։ Աղմուկը գլուխ կը վերցնէր դասարանին մէջ եւ խառնակութիւնը ծայր կու տար։

— Կեցէ՛ք, դեռ հոս եմ, — դիտել կու տար Օշական ու կը պատրաստուէր մեկնելու։

— Միւսիւ, տեսարակները չէ՞ք տանիր սրբադրելու, — կը հարցնէր անհամարձակ պոլսեցի մը։

— Մինչեւ հիւսն ըրածնիս ի՞նչ էր։

— Ուղղադրական սխալները ըսել կ'ուզեմ։

— Ըսէք տնօրէնին, ձեզի գերականութեան ուսուցիչ մը թող յատկացնէ։ Ես դրականութեան դաս տալու կու դամ։



Ու իր օրով սորվեցանք սիրել դրականութիւնը։ Զորբորդ դասարանը, որ դպրոցի ամէնէն հրաբորբ, անուսակ, անհանդարտ ու անդուսպ կարգն էր, սարէն բերուած մատաղ ձիւն մը պէս ընտելացաւ ու սանձուեցաւ։ Դեռ մինչեւ հիւստալ չեմ կրնար վճռել, թէ սէրը դրականութենէն սկսելով արարածուեցաւ ուսուցիչին վրայ, թէ՛ հակառակը, բայց որն ալ որ եղած ըլլայ, իրողութիւնը այն է, որ տղաքը սկսան կենդանի հետաքրքրութիւն ցոյց տալ գէպի դրականութիւնը. յառաջացող արարոյն հետ, անպատրաստներն ու դասարանի հեռաւոր մասերն ապաստանողները պակեցան, ու դտանք, որ անհամբերութեամբ կը սպասէինք Հինդլարթիւն՝ դրականութեան դասը ըմբռնելուն համար։ Ֆրանսերէն գիտողները սկսան Ֆլայպեր ու Ալֆրէտ սը Միւսէ կարգալ, որովհետեւ միւսիւն շատ կը հաւնէր անոնց. Զայպէլ Եսայեանը փնտրուած հեղինակ դարձաւ, որովհետեւ միւսիւն կ'ըսէր, որ «ԱՅր ամէնէն վաւերակամ կիմ գրողն է ան»։ Վարուժան, Տէրեան, Մեծարեց, Դուրեան աթոռնին առած՝ հայկական Ողիմպոս փոխադրուեցան, որովհետեւ միւսիւն կը հաւնէր անոնց, ու շատ մը տըղաք, իրենց մասնագիտական դասընթացքը փոխեցին, որովհետեւ միւսիւն գրելու շնորհ կուտ չէր կրնայ մէջ։

Ու երբ այս տողերուն հեղինակը «մնաք բարի» կ'ըսէր միւսիւին, ան մէկ պատուէր տուաւ. «Ուր ալ երբքս, մեմօ աղա, գրակամութիւնը չմոռնաս»։ Զմոռցայ, վարպետ, ու ահա դրական գործունէութեանը 40ամեակին առթիւ խոր ակնածանքով կը սեղծեմ բեղմնաւոր աղբ ու կ'ըսեմ.

— Ծնորհակալութիւն եւ ապրէ երկար, վարպետ, ապրէ երկար։

9. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

8. ՕԾԱԿԱՆ՝ ՈՒՍՈՒՑԻՉԸ

... Ուսուցիչներուն մէջ ամէնէն աւելի ինքն էր աղաքը գրանցեցուցը, ամէնէն խառնապահանքը, անպէ՛տ: Բայ բոլորէն աւելի էր սիրուէր ինք, բոլոր աղջ կողմէ: Ներքին կարողութիւնը ստեղծող ու կարողանալու զոճացում առողջ նորութիւն մըն էր ինք, որ երբեք չէր հիմնար: Կարելի չէր մտորիմա կութիւն մը ստեղծել մէջը, ճանձրոյթ մը դրալ իրմէ: Որովհետեւ մշտական աղբիւր մը չէր միայն, այլ նաեւ մշտանորոգ աղբիւր մը, այլ նաեւ բազմաթիւ աղբիւրներու միանոյլ հասանք մը: Գրական նորութիւնները, զեղարուստական վարդապետութիւնները, խմատաստիակական շարժումները, գիտական, բժշկական բոլոր գրութիւնները հարկատու էին իրեն: Աստղ համար անդամաճան ապաւին մըն էր ինք, բոլոր կենտոն հարցերուն պատրաստի ու համողիչ լուծում մը:

Ուսուցչութիւնը ճիշդ գրականութեան պէս կերպ մըն էր Օշականի համար: Չէր կրնար ապրիլ առանց գրելու: Չէր կրնար ապրիլ նաեւ առանց ստուցանելու: Տիրութիւն մը կու գար վրան, երբ կը պակսէին ուսուցանելու տարիները: Կը տիրէր, երբ աշակերտները քիչնային: Կը տիրէր, երբ անական օրերը յաճախողէպ զատնային: Մինչ ուրիշ ուսուցիչներու համար փնտրուած օրեր էին արձակուրդի օրերը, ընդհակառակն, իրեն համար կը դաժնային զայրոյթի պատճառներ: Կը պոռար, կը կանչէր ու ճշդիչ կոչ սուրբին սրբութեան աստիճանը՝ կ'որոշէր իր ընկիւթը, կը հաւաքէր աղաքը ու զաս կ'ընէր: Իր քիչ ժամանակը ատուելապոյն արդիւնքով մը պակսելու արտասուշ անկը մը կը վառէր, զինք: Գ'ուզէր ազատիլ իր մէջ կուտակուած խռովքներէն: Պարպիւ հողին: Պարպուշու առջ պահանջէին քով ճերմակ թուղթը կամ աղջ ուղեղները նոյն նշանակութիւնը ունէին իրեն համար, Կը վախճար փերական մասէն եւ աստղ համար կ'աճապարէր սալ, պատմել իր ամբողջ ունեցածը թուղթին կամ աշակերտներուն:

Այսպէս, այս կերպով անցաւ զիւղէ զիւղ, քաղաքէ քաղաք, երկրէ երկր՝ առաջախի մը պէս հաւատաւոր ու ջերմհասնող, ու առաւ ինչ որ աստղ էր, ինչ որ իրեն արուած էր ի ծննդնէն:

Այսպէս սպասեց իր գիտակցութեան ամբողջ քառասուն տարին: Քառասուն տարի ու քառասուն անգամ հարբէր աշակերտներու խմուցական կազմութեան մէջ բամբին ունեցաւ: Մերցուց գրականութիւնը, զգոցիտիկին ճաշկերասու եւ քրա իրաւին փառարանութիւնը:

Իրբեւ ասելութեան նիթ՝ թուրքը ունեցաւ միայն եւ իր ասելութիւնը փոխանցեց իր աշակերտներուն:

Եւ իրբեւ սեր՝ իր ճազգութեամբ, որուն հմայքը անգիմաղբիւր ապրումի մը մը փերական աղջ մէջ:


Սակեւաղորդեց եւ անգիմաղործութեան կրտիչ փոսեց հարիւրաւորներու սրտին:



ԴՈՒՆ մեծաթափանց նայուածքներու առաքեալ,

Դուն էիր որ զքեզ երգող ցեղդ այսօրուան,  
 Հելլէններէն ե՛ւ հաննարեղ, ե՛ւ հրավառ,  
 Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներէն  
 Ու հրապաշտ պարսիկներէն դրացի,  
 Մայր-բարբառիդ հնարքներովն յակինթ,  
 Հայկագունեաց մեր շառարիզն ազատեցիր...:

Դուն երկրորդ աստուած,  
 Եւ մտածման Դուն առաջին արարիչ...:



ԵՐՈՒՍԱԳԼԵՄԻ ԺԱՌԱՆԿԵԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ, ՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՂԵՑ ՕՇԱԿԱՆ՝  
ԻՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՁԻՆ ՄԷԿՈՒԿԷՍ ՏԱՄԱՄԵՆԿԻՆ

Այս յատկութիւններուն շնորհիւ՝ իր ուսուցչութիւնը դուրս եկաւ ընթացիկ իմաստներէն, անջատուեցաւ պարագայէն եւ ժամանակէն ու դարձաւ հնդինակութիւն մը: Այսինքն՝ ուսուցչութիւնը ստեղծագործութեան պէս բան մը դարձաւ իր անունին քով, իր մէկ երկն է կարծես ուսուցչութիւնը: Սէ արդէն տարրեր չէ իրականութիւնը: Որովհետեւ կրցաւ իր ճիշդ արդիւնաւորել, իր քրտինքը շոշափելի փաստերու վերածել եւ յաւերժացնել զբաղանութեան իր ջերմեռանդ հաւատքը աշակերտներուն մէջ: Ու առաւ իր ժողովուրդին բազմաթիւ մտաւորականներ, գրողներ ու հանրային այլ սպասներու մէջ դեր վերցուցած ուրիշ գործօններ:

Վերջացնենք՝ մեղի ուղղած իր պատդամը փոխանցելով նոր ուսանողներուն:

Կը կանգնէր մեր առջեւ եւ յուզումով, ապրումով, խորունկ լրջութեամբ մը կը դռչէր:

— Դուք ֆրանսացի ուսանողներ չէք: Անգլիացի ուսանողներ չէք դուք: Ռուս, գերմանացի, ամերիկացի չէք: Դուք հայ՝ ուսանողներ էք: Անոնց եթէ տասը հազարէն մէկը մարդ ըլլայ՝ կը բռնէ իրենց: Դուք բոլորդ ալ պարտաւոր էք մարդ ըլլալ, որովհետեւ ձեր ժողովուրդը պէտք ունի բոլորիդ ալ:

ԳՕՂՈՍ ՄԵԱԳԵԱՆ

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

## ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Քառասունըօթ տարիներու դիզած ժամանակը աճա հիւսած է իր մշու-  
չէ ծանր վարապոյրը ու կախած զայն յիշողութեան դիմացը մէկուն, որ եղած  
է մելգոնեանցի, բայց հեռո՛ւ ապրած անկէ: Կարելի՞ է բարձրացնել ճոթը  
վարապոյրին ու բացուածքէն դիակը հեռուն, յիշողութեամբ պայծառացնել  
մշուշոտած կերպարանքը Մելգոնեան Կրթական Հաստատութեան, որ ատե-  
նօք այնքան պարզ էր ու սպաւորիչ, երբ մեզ կ'ընդունէր՝ սիրակարօտ ձօր  
մը պէս իր ծածքին ասկ:

Միայնակ, մեկուսացած ամայի բլրակի մը վրայ — Նիկոսիայէն կէս  
ժամուայ հեռաւորութեամբ — ծանրանիստ՝ բազմեր էին երկսեռ աշակեր-  
տութեան վերապահուած զոյգ չէնքերը, քոյր եւ եղբօր պէս, յար եւ նման  
էրարու: Գորշ աւաղաքարէ հիւսուած անոնց պատերը երկղ ու խոյակէ զուրկ  
էին. կը թուէր, թէ անոնք կառուցուած էին ծառայելու իբրեւ զօրանոց, քա-  
նի որ որբերը, այդ օրերուն, հսկայ բանակ մը կը կազմէին...

Երկու չէնքերուն միջև թողուած բացուածքէն, — որ Եօ Ֆեմզ Էմսի ի-  
մաստ պիտի առնէր ետքէն, աղջիկ-աղայ դոյակցութեան սահմանումին իբ-  
րեւ փաստ, — կ'երեւէր թթենիներու մատղաշ ծառաստանը, որ կիսուելով  
երկուքի՝ ճամբայ կը բանար արահետի մը, երթալ դէմ առնելու համար Կրթ-  
թարանի հեռաւոր ձախ անկիւնին կանդանած միայսրի հիւանդանոցին: Թթե-  
նիներու աջափնեայ ճամբան, որուն վրայ, շրթալաճեւ, խնօքիկ, պատուա-  
ւոր հեռաւորութեամբ՝ նստած էին խոհանոցի, բազնիքի, մինակ զլուխ ու-  
սուցիչներու տան ետեւ, ցանկապատին կպած էր խաղափայլը, որուն վրայ  
պիտի սարքուէին մարդական հանդիսութիւններ եւ դնդակախաղի մրցումներ:

Աշակերտական չէնքերէն դէպի ձախ, ցած մակարդակի վրայ՝ ոտքը  
դրած էր Հաստատութեան ջրամբարը, կատարի ձողին ունենալով Հայկական  
Յուզոյնը, որ ետքէն փոխարինուեցաւ անդլիական դրօշակով: Բոլորովին  
ձախ, ջրամբարին կից էր մեքենատունը ընդարձակ բաժանմունքով, որ ծա-  
ռայց յետոյ իբրեւ արհեստանոց: Բարերբեր հող մը, սկիզբի օրերուն՝ քիչ  
ծառերով բեռնաւոր, կ'երթար-կը հասնէր հիւանդանոցին առջև, խառնուե-  
լով թթենիներու ծառաստանին: Մեքենատունը, ջրամբարը, Մելգոնեան բա-  
րերարներու վիլլան եւ ուսումնական չէնքերը կը նայէին Լառնաքայէն-Լի-  
մասոյ տանող ճամբուն, որուն վրայէն կ'երթեւեկէին, այն օրերուն, դիւղա-  
կան սայլեր եւ իշու վրայ նստած յոյն դիւղացիներ՝ ճոխնջով ու երգով լըն-  
չաւորելով ամայի շրջապատը...

Ինչո՞ւ երկարեցաւ Ֆիդիքական այս նկարագրականը: Մելգոնեան Հաս-  
տատութիւնը եղաւ իր առաջին սերունդին համար հայրենիքէ աւելի բան մը,  
ուր նոր ծնածի պէս աղաք ու աղջիկներ հասան դիտակցական հասունութեան,  
ապրեցան մարդափարի եւ իրենց հողիէն բան մը զրին հոն, — ծառասնկե-  
ցին շոր ու լիբի գետիները, որպէսզի յաջորդ սերունդները մաքուր օդ եւ  
չուք ունենային ամբան տաք օրերուն: Ու մնար կանդուն հոն յիշատակի կը-  
թող մը ամէն մէկէն:





լեցնող այդ սերունդը ունեցաւ մէկ մտահոգութիւն՝ կառչիլ ուսման, հասնելու համար բարձունքի մը, որ իր ժամանակին կը թուէր ոչ-արհամարհելի կատար մը...

Հետագային, տնտեսական լիարժուութեան հասած կամ հօրով ու մօրով Մեղրոնեանը լեցնող աշակերտութեան որոշ դասակարգ մը, որ պիտի անցնէր ուսուցչանոցի մը կամ երկրորդական անուանեալ վարժարանի շրջան մը, պիտի սոնքար իր ունեցած առաւելութիւններուն վրայ՝ կարենալ արտայայտուելու, թէ նախկին Մեղրոնեանը որբանոցային ասարդ մը կը կրէր կամ զուրկ էր երկրորդական վարժարանի մը արժանավայելութենէն...

Քառասունեօթ տարիներու բարդումը ժամանակին՝ մշուշի հաստ խաւով մը ջնարակած է երբեմնի Մեղրոնեանի պարզ ու պայծառ դիմադիծը, որ այլեւս այն չէ, ինչ որ էր իր մինակութեան մէջ, հետուէն դիտուածի խորհրդաւոր վիճակով: Այժմ, Նիկոսիայի արուարձանները եկեր ու խրուեր են իր կողերուն, կենցաղային շուսյա մօտիկութենէ սահպուած են աղուիլ իր մենակացի զսպուածութիւնն եւ եսպաշտ հայեցիութիւնը: Պեղդուած է օտար հաւաքակնութեան մը անմիջական դրացնութեան միջեւ, որ կ'արգիլէ զիչեքօթիկ կարգապահութեան կիրարկումի խոտութիւնը եւ ուսման լրջութեան մէջ կը նեւէ խաթարման արժատներ: Մեղրոնեանը, մեր օրերուն, ուխտատեղիի մը նմանող վայր մըն էր. հիմա անիկա կը ներկայանայ իրբեւ լայնի ժամադրութեանց խոցելի բարդոյթ մը: Եւ ահա կը ծնի երանի տալու քաղցր տրտմութիւնը այն Մեղրոնեանին, որ մերը եղաւ: Եղաւ որբերու սերունդին լուսադոյն վարը, ուր անոնք ստացան կրթական անխարայիս ուսուցում՝ անշահախնդիր մարդոց միջոցաւ: Մարդեր, որ իրապէս հաւատացած էին իրենց առաքելութեան սրբութիւն-սրբոցին, մատուցման միջոցներու մէջ խանդ ու խանդաղատանք իրարու լծորդել ուղեցին եւ ապրեցան ժամանակի խստութիւններուն հանդուրժող՝ անձնազոհութեան չափանիշները կտորելով: Լուրջ էին դասատուները, եղան համակ լրջութիւն դասարանները: Գրատախտակին առջեւ որքան խիտ էր դրահաչիւի դասատու Յովհ. Արուեսեանը, այնքան զրայուն եւ ինքնամփոփ էր երեկոնները, երբ աղքատ հաւաքած իր շուրջը, անոնց կը հրամայէր Ար. Եւստիւրազեանի երգապակներէն «Հայաստան»ը, «Կիլիկիայ»ը, «Կառննի»ը կամ «Հով արեւ տարեր»ը... Եւ այդպէս ան կ'ուզէր ապրեցնել իր եւ աղոց մէջ եքեկին կարօտը, անով թրծելու համար հայու աննուաճելի նկարագիրը: Այդպիսի նկարագիր մը ունեցան արդէն Մեղրոնեանի սաներուն առաջին սերունդին աղաքն ու աղջիկները:

1927ի սկիզբները, Արուեսեան պիտի ըսէր մեր պակշիւն մէջ շուրջով, զաղանիք մը յայանելու պէս, թէ քանի մը շարքիէն կուլու էր Յ. Օշական, որ պիտի տապալէր մեր ճանչցած զրական կուռքերը... Եւ եկաւ Օշական. յաղթ, պայծառաղէմ, ալեւորուած մարդը, որ սիրեց ինքզինք կոչել Ալեոս գրազեւ, բայց մեզի ցոյց տուաւ առաւել հայերէն լեզուի ու զրականութեան մութ եւ ստուերոս խորթութիւնները զննող եւ պայծառացնող ուսուցչի ինքնատիպ տիպարը, որուն կու տան զրական վերլուծողի կամ զննադատի անուն: Դասաւանդումի իր պահերը մեզի համար կը դառնային բեմադրուած լուրջ դասավարութիւն, ուր փոխն ի փոխ կը գրաւէին դասապարտեալի աթոռը զննութեան առնուած հեղինակը կամ զասը վերջնող աշակերտը: Ու զարմանալի չէր, թէ ինչպէս Յ. Օշական մեր միտքը մշակեց գիտակից հասկերանքով կամ ջնքն համակարգի փորձառութեամբ, հանդէպ այս կամ այն հեղինակին, որ մինչ այդ թուած էր մեզի մեծ բանաստեղծ կամ ասոյզանգաւոր զրազէս: Առաջին վերլուծուած աշխատանքը եղաւ Մ. Մեծարեւ-

ցի «Սիրեբք»-ը, որուն «Այս գիշեր տօն է, հոգւոյս՝ Կրկանի» տողին մէջ գրուած բառերուն խորհուրդին տակ պիտի փնտռէինք ընթացողին տուն տուն իմաստը՝ հրաշային, ինչպէս Կրկանի Յշական:

Մեղդոնեանի սաներուն առջին սնունդը երախտապարս է ճանչալու Արուսեանի եւ Օշականի նման ուսուցիչներ, որոնց շունչին տակ յղուեցան իր միտքն ու արամարաններու զգացումը:

Բ. Կանաչեան եղաւ Մեղդոնեանի վարժապետներուն մէջ երրորդ ծանօթ դէմքը: Ան կը բերէր Կրթարան՝ Կոմիտասի եւ իր յօրինած երգերու Փոլքորիկ արվածը՝ քառաձայն տաղերուն: Իր «Օրօր»-ը ու «Տալիլօն» երգները՝ Հաստատութեան մէջ կամ Նիկոսիա:

Տղթ. Վ. Հապէշեան — վկայեալ համալսարանական՝ դիտութեան դասի հոգեբան դասատուն եղաւ. մարդակազմութեան նկարները կը դնէր, ինձմբոս ձեռքերով, դասարանին մէջ դիրքերու վրայ, որպէսզի մենք խորը տպաւորուէինք մարդկային մարմնի մինչեւ իսկ ամենափոքր մանրամասնութիւններէն: Եւ այդ մարմնին զարգացումին համար մարմնամարզի դասատու է. Արզարեան արիւն-ջրտինքի մէջ էր միշտ, երբ խաղալային վրայ շուէտական մարզանքի կանչած ըլլար մեզ. կամ գնդակխաղի պահերուն իր թելադրանքները պատգամէր պոռալով կամ սուլիչի ազդարարութեամբ: Մրնաց որ, Կ. Տանձիկեան Փիղիքայի դոստպտհերուն, գիտասանկերոյ արտայայտութիւններով, աւելի կենցաղավարական ատյթներով ու մանրափայլներով կը զարգացնէր տրուած նիւթը:

Պր. Գ. Վարդանեան պատմութեան դասատու էր. խանդավառ՝ Խորենացիի աւանդական պատմութեամբ, ուր Հայոց փոքր տուն մեծ գործեր տեսած էր միշտ: Ժամանակն ու մեր որբային վիճակը այդպիսի պահանջով էր, որ պիտի զարգացնէին մեր մէջ ազգային անրնկճելութեան կորովը, որով թրծուեցաւ մեր նկարագիրը:

Այս բոլորին հետ ու անոնց կողքին՝ պր. Գրիգոր Կիրակոսեան, տնօրէն Մեղդոնեան Հաստատութեան՝ պիտի աւելցնէր թիւը մեր մեծ վարժապետներուն, հոգեբանական դասին միացնելով գրական ճաշակի եւ հայերէն լեզուի գաղղութիւն մը, հակադրուելով օշականեան ջիւ մը բիրտ ասունքին:

Փոխանցումի շրջանին, ժամանակաւոր իրենց ներկայութիւնը վկայեցին ծանօթ դէմքեր, որոնք հետք պիտի չձգէին ուսման սատարումին վրայ: Աշխարհագիր Յ. Պապէսեան, Թէոդիկ, Է. Թաշեան մնացին անուններ միայն մեր յիշողութեան մէջ:

Համազգեստի տակ մտած, դիմուորական խիստ կարգապահութեան ենթակայ, հետո՛ւ՝ աշխարհիկ կեանքի խանդարիչ երեւոյթներէն, Մեղդոնեան Կրթական Հաստատութիւնը անեցոց ուսման սիրահար, որքանոցներէ հասկաքաղած, բայց հինգ-վեց տարուան նախաընթացական դիտելիքներ չալակած սերունդ մը, որուն աւարտական դասարանը (քսանչորս հոգի), 1930 թուականին, չորս տարուան ուսման լրումին հասնելէ ետք, ունէր իր մէջ Ազատ Շիշեան, Իբրեւ երգահան, Յ. Ասատուրեան՝ խոստմնալից նկարիչ եւ Մմբատ Փանոսեան՝ գրող: Առաջին շրջանաւարտներէն (որոնցմէ վեցը՝ սանուհիներ), տասը-տասնըհինգ տղաք մեկնեցան Հայաստան, 1931ին. անոնց մէջն էր Յովհ. Աւետիսեան, որ պատմուածքներու հատորիկի մը միայն կըցաւ հասնել...

Առաջին շրջանաւարտներու մեկնումէն ի վեր, Մեղդոնեան Կրթական Հաստատութիւնը թեւակոխած կ'ըլլայ, այսօր, իր հիմնադրութեան յիսուն-

րեք տարին ու քառասունեօթ անկամ իր դուռները բացած է, ճամբու դնելու 1000է աւելի աւարտական սան ու սանուհիներու: Պարզ համեմատականի կշիռաւարքը պէտք է ցոյց տար, թէ Մելրոնեանէն դուրս եկած պիտի ըլլան 170է աւելի արուեստագէտներ՝ զրականութեան, նկարչութեան կամ երաժշտութեան ասպարէզին սպասարկելու խոստումով: Բայց, կը թուի չտեսանալ զանցսթիւն այդ թիւին կառուցելու միաբար: Մելրոնեանը, ինչպէս Հիմնական այլ կրթական հաստատութիւններ, փայլէ ունեցան իրենց սկիզբի մէջ երջուտառնակներուն, երբ ընդհանրապէս որբերն ու չքաւոր կամ բարեկեցիկ ընտանիքի զաւակներն էին լեցնողը մեր կրթարարները: Ժամանակի եւ տնտեսական ու քաղաքական շարժերուն հանդէպ զգայուն, հետաքայ սերունդներն ու կրթական գործօնները — աշակերտ, ծնողը կամ ուսուցիչ — նահանջելով ազգային ու ցեղային դիրքերէն, քիչ առ քիչ նուազ պահանջը զգացնէ զբաւար լեղուի ճկունութեան, բանաւորը բաւարար նկատելով. իսկ ընտանացի խօսքը առանց յենակի մնալով, հետզհետէ պիտի գոհեցնուին, ի վերջոյ՝ դատնալու համար խաթարուած դաւառարարու: Իսկ զրական լեղու: Գիրքը փոր չի կշտացներ, հայերէն լեզուն գործնական չէ այլեւս, կ'ըսեն: Հոգեբանական, մտային ու զգացական բարդոյթի այս տարբերակը ցուցատախտակի նման կախուցանուած մտէն հայ ընտանիքի տնտեսական պատին, այնպէս՝ ինչպէս տապանակ ուխտի պատգամ: Ներմուծուած բարքերով պիտի սկսէր միջավայրին յարմարուելը. նորոյթի, դերաշահ կեանքի, վերի արտի նմանելու ցանկութեան խանդոտութիւնը կախեց նոր պատկեր մը հայ ընտանիքի տան միւս պատին: Այն ատեն հայերէն լեզուն քիչ մը աւելի ետ ինկաւ, տպագրուած գիրքը չկրցաւ հրապարակին յարգանք պարտադրել: զայն սպառելուն ճիւղը նմանեցաւ քիչ մը աւելի փերեղակային առեւտուրի: Հայ ընտանիքին հայրը չհէիլ սկսաւ, գիրքաւորուեցաւ, մտա ինքնաշարժի մէջ, թոցոյր ընտանիքին անդամները չովէ չով, ժամանցի եւ հաճոյքներու խորխորատները: Եւ քանի որ հայ ընտանիքը կրնար ունենալ ուսուցիչ հայր մը, անդամները կրնային եղած ըլլալ ուսանողներ՝ թուլիմութիւնը որդի պէս սողողակէր պիտի դպրոցներէ ներս...: Նոր ժամանակներու հայր արդէն հրաժեշտ կու տար առճմային իր դարաւոր բնագրին, զգոնութեան եւ հաւաքական դրոյթի անհրաժեշտութեան: Ու վարժարանները՝ նախնական թէ երկրորդական, թէ եւ պահեցին արժանաւայել իրենց անունը, ուսումնական ծածկին տակ միջազգային լայնբացման վարք ու բարքը՝ գիտակցելով հանդերձ սոսճիկ առաքելութեան կորուստի հետեւանքներուն: Կոչումով եւ ապրումներով իրաւ ուսուցիչներու հին սերունդը չկար այլեւս: Անոնց թափուր աթոռները զբաւող նորերը, որոնց թուակները լիաբուն եղան — գիրքին փառքը չէին կրնար երգել ու մերժէին պիտի դպրոցէն դուրս դասադիրը կամ դրականութիւն սերտել. ժամանակ չունէին եւ ոչ ալ տրամադրութիւն. միւսնոյն մեղքով բանադրուէին պիտի երիտասարդ ուսանողներ կամ պատանիներ: Գիւրաշահ կեանքը ե՞րբ է երկնած ու կեանքի կոչած մեծ երազներ: Հայ ժողովուրդի գոյութեան փաստը, սակայն, չարքաչութեան մէջ ծնած մեծ երազները տուած են: Ու ցաւ է հաստատել, թէ Սփիւռքը այլեւս այդ երազներէն պիտի չայցուի՝ աղէտի մը առջեւ կանգնելու քաջութենէն զրկուած ըլլալով... Ու կրկնակ ցաւ է հաստատել, որ բանաւոր հայերէն լեզուն նոր սերունդին գրեմի մէջ մանկական թոթոյմանք մըն է. իսկ զբաւարը՝ ազգատութիւն, դրանք ամէն նամակի մէջ կամ ցուցատախտակներու վրայ: Անտարբեր են հայ մարդը, ուսուցիչը, բարձրագոյն դասարանի աշակերտը՝ ազգապաշտած կամ խեղաթիւրուած հայերէն դիրքն հանդէպ, ինչպէս միջավայր

րին մարդը անտարբեր է Հանդէպ ինքնաշարժի խլացուցիչ աղմուկին կամ փողոցներու անկիւններուն ճանճակալած աղբակոյտներուն: Ո՞վ դուք ո՞վ լարք, — պիտի զոչը Փրանսացի գրողը, — ազգային նման անհետեւութիւններու սկանառես ըլլալով:

Գրեցինք, դուցէ արջի քարոզ մը, կամ դայլի վրայ աւետարան կարողալուն նմանեցաւ մեր զրաւոր միաբը: Կեանքը եսական մարդու խանդով վայելելը, մեր օրերուն, կը նմանի խման մարդու զինովութեան. ամէն խրատ կամ սասա կը թուի դայլի աւետարանի անիմաստ արտայայտութիւն, որովհետեւ թլուած ուղեղին հետ թլու լեզուն իր միակ զէնքերն են, չկարենալ ետ կենալու համար ալքոլամոլութեան տուած Փիղիքական հաճոյքներէն, որոնք մարդս կը զրկեն գատելու կարողութենէն, քաջութեան կորովէն, մարդ ըլլալու կոչումէն...

Քաղցր վերջիշումով էր, որ սկսանք մեր նիւթը խմբագրել. դառնանք անոր, վեր հանելու համար Մեղրոնեան Կրթական Հաստատութեան առաջին երկրորդական տարիներու մէջ հասցուցած ատոք հունձքերուն որակաւոր արժանիքները: Ի դուր չէր, որ Մեղրոնեանը այն օրերուն որոնելով դատած եւ բերած էր տաղանդաւոր վարժապետներու սերունդէն մէկ քանիները, իր ծածկին տակ մտած սան ու սանուհիներուն հայեցի կրթութիւնը անոնց վըստահելով:

- Օշականով ու Կիրակոսեանով զինուած եղաւ մեր հայերէնը:
- Կանաչեան հայերէն շունչ մը տուաւ մեր սիրախն ձայներուն:
- Արուսեանով մեր մէջ հասունցաւ տրամաբանելու միտքը:
- Արգարեան կոփեց մեր Փիղիքական կառոյցը:

Անոնք եւ մեր սերունդը ծնած էին շարքաշուութեան մէջ, ապրած էին զրկանքի բաժինը իրենց կեանքին. ատոր համար եղան իրական մարդեր եւ առաջինի հայեր: Առաջին սերունդին շուքը արածուէրաւ կրնց անմիջական յաջորդներուն վրայ, սակայն, օտարածին միտքեր, ետքէն աղաւաղեցին ու տժուունցին անոնց ժառանգական փայլունութիւնը:

Այսօր, հայկական մտային բարձունքներու հանդէպ սէրն ու խանդը սասպարէզէն քաշուած էրօղներ են: Արօտաւայր իջած հօտը մտացուի թեկնածու է միշտ... Բայց, ինչպիսի՜ համակերպութեամբ հայը Սփիւռքի տարածքին, դրած է իր վիզը դժուակի տակ, աւա ա՛յդ է, որ չեն ըմբռներ զիւրաշահ եւ հաճոյքներով խճողուած կեանքին սիրահար հայն ու մտորդեւիները...

ՍՄԲԱՏ ՓՈՒՍՍԵԱՆ




**Ծ Ա Հ Ա Ն  
Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեխանքը 1944-1956 տարիներու տարւան բախտաւոր շրջան մը անցուց՝ իր սուսցչական կարգին մէջ ունենալով Շահան Պէրպէրեանի նման հեղինակաւոր տնտեսագետներն մը, օժտած՝ բացառիկ իմացականութեամբ, բացառիկ հոգիով, բացառիկ ճաշակով եւ տիրացած խոր ու անհուն հմտութեան-իմաստասիրութեան, գիտութեան եւ արուեստէր յար կայուններուն մէջ:

Շահան Պէրպէրեան միայն բացառիկ իմաստասիրութեան, բացառիկ հոգիի, ճաշակի եւ հմտութեան տէր չէր, այլ նաեւ ու մանաւանդ իր խոր ու անհուն հմտութիւնը բացառիկ ճարտարութեամբ տանող գաւախօս էր: Ամէնէն խրթին նշխարն ու հարցերն անգամ ամէնէն յստակ եւ մեկին ձեւով ներկայացնելու արուեստը ունէր: Դասաբանին մէջ համակ շունչ էր եւ հողի, կեանք էր եւ ապրում, ոգեւորութիւն էր եւ մաղինապանութիւն: Ոչ մէկ կարեւորութիւն ունէր իրեն համար գասապահներուն չափում-ճշդում տեւողութիւնը եւ ի՞նչ փոյթ եթէ զբօսանքները միշտ զուհ երթային իւրաքանչիւր գասապահի, ինչպէս նաեւ սարեկան ծրարի լծան իրադրժոժան էր, որ կը հետաքրքրէր զինք:

Լոկ ծանօթութիւն, գիտութիւն, հմտութիւն չէր, որ կու տար, կուանդէր Շահան Պէրպէրեան, այլ մանաւանդ կենդանի շունչ եւ հողի, վեհութիւն ու ազնուութիւն, կեանքն ու աշխարհը զիմացրաւելու առողջ կեցուածք, բարիքն, Ճշմարտախն ու Գեղեցիկին հանդէպ պաշտամունք, ազգային արժէքներուն հանդէպ անհուն սէր եւ անոնց խոր ճանաչումէն ճառագայթող խոշական հոգարտութիւն, Աստուծոյ հանդէպ նարեկեան լոյս հասաւք: պարզ խօսքով՝ ան իր աշակերտներուն կը սորվեցնէր մա՛րդ ԲՐ՛լայու, իրա՛ւ մարդ, ճշմարիտ հա՛յ մարդ ըլլալու արուեստը արուեստներուն:



ԱՆՔԻԼԻԱՍԻ ԳԳՐԵՎԱՆՔԸ

Կը հաստատուի 1930-31 ուսումնական տարեշրջանին, Սահակ Բ. Կաթողիկոսի օրով, իբրև մասնաւոր հաստատութիւն մը, նպատակ ունենալով *եկեղեցականներ եւ հայագիտական ուսման ընծայեալներ պատրաստել* :

Վերստեւելութեան կը կոչուի Շահէ վրդ. Գասպարեան, որուն գործունեութիւնը կ'ընդգրկէ առաջին հնգամեակը, մինչև 1935 :

Այնուհետև ու յաջորդաբար սեսուչի պաշտօնը կը վարեն Նորայր վրդ. Գողարեան, Փառէն Մ. վրդ. Մելիքեան, Շնորհ վրդ. Գալուստեան, Ղեւոնդ վրդ. Զէպէեան, Գերեմիկ վրդ. Փոլատեան, Գարեգին վրդ. Սարգիսեան, Տաթև վրդ. Սարգիսեան, Մեսրոպ վրդ. Աշնեան եւ Արտուազը եպ. Թրթռեան :

Իր գործունեութեան քառասուն տարիներուն՝ Դպրեվանքի մէջ պաշտօնավարած են 131 ուսուցիչներ, եկեղեցական եւ աշխարհական :

Անքիլիսի դպրեվանքը մեր եկեղեցիին տուած է 68 կուսակից, շուրջ 70 քահանայ, իսկ կրթական եւ հանրային այլ սպասներու համար հարիւր յիսունէ աւելի գործիչներ :

Դպրեվանքէն շրջանաւարտ եւ քերական աշակերտներուն ընդհանուր թիւը կը մտանայ եօթ հարիւրի :

Մ Ի Շ Խ Ա Ն

Լ Ե Ի Ո Ն  
Զ Ա Ն Թ  
Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ



Լեւոն Շանթ ունէր մեծ դաստիարակէ մը պահանջուած էական յատկութիւնները: Իր ուղղամիտ, պարկեշտ եւ շիտակ նկարագրին ան կը միացնէր նաեւ գաղափարական անշեղ կեցուածք մը՝ կեանքի բոլոր հարցերուն հանդէպ: Մարդ անհասի կոչումին եւ դերին մասին իր սնուցած ըմբռնումը վեր կը մնար սովորական չափանիշներէ: Մարդ ըլլալ — ահա Շանթի փիլիսոփայութիւնը, որ հասած է կրօնական ջերմեռանդութեան եւ զրուած անոր բովանդակ գրականութեան խորքը: Կեանքը չունի աւելի վեճեմ նպատակ, քան ձգտիլ, շարունակ վեր բարձրանալ եւ հողեկան զեղեցկութիւններու նորանոր դազաթներ նուաճել:

Շանթի՝ անսական եւ գործնական մանկավարժութիւնը լուսաւորուած կը դաննէր մարդակերա այս սկզբունքով:

Մարդու արժանաւորութեան գիտակցութիւնը որքան խոր ու լայն տեղ դրաւէ մէկու՝ մը հողիին մէջ, այնքան անոր համարումը կը բազմապատկուի ուսուցիչներու կատարած գործին վերաբերեալ, որովհետեւ ուսուցիչն է մատողջ կեանքերու մշակը եւ ուսուցիչի ձեռքերուն է յանձնուած նոր սնունդի ապագան:

Քիչ մանկավարժներ Շանթի չափ իրական յարգ ու զնահատանք ընծայած են ուսուցիչի աշխատանքին: Ան դպրոցական գործին հիմն ու առանցքը կը նկատէր անշուք այն աշխատաւորները, որոնք սիրտ ու կեանք կը սպասեն դասարանի մը շորս պատերուն մէջ փակուած:

Շանթի վէպերուն հերոսներէն մէկը տեղ մը կ'ըսէ. «Մեր հաւաքապա-



նուրբեան մէջ վեի գազափարի մը ծառայելը ուսուցչական ասպարէզ բնութիւն է»:

Այս ըմբռումէն կը ծնէր Շանթի այնքա՛ն յարգալից, գուրգուրուտ, սրտազին եւ եղբայրական յարաբերութիւնը իր պաշտօնակիցներուն հետ:

Իբրեւ դպրոցի անօրէն՝ ան իշխող ու հրամայող չեղաւ, այլ մտերիմ աջակից մը եւ վերին աստիճանի ուղղամիտ առաջնորդ մը, որուն ձեռքը դիտէր տկարները բռնել իրենց տատանումին մէջ եւ մոլորումները դնել շիտակ ճամբու վրայ, առանց զգալ տալու, առանց բիրտ միջամտութիւններու: Գործակցութեան կանչուած սկսնակ ուսուցիչները լաւ դիտէին Շանթի ձեռքին պարզ մէկ սեղմումը եւ անոր ներողամիտ ժպիտը ինչպիսի՛ք քաջալերանք եւ նոյն ատեն զոհողութեան ի՛նչ անդիմադրելի հրաւեր էին:

Գեոսահաս կամ հասուն կամքերը վարելու համար երբեք պէտք չունեցաւ կողմնակի եւ արուեստական միջոցներու: Անկեղծութիւնը, գործին սէրը, րնկերական վստահութիւնն ու հաւատքը իր միակ գէնքերը կազմեցին:

Կրթական ասպարէզին վարիչ սկզբունքը, Շանթի համոզմանով, անհատականութեան ազատ ծաղկումն էր, հնուու սուտէն, կեղծիքէն եւ հոգեի թռիչքը կաշկանդող կաղապարներէն:

«Հին աստուածներ»ու հեղինակը վանահօր բերնով երբ կը պատգամէ՝ «մարդս ինք միայն կրնայ շինել իր աստուծուն նուիրում տաճարը», միայն վանականներուն չ'ուղղէր իր խօսքը, այլ բովանդակ մարդկութեան, որուն կրտսեր սերունդը կը ներկայացնեն դպրոցական աշակերտները:

Եւ այդ արդիւնքին հասնելու միակ ընակտն եւ բեղմնաւոր եղանակը կը համարէր զիտակցութեան արթնացումը՝ բարոյական առաքինութիւններու եւ գաղափարայնա խանդավառութեանց մաքուր միջնորդի մը մէջ: Հասունցնել աստիճանաբար մանուկի ինքնագիտակցութիւնը՝ կը նշանակէ զայն մարդացնել, զայն տէր դարձնել իր հոգեկան հարստութիւններուն եւ ճակատագրին:

Ինչպէ՛ս կը պատկերացնէր սակայն Շանթ մարդու մտաորպարը:

Անոր ձգաւմն էր, ամէն բանէ առաջ, պայքարի, հաւատքի, գործի ընդունակ մարդիկ պատրաստել: Զգրիչ անհասականութիւններ, որոնք ըլլալին գաղափարապաշտ՝ առանց երազամոլութեան, եւ իրատես՝ Այս առանց նիւթին կապուելու: Բնութեան հետ հաշտ, չափազած, հաւասարակշիռ խտրութիւններ, որոնց կամքը տկարութիւն չի ճանչնար: Նըւածքներ, որոնց կամքը տկարութիւն չի ճանչնար:

Շանթի ամէնէն շատ կրկնած խրատն էր.

— Մ'արդ եղէք, անկախ եւ անվախ մարդ...



Շանթ նոյն ատեն արուեստագէտ եւ տաղանդաւոր ուսուցիչ էր, օժտուած նիւթ մը կենդանացնելու, դրաւիչ եւ հետաքրքրական դարձնելու կատարողութեամբ: Ընթացիկ տեղեկութիւններուն մէջ անգամ վարժ էր բարատուն կրկնք եւ սրտազրաւ ջերմութիւն դնելու: Գիտէր անցեալը ոչ էւրեւ իր իրականութիւնը, այլ իր հարստութիւնը: Այս պատճառով վառ գոյներով եւ վերացական գաղափարները զունեւորելու, հոգեբանութիւն, ինչ որ աւանդէր — պամութիւն, աշխարհագրութիւն, հոգեբանութիւն, մանկավարժութիւն — կը դարձնէր հիւթեր եւ տպաւորիչ: Մանրամասնութիւններու մէջ ո՛չ միայն էր կորսուեր, այլևս զանոնք թել առ թել կը հիւսէր ամբողջական գաղափարի մը կամ պատկերի մը շուրջ:

Հետու իրմէ՛ ունկնդիրները զարմացնելու, վերացնելու կամ բարոտողի աշխարհներ առաջնորդելու ամէն մեղաւոր դիտում: Միշտ նիւթին հետ եւ միշտ նիւթին մէջ:

Ստեղծող իր երեւակայութեան կը միացնէր արտայայտութեան անստուեր պայծառութիւն եւ լեզուի կտասրեալ յասակութիւն, որոնք այնքա՛ն անհրաժեշտ են ուսուցիչի համար:

Մտքերը դործօս լարումի մէջ պահելու եւ հոգիները յուզելու աշուստ տին տէրն էր Շանթ իրրեւ ուսուցիչ:

Դասարան կը մանէր ժպտերեո, աշխուժ, համակ կեանք ու շարժում: Ոչ ոք մաքէն կրնար անցընել, թէ «վաստակաւոր ծերունի» մըն է ներս մը նողը: Քալուածքին, շարժումներուն եւ աչքերու արտայայտութեան թարմութիւնը մոռցնել կու տային անոր մազերուն ձիւնը: Թեւին տակ տեղակ կամ դերձ՝ արադ քայլերով կ'առաջանար մինչեւ դասարանին մէջ տեղի դրասեղանները, կը խոնարհէր աշակերտներուն առջեւ, պայծառ ու բարի նայլածք մը կը նետէր բոլորին վրայ եւ յետոյ, անմիջապէս, կը հնչէր իր ուժեղ, մետաղային ձայնը.

— Տղաքս...

Ո՛չ աստանում, ո՛չ յառաջարան: Ո՛չ իսկ յիշողութեան նուազագոյն տկարացումով մը՝ նիւթի փնտռուութեւ: Դասը սկսած կ'ըլլար արդէն ու ժամը կը սահէր անդալարար: Ամէնէն անտարբերներն անգամ զինքը մտիկ կ'ընէին: Ամբողջ պահուան ընթացքին Շանթ ուղի էր ընդհանրապէս:

Դասարանին ազատ մտացած մասը իր բեմն էր, լայնքին ու երկայնքին, ուր Շանթ դասը կը բեմադրէր, պիտի ըսէի՝ կը «խաղար»՝ վարպետ ու հօր դերասանի մը տիրական արուեստով: Հոգիները անպայման կ'իյնային իր արայպետութեան տակ:

Երբեմն դասարանին անկիւնն էր, յանկարծ դարձեալ կեդրոնը. երբեմն ամպիոնին վրայ, յաճախ դրատախտակին դէմ, դրասեղաններու շարքին մէջ, դրան քով կամ աթոռին յենած:


Եւ այս յարափոփոխ շարժունակութիւնը այնպիսի՛ շնորհով եւ խօսքի արիւթին հետ համընթաց այնպիսի՛ ներդաշնակութեամբ, որ ոչ ոք կ'անդարադանար մանկավարժ-դերասանի խաղին, այլ միայն ապրում եւ պատկերաւոր իմացութեանց քանդակներ կը տեսնէր իր դիմացը:

Ոչ մէկ թափթիփածութիւն: Ամէն ինչ նախատեսուած, նախաճարադրուած: Անսայթաք էր լեզուն, ինչպէս անթերի՛ հաղուածքն ու կեցուածքը: Դիտէր թէ ուրկէ՞ պիտի քակէր նիւթին կծիկը, ինչպէ՞ս պիտի առաջանար եւ ո՛ւր պիտի վերջացնէր:

Չանգը կը հնչէր: Արդէ՞ն: Որքա՞ն շուտ կը թռէր դասապահը: Ինչպէս որ մուտք դործած էր, նոյն ձեւով ալ Շանթ կը մեկնէր, մինչեւ մէջքը խոնարհելէ ետք դասարանին առջեւ:

Ինք կ'երթար, բայց աղաքը լուռ կը մնային տակաւին իրենց տեղը: Հաղուազի՛ւա երեւոյթ: Շանթի արծարծած խնդիրներուն արձագանգը կը շարունակէր թրթռալ բոլորի հոգիներուն մէջ:

Այս չէ՞ միթէ՞ մանկավարժութեան մեծագոյն յաղթանակը:



## Հ Ա Մ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ի

# «ՆՇԱՆ ՓԱԼԱՆՋԵԱՆ» ՃԵՄԱՐԱՆ

1928 Մայիս 28ին, Գասիրիի մէջ կը հիմնուէր «Հայ Կրթական և Հրատարակչական Համադրային Ընկերութիւնը»: Հիմնադիր անդամներն էին՝ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ Բժ. Համօ Օճանջոնեան, Լեւոն Ծանթ, Նիկոլ Աղբալան, Ստեփան Եսայեան, Գասպար Իփէկեան, Մինաս Առաչատրեան, Յակոբ և Սեդրակ Պալըքճեաններ և Սարգիս Մալխասեան:

Նորաստեղծ Ընկերութիւնը իր գործունէութիւնը շուտով կը արտածէր Հայկական արտասահմանի զանազան կեդրոններուն, ի մասնաւորի՝ Մերձուսր Արեւելքի գաղութներուն մէջ: Անոր հիմնական նպատակն էր Հայ Ժախոյթի Դաճը վառ պահել Սփիւրքի մէջ, դպրոցներու, հրատարակութեանց, մշակութային և գեղարուեստական գործունէութեան ճամբով:

Շուտով Պէյրութ կու դառնի Լեւոն Ծանթի և Նիկոլ Աղբալանի, և Համադրայինի ծրարներուն իրեն աստիճանները իրականացում՝ 1930 Մարտ 3ին կը բացուէր Հայ Ճեմարանը: Աղբալանի օրերուն, Հայ գրչի և մտքի երկու տիտանները դիտութեան և յայտ սերահար խումբ ձը աղջատիկ աղաք միայն ունէին իրենց շուրջը, և այդ աղջ փակուած ի՞նչ Հայ լեզուի և մշակոյթի իրենց անխարդախ պաշտամունքը, միացած դիտականի և դատարարացի բնոյց բացատիկ կարողութիւններուն: Լեւոն Ծանթ կը գտնուէր Ճեմարանի առաջին տնօրէնը, այդ պաշտօնը վարելով 20-21 տարիներ (մինչև իր մահը՝ 1951 Նոյեմբեր 29): Ան իրեն անմիջական գործակից ունէր Նիկոլ Աղբալանը, որ միտմանակ Հայադիտական նիւթերու գաւախտան էր (մինչև իր մահը՝ 1947 Օգոստոս 15): Երկու հիմնադիրներուն կը գործակիցէր Դանե Գասպար Իփէկեան:

Ճեմարանը Հաստատում էր Քանթարի փողոցի երկայրիանի մէկ շէնքին մէջ, ուր կէ շուտով փոխադրուեցաւ Ուստի Ապու-Փեմիի փողոց՝ հին բայց աւելի ընդարձակ շէնք մէջ: Սահմանափակ էր աշակերտութեան թիւը (1931-32 տարեշրջանին՝ 61 աշակերտներ) և չկար յին ընդարձակեան Հնարարութիւններ: Ընթացիկ ըմբռնմամբ դպրոցական Հաստատու-

թիւն մը էջեր սակայն Համազգայինի ձեմարանը, այլ հայեցի առողջ դաստիարակութեան օճախ մը, հայ դրի եւ մշակոյթի ծանօթացման ու պաշտամունքի տաճար մը:

1935 Յունիսին, ձեմարանը կու տար արդէն իր առաջին շրջանաւարտները, հինգ դրամական, եւ երեք՝ դիտական ճիւղէն, — Բանեան Գառնիկ, Դերձակեան Փիլիպոս, Թաթուեան Կարապետ, Թոփալեան Գառնիկ, Խանճեան Գուրգէն, ձենտէրէճեան Մուշեղ, Մուրաթեան Հրանդ եւ Տէօփլիթեան Մանուկ: 1936ին կը կազմուէր ձեմարանի Ծրլեանաւարտից Միութիւնը, որու նախանձնութեան եւ հետեւողական ջանքերով պիտի հրատարակուէր «Արեւիկա» պարբերաթիւրը՝ 1944էն մինչեւ 1960:

1948ին, որդացեալ Նշան Փալանճեանի ազգանուէր գործը շարունակող Փալանճեան շոյրերու իշխանական նուիրատուութեան (20,000 սթերլին) եւ Հրեմեսային Ամերիկայի աղերակական հայ գաղութէն Լեւոն Շանթի հանգանակած դուճարներուն (127,000 տուրք) շնորհիւ էր, որ գնուեցան ձեմարանի ներկայ հողը, ընձեռելով ընդարձակած դուճարներուն մէջ հնարաւաճած մէջ այն հնարաւորութիւնները, որոնք շուտով իրականութեան վերածուեցան: Կեդրոնական թիւ 1 ետայտիկ շէնքի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ 1950 Յունիսին, ի ներկայութեան Լիբանանի Հանրապետութեան նախագահ Շէյխ Պըշարա Խուրիի, վարչապետ Իիտա Մուհի, եւ հայ թէ՛ օտար բազմաթիւ երեսելի անձնաւորութիւնները: Հաստատութիւնը այդ օրէն սկսեալ, պաշտօնապէս կոչուեցաւ Համազգայինի «Նշան Փալանճեան» ձեմարան:

1952ին, իրբեւ ձեմարանի տնօրէն, Լեւոն Շանթի յաջորդեց Հայաստանի Հանրապետութեան երեսմիտ վարչապետ, բազմալատակ մտաւորական Սիմոն Վրացեան: Ան իր պաշտօնին վրայ մնաց մինչեւ իր մահը (1969 Մայիս 21), իրբեւ օղնակներ ունենալով ձեմարանի անդրանիկ շրջանաւարտներէն՝ Մուշեղ Իշխանն ու Գառնիկ Բանեանը, հանրապետութեան մատուցածները եւ բարձրանուէր կրթական գործիչներ՝ երկուքն ալ:

1969ին, իրբեւ ձեմարանի տնօրէն, Սիմոն Վրացեանի յաջորդեց Հրաչ Ծանապետեան: ձեմարանի նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ իրագործումը Համազգայինի ինքնակազմութեան ծրագրի կրթական-գաղութական բաժնին, — այն է՝ ընդհանուր կրթութիւն, հայեցի դաստիարակութիւն եւ ազգային առողջ ոգի ջանքով հայ ծեր սերունդին, վառ պահել մեր առջ ճողին մէջ հայ լեզուի եւ մշակոյթի սէրը, զանոնք ծանօթ ու հաղորդակից դարձնել հայ արժէքներուն, եւ բարձրացնել ընդհանրապէս, տարրական եւ երկրորդական ուսման ճամբով, անոնց կրթական ու մտաւորական որակը:

Ոչ ոք կ'անգիտանայ դժուարութիւնները ծրագրային այն բարդոյթին՝ որ պարագաներու բերումով պարտադրուած է մեղի, եւ մեր միջոցաւ՝ նաեւ մեր աշակերտութեան: Ոչ ոք կրնայ ժխտել՝ որ, լիբանանեան թէ՛ Ֆրանսական պրընէներու եւ պաշտարիաներու պատրաստութեան անխուսափելի ինքնապարտադրանքը մեզ յաճախ ստիպած է եւ կը ստիպէ մասնակի զերուճներ ընկուլ՝ հայաբնական աւելի խոր ուսուցման մը մեր արամադրութեան: Բայց նաեւ ոչ ոք կրնայ ըսել՝ որ հիմնական որեւէ անտեսուճ ըրած ենք հայրենի, հայ գրականութեան, Հայոց Պատմութեան եւ հայաբնական այլ առարկաներու պարտադիր ուսուցման մարդին մէջ: Հիմնականը յաջողագոյն հաւասարակշիւութիւնը պահելուն մէջ կը կայանայ, եւ կրնանք ըսել՝ որ տարիներու փորձառութիւնը միայն հասցուցած է այդ հաւասարակշիւութեան: Հպարտութեամբ կը նշենք՝ որ ձեմարանը տարբեր կ'սկսեցան իմաստով լման երկրորդական վարժարան է, լիբանանեան եւ Ֆրանսական զորք պաշտարիաներուն պատրաստող, եւ հայեցի առողջ եւ բաւարար կրթութեան վաւարանը:

Լեւոն Շանթի եւ անոր յաջորդած Սիմոն Վրացեանի, ինչպէս նաեւ անոնց նուիրեալ գործակիցներուն ամէնօրեայ ճիւղին, աշխատանքին եւ անխորտակելի կամքին իրբեւ արդարեւ անցնող 45 տարիներուն ընթացքին հասած են հայ ոգիով եւ հայեցի դաստիարակութեամբ սնած, բայց արդէ մտքին ու դիտութեան ոլորտներուն ոչ նուազ հաղորդ առողջ սերունդներ, ամբողջ վաղակաջ մը շուրջ 500 ձեմարանաւարտներու, շիտեւով տակաւին նոյն ոգիով սնած աւելի քան 800 թերակարմ ձեմարանականներու մասին: Այսօր, ո՛ր ալ գտնուին անոնք, ի՞նչ ապագայի ալ պատկանին, ունին անժխտելիօրէն՝ հայութեան եւ անոր հոգեմատուր արժէքներու դիտակցութեան ու պաշտամունքին հասարակ յայտաբար:

(ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՆՇԱՆ ՓԱԼԱՆՃԵԱՆ» ԶԵՄԱՐԱՆ)

Բ. Փ Ա Փ Ա Զ Ե Ա Ն

Ն Ի Կ Ո Լ  
Ա Ղ Բ Ա Լ Ե Ա Ն Ի  
Մ Է Կ Դ Ա Յ Ը



Հոետոր մըն էր, սակայն մեղմութեան մէջ: Ամբոխները խեղաբեցնող հոետորութիւն չէր իրը, արբեցնող հոետորութիւն մըն էր, վայել էր զինք ունկնդրելը, ուղղակի ճաշակում մըն էր ամենէն քաղցրահամ պտուղներու, արբեցում մը ամենէն արբեցնող բայրբերու ներծծումով: Մեծ դեր կը խաղային անշուշտ ման իր մարմինը, իր դեմքը, դեմքի զիծերուն հանդարտութիւնն ու վեհութիւնը, աչքերը, անոնց մէջ տեսարար կայծկլտող բացը, բերիւ մը կհամուսերը, ու ձայնը եւ, մա՛նուանդ՝ այդ բարբաբացող նստազայրումը, գար կը զգայիր, թէ մարգարէի մը նստազայրումն էր, մետրոպեան նստազայրում մը:

Դասարանն էինք, ձեմարանի Ռոտի Ապու ձեմիլի շէնքը: Ազրալեանի դասն էր, հաւամբար գրականութեան պատմութեան դասը, եւ հետադարձ անցեալի ոսկեղէն հարստութեանց շրջանն էինք, փաստաւ Քիւզաճի: ու Ազրալեան կը կարդար մեզի այն հարուստը, ուր նկարագրուած է Շապահ Զոբայի եւ Արշակ Երկրորդի տեսիլներին ու խօսակցութիւնը Պարսկաստանի մէջ. տեսնելով, որ երեսուն տարի շարունակ իրենց դէմ պատերազմած Արշակը այնքան խոհարար, այնքան պատրաստակամ մտայնութեամբ ու հոգեբանութեամբ կ'արտադայրուի, Շապահ իր գարնանքը կը յայտնէ իր իմաստուններուն: Իմաստունները խորհուրդ կու տան շարունակել զբարեցնել հայոց բազաւորը: եւ արագավազ ուղտերով մարդ գրկել Հայաստան, սահմանամերձ անճնէն մօտիկ շրջանը, բերել տալ բանք մը պարկ հող, եւ աման մըն ալ ջուր, եւ իր վրանի յատակի կէտին վրայ Հայաստանի հող բազիլ: Վրան քիչ մըն ալ ջուր, եւ միւս կէտը բոգուլ այնպէս՝ ինչպէ՛ս որ է՝ պարսկական հող եւ Արշակ բազաւորի հետ գրուցել, վրանին մէջ շրջելով:

Եւ կ'ըսէ Փատառս Ռիզանդ, առանձին մեծով Արշակի հետ, Շապուհ արքայ ամոր ձեռքէն բռնած վրանին մէջ կը նեմէր Եւ պարկազան հաղի վրայ գտնուած միզոցին կ'ըսէր. *«Արշակ Քաղաքը հայրս, դուն ինչու ինձի թշնամի եղար, ես քեզ գաւկիս նման կը սիրէի, ուղեցի աղջիկս քեզ կնութեան տալ, ինչ դուն թշնամի դարձար եւ ահա երեսուն տարի հետս պատերազմեցար»*: Հայոց թագաւորը կը պատասխանէր. — *«Մեղանշեցի, եւ յանցաւոր եմ, թշնամի ներս մտորեցուցին զիս. հիմա զու ձեռքդ ինկայ, ես զու ծառան եմ, ինչպէս կ'ուզես վարուէ հետս»*: Իսկ երբ մեմնելով կը հասնէին հայկական հողին վրայ Եւ Արշակ ոտք կը դնէր հայրենի հողին վրայ, սաստիկ բմբուսանալով, հարարտահալով խօսք կը փոխէր Եւ հրամայական շշուուով կը խօսէր Շապուհ արքայի հետ, կրօնի ու խիզախ. *«Հետեւ ինձմէ, չարագործ ծառայ, որ տէրերուդ վրայ տէր ես դարձեր. ես չեմ ներեր քեզի ու զու որդիներուդ իմ նախնիներու վրէժք»*:

Այս տեսարանը հետագային կարգալու առիթը ունեցայ Փալատուի գործի թարգմանութեան մէջ. տպագրութիւնը սակայն, գոր դատարանը ստացաւ այդ տեսարանէն, երբ Ազրայեան կը կարգար գայն, անջնջելի ու անմահանալի պիտի մնայ գինձ ունկնդրողներուն մէջ. ձայնը կը դողար, աչքերը արցունքոտած էին, ինչպէս կը պատահէր ամէն անգամ, որ անցեալի մեծութեանց մասին կ'արտայայտուէր: Ազրայեան սակայն վեհապալատ նրեւոյթ մը ունէր, Արշակ թագաւոր իրապէս խրախու ու բարաստ. հայրենի հողերը, հայրենի Ազրայեան ինքն անրկայ էր Արշակ թագաւորի մէջ, Արշակ թագաւորի իրաւանջիւր քայլին հետ, գոր ան կ'առնէր պարսկական հողին վրայ. կը կէր Ազրայեան, ուսերը կը խոնարհէին քիչ մը անկի, ու կը շտկուէին կրկին միայն ա՛յն ատեն, երբ Արշակ կը հասնէր հայկական հողին ու կը սկսէր պատասխանել հարարութեամբ: Անցեալի դէմքերն ու դէպքերը մեծ են մեզի փախմտուած գաղթութեանց մեծութեամբ ու Ազրայեանի խոր գաղթութիւններն էին, որ կը վերականգնէին մեր պատմիչներու գծած դէմքերը իրենց իսկական մեծութեան մէջ:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

## Դ Պ Ր Ո՛Ց ԵՆ Ա Ն Ա ...

Դպրո՛ցն ահա հայկական... Մեսրոպակո՛ւն պառաժ՝  
Կամբարտակուի դարերու անծայրածիր դաշտին վրայ.  
Ու հեղեղին դժժ անոնց՝ կաղնիօրէն կո՛ւրծֆ կու տայ,  
Կոթողուելու անյողողող՝ հողմերուն մէջ յարաշարժ:

Դպրո՛ցն է հոն հայկական... Մեսրոպասի՛ւն պարանձֆ՝  
Հագար գանձով ու գարդով ու գրանով կը փայլի,  
Ու կը մայի Դալիքին՝ յոյսէ աչքովն անցեալի,  
Որուն մէջէն կը ծայտին երկու Սուրբեր սպիտակ:

Դպրոցն, այնտեղ, Սահակի պարբու հասակը ունի,  
Ու իր ստուերն հայկական դարբ՛րն ի վեր կը սփռէ.  
Ու ան ունի Մեսրոպի հարուստ նակատը լուսէ,  
Հանանչն որուն կը նախրէ աստղերն ի վեր յաւերժի:

Դպրո՛ցն ահա՝ վէճի պէս, որ ցուպին տակ մաշտոցեան  
կը բխէ ջուրն հայ լեզուի՝ գուտ ու ազնիւ գերբ գինի:  
Դպրո՛ցն ահա՝ արտի պէս, ուր՝ քիրտին տակ Ռուսչի՛  
Հուկտ խոստումները լոյսի պիտի քիչ-քիչ մայրանան:

Դպրո՛ցն ահա հայկագեան... Մեսրոպակո՛ւն զինարան՝  
Իր բովին մէջ կը ձուլուին սու՛րն ու ասպարն հայ հոգւոյն,  
Մինչ կատարին՝ ծագէ ծագ կը ծածանի երեսուն  
Եւ ութ երփնեան դրօշակն Այբուքենին մաշտոցեան:

Խորանն է ան՝ ուր խոհուն Խորենացին կը խնկէ,  
Պարտէ՛զն՝ ուր սագ ու սրինգ կը գլզլան քուչակեան.  
Ան երգեհո՛ւնն է՝ գոր խօ՛ւ կ'ալեկոծէ վարուժան,  
Անտա՛նն՝ ուր քա՛ջ կը շաչէ Սիամանթոն մրրկէ:

Դպրո՛ցն ահա մեսրոպեան՝ նաու մը պէս վեհափառ...  
Բեռցած նշխարն անցեալի ու ներկայ փառքն Հայ Գիրին,  
Առագաստներն իր պարգա՛ծ իբրեւ երամ աստղային,  
Հանանչօրէն կ'ընթանայ դարերու մութ ծովն ի վար՝

Լուսէ ցուկը մթած արեւուն մէջ ապագայ...

ՃԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

Մ Ե Ր Դ Պ Ր Ո Ց Ի Լ Ո Յ Ա Ր

Հիմա, երբ տարիների արանքից յետ եմ նայում, բազմաթիւ յուշերիս մշուշների միջից վեր է խոյանում Թաւրիզի Հայկազեան-Թաւարեան Հայոց դպրոցը՝ դէմ յանգիման կանգնած իր արդիական շինութիւններով եւ Աւար Աստուածածին եկեղեցու իր փայլուն գմբէթով: Այնտեղ էր, որ առաջին անգամ ես ծանօթացայ հայ լեզուի այբուբենի խորհրդանշաններին, հաղորդուեցի հայկականութեամբ եւ այրեցի առաջին սիրոյ թախծալի բերկրանքը:

Հիմա, երբ աշխարհամասեր ու ծովեր կտրած՝ պատասպարուել եմ մեծ ուսանների շուքերի տակ, ճգնում եմ վերագտնել այն լոյսը, որ եղաւ իմ դպրոցը: Եւ արդէն իմ գոյութեան առանցքն ու իմ գրական փորձերի նպատակը վերակառուումն է այն լոյսերին, որ այնպէ՛ս շեփոթէն լուսաւորեցին իմ մանկութեան ու վաղ պատանեկութեան ճամբաները:

Մի ամբողջ տիեզերք էր մեր դպրոցը, հոգիների մի անտեսանելի դարբնոց եւ նիւթեղէն ու աննիւթեղէն աշխարհների մի մշտավառ խորայ: Այնտեղ, Թաւրիզի մեր դպրոցում էր, որ ես զգացի իմ գոյութիւնը երկրագնտի վրայ: Մի բուն հայ տղաներ ու աղջիկներ որոշել էինք անմահեանալ: Մեր կեանքն արդէն մշտնջենական արշալոյս էր: Մեծ մասամբ մենք չքաւար գաւակներ էինք: Սակայն հպարտ: Հպարտ՝ մեր հայութեամբ: Վստիտ հսկաներ էինք: Տանք թէ դպրոցում, մեզ սովորեցրել էին չարն ու բարին: Զփաւորութեան մէջ մենք հարուստ էինք: Մենք հաւատում էինք արդարութեան: Հաւատում էինք յաղթանակին: Թաւրիզը Հայաստան էր: Թաւրիզից այն կողմ Արախն էր ու Արարատը: Իսկ Արարատի լանջերից տարածուում էր բուն Հայաստանը մինչեւ աշխարհի ծայրը:

Սակայն ամէն բանից առաջ կար պարոն Արմենակը: Պարոն Արմենակ Աֆքանդիլեանը, մեր տեսուչը, ուսուցիչն ու քրմայետը: Զե՞ որ մեր ուսուցիչները մի-մի քուրմեր էին: Խոտաբարոյ, բարի մարդ էր պարոն Արմենակը՝ արեւմտեան ժողովրդավարի ու արեւելեան բռնապետի մի արտասովոր խառնուրդ: Ով որ աշակերտել է պարոն Արմենակին, գիտէ, թէ ինչ տեսել է կարգապահութիւն: Հմուտ հոգեբան էր նա, մակնավարժ ու վարչաբար: Նրա ձովանու տակ մեր դպրոցը նաւարկում էր հայկականութեան յաւիտենական ջրերում:

Յետոյ կային մեր ուսուցիչները՝ անմատչելիորէն մատչելի այդ խորմերը, նայած թէ ինչ տեսակիւնից էին մտնեում աշխարհին: Նրանք սովորական մահկանացուներ չէին, այլ ինչ-որ երկնառաք առաքեալներ, որոնց շնչի տակ ուսանելու բախտն էր վիճակուել մեզ: Կարո՞ւ էք երեսակայել: Մենք՝ աշակերտներս, համոզուած էինք, որ նրանք բնա զուացարան՝ չեն գնում, այլ միայն լոյսով են սնում: Ես անկարգի համբաւ ունէի, յատկապէս բուրդաւորութեան դասարանում: Մի կատարեալ «բաշխիբազուկ»: Սակայն մինչեւ այսօր էլ երանութեամբ եմ յիշում իմն բազմիցս պատժած ուսուցիչներս: Մենք տղաներս, բաշխու, սիրահարուել էինք մեր նկարչութեան ուսուցչուհի՝ օրհորդ Էփրիզայի վրայ: Այդպիսի գեղեցկութիւն չէինք տեսել Թաւրիզում: Իսկ աղջիկները, խօսք մէկ արած՝ դառնում էին երաժշտութեան ուսուցիչ՝ պարոն Գրիգորեանի շուրթը: Մի իսկական Ապոլոն: Կային շատ այլ ուսուցիչներ, որոնք սակայն առաջին հերթին յարգանքն ու ակնա-



ծանձ էին տարում մեր մէջ: Պարոն Անձման, պարոն Մարտիկեան, պարոն Փոյաբեան, պարոն Կոստյեան, պարոն Անդրէ — տասնց Տէր Օհանեսնի. — պարոն Սիմոնեան, պարոն Բժշիկեան: Մեզ բուս էր, թէ «Պարոնք» նրանց անուան բաղկացուցիչ մասն էր: Տիկին Ովաննում թուրքի մայրն ու նաեւ պարոն Արմենակի կիներ: Մի՛ մեծ գիրքաւաւում էր մեր դպրոցը, ուր Հայաստանի գրեթէ բոլոր գաւառներից տարագրուած բնատնիքների գաւաղները օրէցօր անում. մեծանում ու հայանում էին: Դպրոցի կենտրոնական պատի տակ էր գետեզուած Հայոց Մեծ Աղանի յուշակաւքը:

*Այլա՞ն տրին թէ ձեզ ներքն մեր որդիք  
Թող ողջ աշխարհ Հային կարգայ նախադնէք:*

Չէինք հասկանում եղելութիւնը: Գիտէիք, որ մի անաւոր բան է կատարուել: Ժամեր շարունակ կանգնում էինք այդ անպաճոյն վիմուտարի տաշի եւ, կախարհուած՝ փորձում էինք բնութի պատգամը: Ի՞նչ գիտակցութիւնը անելի էր մտնում, ապա ենթագիտակցարար հասնում էինք նշմարութեան, որը բարբոսում էր մեր մտադաշ արիւնը:

Դպրոցի պակասը լրացնում էր Սուրբ Աստուածածին եկեղեցին: Արդէն այդ եկեղեցու ճարտարութիւնների ու կամարների տակ անցաւ մեր մանկութիւնը: Աստուած մեզ հետ էր: Հայոց բոլոր սուրբերը մեզ հետ էին: Նրբեմն խունկի բարբոսներ հասնում էր դասարան, ամբողջանում հայոց լեզուի հետ: Իսկ մեր սուրբերը շնչեղէն մարդիկ էին — Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Վարդան Չորավար, Կարին, Աղիշէ եւ Նզմիկ: Մենք համարուած էինք, որ Քրիստոսը հայ էր:

Հայկազեան-Թամարեան դպրոցը այդ օրերին հաւանաբար Պարսկաստանի ամէնից արդիական դպրոցն էր՝ թէ՛ որպէս շինարարական համալիր եւ թէ՛ որպէս կրթական հաստատութիւն: Ուսուցիչների մեծ մասը Ներսէսյան ուսանած մտաւարկաններ էին: Հայոց լեզուի հետ նրանք մեր աչքու բայում էին գիտութիւնների ու արուեստների անձայրածիր շախմատները: Ասորբաստանի աշխարհում նստած՝ մենք հետամուտ էինք ինձում գիտական նշանումների ու համաշխարհային իմաստասիրական շարժումներին: Մովսէսյան էինք կամայ, աչկամայ: Հայկական Թարիզը մշակութային գարբօճ էր պարում: Մեր դպրոցում բնագիտութիւնն անգամ հայկականութեամբ էր յագեցած: Այդպիսի մթնոլորտում կոպուեց մեր հոգին: Կաթիլ առ կաթիլ ուսուցիչները մեր սրտերն ու մտքերը բարթեցին հայկականութեան ներստարով: Նպատակը ամբողջական հայն էր. առաքինի մարդը:

Սու հիմա, երբ տարիների հետուններից ջանում եմ կտաշիլ իմ վաղ պատանեկութեան պատգամն աստղին, հայկական իմ դպրոցն է խոյանում կեանքիս գեմիքում որպէս հիմնադրիւր իմ գոյութեան լոյսի, սիրոյ, տենչերի ու մարդկայնութեան: Այնտեղ էր, իմ Հայոց Դպրոցում, ուր մեսրոպեան հրէչիւնների հանգոյն ես տեսայ Լուսաւորչի կանթեղը եւ վառեցի իմ նրազը հանուր համաստեղութեան ծիրում: Այնտեղ էր, որ ես ծանօթացայ հայոց աշխարհի ստատածներին եւ զգացի անկաշառ սիրոյ առաջին սարսուռը: Սու հիմա, երբ բազմաթիւ նամականքների փաշին շարկած՝ ճգնում եմ մի իմաստ գտնել այս անձու բռնում, գգում եմ, որ այս անդադրում փնտաւութիւնքի խորքում միշտ էլ, բնագոյմար, որոնքիս եմ եղել առկայծ այն լոյսը, որ եղաւ Թարիզի իմ դպրոցը...

ՅԱԿՈՒ ԿՈՐԱՊԵՆՏ

## «ՔԱՐԷՆ ԵՓՓԷ»

Սուրիոյ պատմական եւ գլխաւոր քաղաքներէն Հալէպը եղած է սփիւռ-բահայութեան գլխաւոր կեդրոններէն մէկը, որուն զուտ հայաբնակ, իսկ ներկայիս հայաչաւ տըրքանը նոր Գիւղն է, անդական լեզուով՝ Միսսան, որ կը բնորոշէ հայերու հաստատուելէն առաջ անոր բաց տարածութիւն մը եւ դա՛ծ ըլլալու հանդամանքը: Նոր Գիւղ որակումը առած է հայութիւնը:

Ու «Քարէն Եփփէ» ազգային ճեմարանը կը հիմնուի հոն, նոր Գիւղի գլխաւոր ճամբուն փրայ, 1947ին:

Հակառակ Սուրիոյ հայ նոր սերունդներուն երկրորդական կրթութիւն եւ հայեցի առողջ դաստիարակութիւն ջամբելու երկարատեւ բազմանքին, միայն այդ թուականին կարելիութիւնը կը ստեղծուէր երկրորդական վարժարանի ծրագիրը կենսազործելու, երբ դանիացի հայասէր բարերարուհի Քարէն Եփփէի յաջորդները ընդարձակ հողաշերտ մը կը նուիրէին հալէպահայութեան:

25 Հոկտեմբեր 1947ին, երբ բացումը կը կատարուէր կրթական այդ նորահաստատ օճախին, Հալէպի թեմի օրուան առաջնորդ Զարեհ եպիսկոպոս (հետագային կաթողիկոս), անդրադառնալով անոր նպատակներուն ու վերապահուած դերին, իր խօսքին մէջ ի միջի այլոց կը յայտարարէր.

«Մեր գործը շարունակողներու պէտք ունիմք, հանրային մեր կեանքը պէտք ունի նոր օճախակներու, նոր սիւներու, նոր անհատականութիւններու, որոնք գիտակցին իրենց դերին, ազգայնապաշտպանութեան մեծ դատին»:

Օրուան կարիքներէն թեւազորուած եւ ապագայի մտահոգութիւններէն առաջացող այս խոր բանաձեւումը դարձաւ ղեկավար մտածումը հալէպահայութեան բոլոր մարդերու պատասխանատուներուն, ձեմարանի ուսուցչական կազմին, նոյնիսկ ծնողներուն: Հանդարտ այլ հետեւողական, անաղմուկ այլ վճռական, ժուժկալ ու պարտաճանաչ՝ տարբեր խաւերէ բազմաթիւ հայեր նուիրուեցան այդ նպատակին իրականացման: Առաջին աթիւ ինքը՝ Սրբազանը, որ յաճախակի այցելութիւններով կ'օժանդակէր հայեցի շունչին փոխանցման, ապա նաեւ շարքը ազգային հարցերով տաղնապող մարդոց, որոնք իրենց առաւելադոյնը ընծայեցին՝ ձեմարանի աշխուժացման ու բարգաւաճման համար:

Կան անուններ, որոնք, իբրեւ հիմնական դերակատարներ՝ կ'անջատուին ընդհանուրէն, առանձինն ցոյց տալու համար իրենց դէմքը: Այդպէս էին առաջին տարիներու գրեթէ բոլոր ուսուցիչները, որոնք դաս տալէ աւելի՝ դաստիարակութիւն եւ հակական շունչ կու տային, եւ անոնց կարգին՝ առաջին տարիներու անօրէնը, Միհաս Թէօլէօլեան, որ նորարաց վարժարանի դողողը քայլերը վերածեց հաստատ ու ինքնափստահ քայլափոխներու:

«Քարէն Եփփէ» ձեմարանի հիմնադրութենէն անցած են երեսուն տարիներ:

Առաջին տարիներու աշակերտութեան թիւը բազմապատուուած է երեսունով:


Թիթեղածածկ տաղաւարները փոխարինուած են քարաշէն շէնքերով: Կը շարունակուի ոգին:

Իր 15ամեակին՝ 130 շրջանաւարտ կը հաշուէր «Քարէն Եփփէ» ձեմարանը, իսկ այսօր, 30ամեակին՝ եռապատուուած է շրջանաւարտներու թիւը:

# ՃԵՄԱՐԱՆԸ



ՀՆՆ ՇԵՆՔԸ



ՆՈՐ ՇԵՆՔԸ

*«Քարէն Նիփէ» ճեմարանը ծառայեց իր իսկական կոչումին, հասցուց «Հանրային կեանքի օժանդակներ», որոնք ո՛չ միայն Սուրբոյ սահմաններուն մէջ ազգային կարեւոր դեր վերցուցած են այսօր, այլեւ՝ ամբողջ Սփիւռքի տարածքին վրայ, հայկական հաստատութիւններէ ներս, հարազատ միջավայրի մէջ, իբրեւ «մեր գործը շարունակողներ»...*

Ե. Մ.

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

Ո Ւ Ս Ո Ւ Ց Ի Չ Ը ...

Ուսուցիչը, կ'ըսեն բառաբանները, անձ մըն է, որ կը սորվեցնէ: Ան կը սորվեցնէ կարգալ, գրել, հաշուել. ան կը սորվեցնէ գրականութիւն, գիտութիւն, արուեստ, փիլիսոփայութիւն:

Յայնքը մագիստրոս կը կոչէին իրենց ուսուցիչները, իսկ հայերը՝ վարդապետ: Ուրեմն՝ ուսուցիչը անձ մըն է, որ զիտէ եւ այլ է ուսուցչութեան նախապայմանը: Տգէտ ուսուցիչ չի կրնար գոյութիւն ունենալ: Ուսուցիչը անձ մըն է նաեւ, որ գիտէ արտայայտուիլ եւ իր գիտցածը սորվեցնել ուրիշներուն: Այս երկու ստուգանքը ունեցող անձ մը կրնայ յաջող սուպարէզ մը ունենալ ուսուցչական մագիստրատուրայի, ինչպէս լաւ արհեստաւոր մը, որ խզմանութեամբ կը կատարէ իր գործը:

Բայց ասանցմէ վեր կան բարձր միտքեր, հանճարներ. որոնք ունին ա'լ աւելի բան մը, հոգիներու մէջ թափանցելու եւ հոն կնքելու անջնջելի դրոշմ մը, հոն հրահրելու առկայծ կրակը: Այս իմաստով կրնանք ըսել, որ Յիսուս ուսուցիչ էր, Մակրատ ուսուցիչ էր, Փիթակարաս ուսուցիչ էր, Զարաթուստրաս ուսուցիչ էր, Գրիգոր Լուսաւորիչ ուսուցիչ էր, Մեսրոպ Մաշտոց ուսուցիչ էր, եւ ուսուցիչ են բոլոր այն միտքերը, որոնք խօսքով կամ գրիչով անջնջելի հետք մը ձգած են մարդոց հոգիներու մէջ:

Պէտք է ըսել, որ հին ժամանակներուն ուսուցիչին սուպարէզը աւելի լայն էր, եւ իրաւասութիւնները՝ աւելի ընդարձակ: Կը կարգանէ, որ միջին դարուն անուանի ուսուցիչները իրենց տան մէջ կ'ընդունէին իրենց աշակերտները: Անոնք կ'ապրէին միասին, կը ճաշէին միասին, կը պտըտէին միասին, այնպէս որ՝ ուսուցիչ եւ աշակերտ կը կազմէին ընտանիք մը, բառին նիւթական եւ հոգեկան իմաստով: Նոյնիսկ երբ դպրոցներ եւ համալսարաններ հաստատուեցան՝ այս դրութիւնը շարունակուեցաւ, մա'սնաւորաբար իտալիայ եւ Ֆրանսայի մէջ: Եւ հետագային, աշակերտները հպարտութեամբ կը յիշէին իրենց ուսուցիչներուն անունը: Թէեւ այս տնային դրութիւնը գոյութիւն չունի ներկայիս, բայց կը պատահի, որ տարիներ ետք, խօսակցութեան մը ընթացքին, անձ մը հպարտութեամբ ըսէ՝ ես աշակերտած եմ այսինչ կամ այնինչ ուսուցիչին: Դպրոցին անունը գրեթէ չի յիշուիր, բացի այն պարագայէն, երբ անոր հիմնադիրը կը կոչուի Սարգսն, Ներսիսեան, Գեորգ Դ. Պէրպէրեան, Շամբ:

Ուսուցիչներ շատ եկած ու անցած են՝ ստանց հետք մը ձգելու իրենց ետին, բայց քիչերու անունը կը յիշուի մինչեւ մեր օրերը:

**Այս աշխատանքը կը շարունակուի և միայն, որովհետեւ արժանի են ուսուցիչ անու-  
թիւնը:**

Մեր կերպարը կը յանձնենք լաւագոյն դերակալին, մեր ու-  
կին՝ լաւագոյն ոսկերիչին, մեր դրամը՝ լաւագոյն դրամատան, ին-  
չո՞ւ մեր գաւակները չենք յանձներ լաւագոյն ուսուցիչին: Եթէ ա-  
ռաջինները գործ ունին նիւթին հետ, ուսուցիչը պաշտօն ունի ազը-  
ւացնելու մեր մանուկներու եւ երիտասարդներու հոգին եւ զարգա-  
ցոնելու անոնց միտքը: Միթէ հոգին եւ միտքը անելի թանկագին  
չե՞ն, քան կերպարը եւ ոսկին:

Այսօր, աշխարհի մէջ պաշտօնի վրայ են միլիոնաւոր ուսու-  
ցիչներ: Հարկաւ կարելի չէ պահանջել, որ ստոնք բոլորն ալ հան-  
ճարներ ըլլան. բայց անոնցմէ կարելի է պահանջել, որ գիտակցին  
իրենց առաքելութեան, թէ՛ իրենք կը պատկանին ընտրեալներու դա-  
սակարգի մը, որով շատ բան կրնան ընել եւ ազդել մարդկութեան  
ճակատագրին վրայ: Թէ՛ իրենց պաշտօնն է մարդ էակը դուրս բե-  
րել իր նախնական վիճակէն, գայն ձեռքազատել բնագոյններու կա-  
պանքներէն: Որովհետեւ տմէն քանէ անելի, գիտութենէն անելի,  
արտայայտուելու կարողութենէն անելի՝ կայ մասնայատուկ ձիրք  
մը, տեսակ մը անբացատրելի հմայք, որ աշակերտը կը կապէ իր  
ուսուցիչին: Այս ձիրքը բնածին է եւ ո՛չ մէկ կապ ունի ենթակային  
ուսման աստիճանին եւ միւս ձիրքերուն հետ:

Աւելի մանրամասնելու համար ըսենք, որ լաւ ուսուցիչը ան  
չէ միայն, որ դասընթացքին նախասահմանուած ծրագիրը կ'աւար-  
տէ ժամանակին, եւ որուն պատրաստած աշակերտներուն մէկ մեծ  
հատմատութիւնը կը յաջողի քննութիւններուն, որովհետեւ յաճախ  
կը պատահի, որ այդ աշակերտներուն առաջին մտահոգութիւնը  
կ'ըլլայ մտռուալ այն՝ ինչ որ սորված էին տարիներու ընթացքին.  
այլ այն մէկը, որ իր մէկ խօսքով՝ տղան հոգիին մէջ կը սերմանէ  
այն անտեսանելի հատիկը, որմէ կրնայ ծնիլ ապագայ ծառ մը:

Այն ատեն է, որ աշակերտը ակնածանձով պիտի դիմէ այդ  
հանճարեղ մարդուն յիշատակին եւ անոր առջեւ խոնարհելով պիտի  
ըսէ, ինչպէս Տանթէ՛ վիրգիլեոսին.

«Դո՛ւն ես վարպետս, դո՛ւն ես տիպարս, եւ դո՛ւն ես առաջ-  
նորդս...»

# Ե. ԶԱՐԵՆՑ՝ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Անկախ երիտասարդութեան շրջանին նախա-  
կրթարաններու մէջ ուսուցչութեամբ պարապած  
բլլալու իրողութեամ, եւ անկախ իր գրական  
վաստակով ուրիշներուն վրայ ունեցած ազդեցու-  
թիւններուն, Հայաստանի խորհրդայնացումէն  
մինչեւ իր եղբրական մահը, նդիշէ Զարեանց եղաւ  
Նշմարտաւ ուսուցիչ մը՝ Հայաստանի մէջ իր օ-  
րով կազմաւորուող համարեա՛ր բոլոր երիտա-  
սարդներուն: Ամասիման է նորահասներու առա-  
ջին բայելնուն ու առաջին զիրենքուն նկատմամբ  
Զարեանցի գորովայիր վերաբերումը, որուն մասին  
ունեմք երախտագիտական իրենց խօսքը ըսին ու  
զացին, իսկ ուրիշներ դեռ կը շարունակեն նոր  
մամբումանսութիւններ հազարդել այդ ուղղու-  
թային մթերքով, ամէնէն արդիւնաւորը. բայց  
բարձրագինով առանձին համարումի մը:

Իր մորմոտներով ու խնդուր քիւններով բովան-  
դակ հայրենի սարածութիւնը լցնող արու ձայն  
մըն էր Զարեանց, օժտուած՝ ստեղծագործական  
լիստաւ ձիրենով, մեծագոյնը՝ մասնաւոր մշակու-  
թային մթերքով, ամէնէն արդիւնաւորը, բայց  
որ չէր լիանար իր տունով, իր եղածով, ու  
որսի կ'ելլէր տարբեր հոգիներու մէջ, գրական-  
ութիւնը համարելով մշտնջենական հոսք մը՝  
բազմաձայն ու բազմեղանգ:

Այս ծարան է, որուն մասին կը խօսին ա-  
մէնքը, այս պատկերով գիրկ կը բանար դեռատի  
տղոց ու կը խոմարիէր զուլտը անոց խոմարն  
տնտրակներուն վրայ. ցնորելով յամայն անոց  
յայտմարեքած մէկ բարձր պատկերին ի սես, մէկ  
ննչերանգին ի յոր:

Զարեանց՝ ուսուցիչը: Միաժամանակ մզող եւ  
ուսուցանող, պատահելի՛ հրավառութեամբ եւ  
զնտութեամբ, ձգողական՝ իր անձով ու գործով,  
իծպէտ եղած են իրենց կենսագրութեան մէջ ա-  
շակերտներ հաշուելու փառքին արժամացած ան-  
պարէզին բոլոր՝ երախտաւորները:

— Միտայ ձեզ խելք՝ սովորեցնելով, — կը  
զոռայ տեղ մը Մահարիին, Քաղցրօր:ն կնդր գայ-  
բոյրով մը. բայց իսն նուիրուած բանաստեղ-  
ծական թէ յուշագրական գրակամութեան մէջ, որ-  
քա՛ն կենդանի է ի՛նք, սովորեցնելով մեանց Զա-  
րեանց. ուսուցչի գրակամութեան վերումն օրով  
տանջուելու ո՛չ մէկ օր տարած այս սիրելին,  
եսս ես մեծ ու մեծողի, օրինակելի՛...



\*\*\*

Մեղ՝ երիտասարդ գրողներին, Զա-  
րեանցը սովորեցնում էր եւ դաստիարա-  
կում, բայց շատ էր արեւօք զա ըստ  
ձեւի «ուսուցում» կամ «դաստիարակու-  
թիւն»: Նա պարզապէս գրում էր, խօ-  
սում, մտածում, դուարճանում, աշխա-  
տում, ապրում ըր աչքերի առաջ՝ ուսանց  
այդ բոլորն աչքը կոխելու, առանց այդ  
բոլորին ինչ-որ նշանակութիւն տալու:  
Իսկ դու, եթէ աչք եւ սկանչ ունէիր եւ,  
մա՛նաւանդ՝ մի փոքր էլ գլուխ՝ չէիր կա-  
րող չտեսնել նրան, չլսել նրան, չկար-  
գալ նրան եւ ստոյտրի նրանից: Անա թէ  
ինչու, իր խելօք յօղուածներին: Եւ ի-  
մաստուն պոզիւրիայից բացի, Զարեանց  
ուսուցիչ էր նաեւ իր կեանքով: Եւ ահա  
թէ ինչու երկանիկ ենք մենք, ովքեր մեք  
գրականութեան համար պատմական այն  
ասարիներին եղել են Զարեանցի հետ: Եր-  
ջանիկ եմ ես, որ բարտ եմ ունեցել ապ-

րի նրա հետ մի յարկի տակ, իսկ այնուհետև մնալ նրա անբաժան եւ անձնբէր լարեկամը տասներկու տարի շարունակ:

Եւ եթէ ինձ յաջողուի ցոյց տալ իմ յուշերի մէջ գտնէ մի շնչին մասնիկն այն մեծ արուեստագէտի ու մարդու, որը կոչուած էր Եղիշէ Չարենց, ապա ես մատուցած կը լինեմ իմ խիստ համեստ, բայց ի խորոց սրտի տուրքն իմ ուսուցչին, բարեկամին եւ ընկերոջը:

**ՄԿՐՏԻՉ ԱՐՄԻՆ**

**Պ Ա Տ Պ Ա Մ**

— Ես հերքեցի Տէրեանին եւ ստեղծեցի իմ գրականութիւնը, բա ինչո՞ւ դուք ինձ չէք հերքում, եթէ ուզում էք ձեր գրականութիւնը ստեղծել...

Հարցն ուղղուած էր մի երիտասարդ դրողի եւ ինձ:

Ձեռների մէջ խշրտացրեց թաղբեւը եւ մի ումուլ թէյ խմեց:

— Ասե՛ք ես ի՞նչ խեր տեսայ հերքելով, որ դուք ի՞նչ խեր տեսնէք: Ի՞նչ հերքել, Տէրեանին ո՞նց կը հերքես: Տէրեանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքել կը լինի՞: Մի բան պիտի հասկանալ, — չլինէր Յովհաննէս Յովհաննիսեանը, Թումանեանը Թումանեան չէր լինի, ոչ էլ Իսահակեանը Իսահակեան, Իսկ եթէ չլինէին Յովհաննիսեանը, Թումանեանը, Իսահակեանը՝ Տէրեանը Տէրեան չէր լինի: Ձիւնէր Տէրեանը ես՝ ես չէի լինի, էս մի բանը լաւ հասկացէք:

Հիմա անցնենք ձեզ. դուք պիտի շարունակէք այնտեղից, որտեղ ես վերջացնում եմ: Կրկնելով իմ նախորդներին կամ ինձ, ոչ մի արդիւնքի չէք հասնի: Պէտք է առաջ անցնել իւրացնել եւ առաջ անցնել: Նախամարդիկ իրենց ուսերին կրում էին իրենց բեռը, յետոյ մարդը հնարեց՝ ձեռնաստյուլը, յետոյ՝ եղաստյուլը, ապա՝ կառքը, ձիաքարը, դնացը, աւտոն, անրապլանը: Վայ նրան, ով ուելուլիցիայի, էլեկտրականութեան, մոտորների լինիեան մեր դադում կը նստի եղասայլ: Տեղ չի հասնի նա, չի դիմանայ ժամանակի քննութեան:

Թաղբեւը նետեց դրասեղանին, նայեց մեզ իր արտայայտիչ աչքերով եւ խորամանկ ժպտաց:

— Մեռայ ձեզ խելք սովորեցնելով:

**ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ**



Ամէն դէպքում Չարենցը դուքս էր պալիս մեծ որսի, իսկ նրան հետեւում էին խմբերով, սմանք էլ սնուում մեծ որսի հաշուին, ստեղծում իրենց փոքրիկ ուրախութիւնը, իրենց բաւարարութիւնը: Այս զարմանալի մարդը զանազանում էր մաքի խիզախութեամբ, դալիք ուղիների զլացողութեամբ, ուսուցիչ էր իրենից մեծերի եւ փոքրերի համար: Նա պատմութիւն էր ստեղծում ետեւից տանելով մայրենի գրականութիւնը:

**ՀՐԱՆՏ ԹԱՐԱՉԵԱՆ**

# ՆԱԽՈՐԴ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ ԱՒԱՆԴԸ

Զարթոնքի սերունդէն սկսեալ երեսոյթ մը կայ, որ հետաքրքրական ըլլալէն առջին, մեզի համար տարբեր ճշմարտութիւն մը կը կարգէ, — յեղափոխականի տիպարը կը միաժուռի ուսուցչի կերպարին հետ: Ծիւղ է, որ Հինգերորդ դարէն սկսեալ անհաւատալիորէն ուժեղ տիպարներու հանդիպած ենք, որոնք ո՛չ միայն ոչինչէն ամբողջ դպրոցներ ստեղծած են, այլև՝ հելլենական մշակոյթէն սկսեալ, ամբողջ քաղաքակրթութիւններ յաղթած են ներմուծել եւ զանոնք համադրել մեր ազգային ժառանգութեան հետ:

Նոյն արամարանութեամբ, անմիջապէս կը տեսնենք, թէ ուսուցչի մեր արդէ բժրոնոցութիւնը կու գայ նախորդ դարէն: Այսինքն՝ ազատութեան, ընդհանուր զարթոնման եւ յեղափոխութեան շունչին հետ երեսասարդութիւն մը յառաջ եկած էր՝ բժրոտտ, դրական իմաստով փոստաէր, իսնչիւրս, կրթոս՝ ամբողջութեամբ իր ժողովուրդին նուիրուելու պատրաստակամութեամբ:

Այս սերունդը, որ իր մշակութային պատրաստութեամբ եւ ոգիով ամբողջովին տարբեր էր իր միջավայրէն ու շրջպատէն, ո՛չ միայն կը պայքարէր օսմանեան եւ ուսուսական հասարակարկերուն դէմ, այլև՝ պահպանողական ու սորկոմիտ մասնութեան, որուն լրծակներն էին քահանայական ու աղայական դասակարգը:

Պատահականութեան կամ պարզ ջողարկումի արդիւնք չէ այն իրողութիւնը, որ զործիչները երկիր կը ժանչին իբրև ուսուցչի, աւելի ուշ՝ յեղափոխական կենդանի աշխատանք տանելու համար, ապա՝ խմբադրական կամ կազմակերպչական աշխատանքի լծուելու եւ, ի վերջոյ, կրկին վերադառնալու ուսուցչութեան: Անոնք փաստօրէն Եւրոպա կամ այլուր ուսանած մեր լաւագոյն տարբերն էին, որոնք ո՛չ միայն վառօղով կը փորձէին ազգային դոյութեան պայքարը տանիլ, այլև հիմնական մտայնութիւն մը կը պատրաստէին՝ նոր դիմադրի մը առաջ ժողովուրդի դուռնաթափած կամ թմբած նկարագրին:

Դժբախտաբար, այս որակն է, որ կորսուցուցած ենք կամ կը կորսնցնենք այսօր: Ընդհանուր երեսոյթներու ու ճշմարտութիւններու մասին է խօսքը: Այլևս շունչնք յեղափոխական ուսուցչի այն կերպարը, որ դիտակից ու բժրոտտ սերունդ մը պիտի պատրաստէր իր շունչին տակ:

Մենք չենք կրնար ընդունիլ այն ստորկութիւնը, թէ յեղափոխական զործունէութեան շրջանը անցած է:

Փայքարի դաշտը եւ պայմանները փոխուած են, սակայն կարեք կը մնայ նոյնը: Ծիւղ է, թէ Սփիւռքը կերտող հայութիւնը մաքառեցաւ իր դոյութեան համար, սակայն այդ անհաւատալի զոհողութիւնները, որոնց արդիւնքն է մեր դպրոցներու ցանցը՝ քաղցրենիներ եւ իրենց հանգիստ բնակարաններուն նստած անտարբեր քաղաքացիներ պատրաստելու համար չէր:

Այն կրաւորական հայութիւնը, որ վարժուած է նուազագոյնը առաջ եւ փոխադարձաբար նուազագոյնը պահանջելու՝ մեզ չի հետաքրքրեր:

Յեղափոխական տրժմու մտայնութիւնը կենցաղային ու ընկերային յեղաշրջում կը պահանջէ, ուր վերացական իտէլայապաշտութիւնը փոխարինուած ըլլայ զործնապաշտ տեսականութեամբ:

Մանկանդ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք, ուր տեսանք, թէ ասուելագոյնի պահանջը ու ասուելագոյնի զոհողութիւնը կը պտհէ հաւաքակազմութիւն մը, չենք կրնար մեր թմբութեան մէջ ընկղմած մնալ:

Կրկին մթնոլորտը կայ, սակայն խանդավառ այս սերունդին հողեկան անունը հայթայթող եւ ուղղութիւն տուող ուսուցչիչը չկայ:

Ինանքն ոչինչ պահանջող, դառնացած, մակերեսային պատրաստութեամբ եւ պահպանողական նկարագրով նախակրթարանի ուսուցչները չեն, որ կրնան այս պարսականութիւնը կատարել:

Չը կրկնենք՝ որոշ տններու հանդէպ կը պահենք մեր յարգանքը, սակայն կ'ափսոսանք յեղափոխական սերունդէն մեզի աւանդ յանձնուած ուսուցչի կերպարին վրայ, մին որակին, որ զրիթէ կորուսած է...



Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.  
ԱԹՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

## «ԱՅՂ Է ԻՍ ԿԵՐԱԿՈՒՐ ԵՒ ԸՄՊԵԼԻ...»

Կանխող էջերում մեջ մեր քառմերում, ըսել ուզած-  
ներում, ներկայացուցած պատկերներում ու պատմութիւն-  
ներում ոգիին մէկ խտացումն է «Բաղէն»ի ներկայ քիւչ  
փակող Գարեգին Ռ. Արուսեակից Կաթողիկոսի այս գրու-  
թիւնը, որ հայոց պատմութեան խորքէն ապրուած իր-  
կանութիւն մը կը վերբերէ ու կը հաղորդէ ամբոյ իմա-  
տուն պատգամը, զիրէնքու շարքը մատնանշելով մրմնջե-  
ցող վարդապետին ընթեով.

— Այդ է իմ կերակուս իւր ըմպելի...»

Մասնաւոր «Բաղէն»ի այս քիւիմ համար պատրաստ-  
ուած Արուսեակից Կաթողիկոսի այն գրութեան հասցեն եւս  
նայնն է՝ — հայ դպրոցը, որում գոյութիւնը կ'արդարու-  
նայ մեզ տանջող հեռանկարին նուաճումով միայն, երբ ա-  
նազ տղան կենտական համարէ ներքին սնունդները, հասնի  
զիրքը կերակուր եւ ըմպելի համարելու մակարդակին:

Այդ երազին համար էլիտուած գրութիւն մը, արտա-  
ռուչ՝ պատմական իր խորքով, ու խոսօրէն քննադատական՝  
մեր օրերում համար, — «Այդ է իմ կերակուր եւ ըմպե-  
լի...»

Վանական դպրատան միտարաններն ու ժառանգաւոր ուսա-  
նողները խոսովքի մասնուած էին: Ուր օրերէ ի վեր կանկաճն ու  
չարագոյն շահ մտորումները կը շարչրկէին իրենց հոգիները:

Ո՛ր էր վարդապետը:

Ամէն օր իրենց հետ էր ան: Ամէն օր «առ ուս նորա» կը  
նստէին եւ իր սիրոյն, իր գիտութեան եւ իր ուսուցողական ար-  
ւեստին հաղորդական ուժովը կը ներթափանցուէին, կը հարբա-  
սանային, կը հրճուէին:

Իրեն համար եկեր էին այս դպրատունը:

Առանց վարդապետին՝ պարտաւ էր վանքը:

Դատարկ կը թուէր կեանքը:

Շո'ւնչն էր վանքին:

Լո'յսն էր վանականին:

Յո'յսն էր ժառանգաւորին:

Տէ'րն էր բոլորին՝ բանի սպասաւորը ըլլալով բոլոր բանե-  
րուն եւ լուռաանչ դպիրներուն:

Իրենցմէ շատերը երկար եւ տաժանելի ճամբայ էին կրա-  
րեր՝ հասնելու համար իրեն:

Եկեր էին Հայասանի հեռաւոր գաւառներէն: Լսեր էին  
«վարդապետաց վարդապետ»ի մասին: Համբաւը՝ իրրեւ սրբա-  
կենցաղ կրօնաւորի, ներհուն գիանականի, պերճարան հոետորի,  
աստուածարան քարոզիչի եւ, մա'նականդ՝ բազմատաղանդ եւ դե-  
րագանց ուսուցիչի՝ տարածուեր էր Հայասանի չորս ծագերը,  
արձագանգեր իր վանքէ վանք ու քաղաքէ քաղաք: Իր կենսազի-  
րը պատկերաւոր ու փոխաբերական բառերով հետազային իրա-  
ւունք ունէր զինք մեղուի կերպարով ներկայացնելու: Մեղուի  
նման՝ երանգաւոր ու բազմահիթ ծաղիկներէն քաղած իր սնուն-  
դը իր հարազատ քաղաքին՝ Անիի մէջ փեթակի պէս համատե-  
ղած՝ առասպէս կը մատուցակէր ուսանելու համար իրեն եկած  
«մանկաւոյն Հայոց»: Ասոնք՝ իմաստութեան գանձին իրրեւ տենե-  
չացող երիտասարդներ՝ «եկեայ մակաղէին առ ոտս երջանիկ, հա-  
մեղաբան իմաստունոյն եւ լուռին ըստ չափոյ մեծութեան գգասկս  
մտաց»:

Կեանքը գեղեցիկ էր վարդապետին հետ: Եւ հիմա երբ չկար  
վանքին մէջ, ութ օրերէ ի վեր լոյսէն զրկուած թիթեռներու պէս  
չփոթի եւ անձկութեան մտանուած էին: Դաս չկար, որովհետեւ  
«դասասաց»ը ինք չկար: Որովհետեւ իրենց համար դասը գիրքէն  
չէր քաղուեր: Վարդապետը ինքն էր կենդանի գիրքը: Իր անձն  
կը բիւէր իմացական լոյսը՝ ինչպէս ջուրը ակնաղբիւրէն:

Ս. Գիրքը առանց անոր մեկնաբանութեան՝ պարզ ու սոսկ  
դիր էր: Ինքն էր, որ կեանք կու տար Աստուծոյ խօսքին: Աստուա-  
ծաշունչը իր շունչին մէջէն մարդկային շունչ կ'առնէր:

Իմաստասէրները՝ Պղատոն, Արիստոտել լտեր էին վանքին  
մէջ: Որովհետեւ անոնց միտքը ի'ր միտքի պրիմակէն ճառա-  
գայթեցնող «իմաստասէր»ը, «սոփիստոս»ը բացակայ էր հոգիի  
եւ միտքի այդ դպրաառունէն:

Քերականութիւնն ու հոետորական արուեստը, աստղագի-  
տութիւնն ու տոմարագիտութիւնը օրէնքներու, թիւերու, գու-  
մարներու անհրապոյր գանձեր էին, որոնց իմաստն ու արժէքը  
ստուեր էին հազեր: Որովհետեւ անոնց լոյս ու կեանք տուող  
վարդապետը, անոնց զաղտնիքները բացող մոգական բանալին  
կորսուեր էր վանքէն:

Կորիւններն ու եզնիկները, Խորենացիներն ու Եղիշէները  
մարած մոմերու նման շարուած մագաղաթեայ մատենաներուն  
մէջ կը նիրհէին: Որովհետեւ անոնց հոգիէն ճառագայթած եւ ա-

նոնց հողին ճառագայթեցնող նոր շառաւիղը յանկարծ անհետացրել էր վանատան շրջափակէն:

Ո՞ւր էր վարդապետը:

Վերջին անգամ զայն տեսեր էին լեռան լանջին բացուած քարայրին մէջ, ուր համատեղուած էին մատենաները: Քարայրն էր իրենց գրադարանը: Ո՛չ գրապահետը: Հոն կ'երթային յաճախ, վարդապետին առաջնորդութեամբ, եւ կը հակէին գիրքերուն վրայ, կը լսէին իր ձայնը, որ լոյսի պէս կ'իջնէր մագաղաթներու երկաթագիր առղերուն մէջ եւ կը բանար «գիրքիմ եւ գիրքիմ իրս» իրենց աչքերուն դիմաց: Առանց իր ձայնին՝ կարծես կաշի էին գիրքերը...:

Վերջին անգամ, ութ օր առաջ, երբ գացեր էին մատենադարան-քարայրը, իրենց հետ միասին էր վարդապետը: Երբ հեռացան քարայրէն, դուռը ժայռով «կողպեցին»: Ձէր կրնար հոն ըլլալ: Քանի մը անձեր միանաբար հազիւ կրնային ժայռը շարժել դրան մուտքէն: Ձէր կրնար վերստին քարայր գտցած ըլլալ: Արդե՞ք մեկնած էր շրջակայ գիւղերը քարոզելու համար. այլ վանքե՞ր՝ ուսուցանելու համար: Սոսկե՞ր էր իրենցմէ: Վշտացուցե՞ր էին զինք: Արդե՞ք իրենց ընկալումը անոր խօսքերուն չէր արդարացներ անոր ակնկալութիւնները իրենցմէ: Հիասթափուե՞ր էր էր իրենցմէ:

Այսպիսի խռովալի հարցումներով մտալկուած՝ ա՛յ ճարհաս վերստին մատենադարան-քարայրի ճամբան բռնեցին: Ուզեցին վերստին երթալ դիրքերուն եւ անոնցմէ առնել նաեւ... կարօտը իրենց վարդապետին: Ժայռը հոն էր այնպէս՝ ինչպէս գետեղեր էին զայն իրենք: Համախումբ ճիզով մը երբ զայն շարժեցին, ո՛վ զարմանք, վարդապետը հոն էր, հակած գիրքերուն վրայ: Ուրուակա՞նն էր արդեօք, թէ ինքը: Տեսի՛րք էր, խարկա՞նք, թէ ճշմարտութիւն: Յարութիւն առած մէ՛կն էր հին հայոց «եռամեծ» վարդապետներէն: Աչքերը երբ սկսան տամուկ լոյսին վարժուիլ՝ ստուերամած մթնոլորտին մէջ տեսան զինք. այո՛, ինքն էր, — Յովհաննէս Սարկաւազ վարդապետը:

Չարմանքի պոռթկումով մը առաջին հարցումը ժայթքեց իրենց միտքէն.

— Վարդապետ, ինչպէ՞ս ապրեցար այս ուր օրերու ընթացքին, առանց հացի եւ ջուրի:

Վարդապետը գլուխը վեր բարձրացուց, յոգնապատ աչքերէն աղօթած նայուածքը, խորազնին ու հանդարտ, պարտացուցիչ արշակերտներու զարմանքէն այլայլած դէմքերուն եւ խոշոր-ցած աչքերուն վրայ եւ ապա, հազիւ շարժելու ուժ ունեցող աջ ձեռքը ուղղելով դէպի քարայրի քարապատ խաբէրուն մէջ գետեղուած մագաղաթեայ մատենաները, հանդիսական շնորհով ու հազիւ լսելի ձայնով ըսաւ.

— «Այդ է իմ կերակուր եւ բնայի, գոր կերայ եւ արբի գաւուրս գայտսսիկ...»

Պահ մը լուսթիւնը կապարի պէս իջաւ իրենց յեղունքուն վրայ: Նախցան ժառանգներուն: Կարծես կը ժպտային. կը խոսէին: Ձիւրիւք մազադաթի կաշիութենէն ու մեղանի գրուածէն, գիրի յոր գիծերէն կհանքին տանող եւ իրենց «Հոգին» ապրող ու ապրեցնող մարդուն հետ ապրեր էին անրոյժ իջարար ահա լծան աթօրի: Ի՞նչ տեսարանիկ երջանկութիւն...:

Յանկարծ աշակերտները յիշեցին, որ Աստուածաշունչ մասնանկն Եղեկիէլի մարգարէութեան գիրքը մեկնաբանած առանձն, հանդիպեր էին այն տողերուն, որ մարգարէն կը պատահէր անկարելի տեսիլք մը, որուն մէջ Աստուած երկինքէն մազադաթ մը առեր էր մարգարէին եւ պատգամեր.

— «Որդի՛ մարդոյ, կե՛ր ինչ որ կը գտնես ատոր մէջ: Կե՛ր եւ ծառէ՛ այդ գիրքը եւ պալա գնա՛ եւ խօսէ՛ երբայցեցի ժողովուրդին:

«Տէրը իմ բերանը բացաւ եւ գիրքը երկարեց ինձի ու բառս. — «Որդի՛ մարդոյ, քերանդ սլիտի ուտէ այդ գիրքը եւ ստամոքսդ պիտի լցուի այդ գիրքով, որ տրուեցաւ քեզի:

«Կերայ զայն եւ ընրնիս մէջ քաղցրութիւն մը զգացի, և — ման մեկրի քաղցրութեան»:

Յիշեցին աշակերտները, որ վարդապետը մարգարէի այս տողերու ընթերցումէն ետք, փակեր էր գիրքը ու, բոլորովին կնք պարանապիտանած՝ բացեր էր իր սիրտն ու միտքը սա բառերը թափելով իրենց ուղեղներուն մէջ.

«Գիրքը կերակուրն է միտքին. սնունդը՝ հոգիին: Մարդը երբեակ բազկացութեամբ էակ մըն է. — Մարմինը՝ որ հացի պէտք ունի, Միտքը՝ որ գիրքի պէտք ունի, Հոգին՝ որ աղօթքի պէտք ունի, Առանց մէկուն՝ մարդը չի կրնար ինքզինք լիապէ՛ս ըլլալ: Ձի կրնար իր ամրոցական ինքնութիւնը արտասայտի եւ արժեւորել:

Կը յիշէ՛ք, ժառանգաւորներ, այս տառու ժամերգութիւն կատարեցինք: Աղօթեցինք Աստուծոյ, փառք տալով, որ յոյսին բացաւ մեր աչքերը: Աղօթեցինք խնդրելով Իրմէ, որ ուժ տայ մեզի, որպէ՛սզի ամբողջ՝ օրը այնպէս կարենանք ապրի: Եւ գոյ՛ծէ: Ե՛րբ վերջալուստի վարդապետը իջնէ օրումն կեանքի տեսարանին վրայ, հանազարտ խղճով, երջանիկ սիրտով եւ, մա՛նաւանդ՝ քիչ մը աւելի հարուստ իմացական եւ հոգեկան աշխարհով երթանք անկողին՝ վաղուան յոյսը մեր աննրնջ հոգւոյն մէջ: Արդ՛հեաեւ, եթէ այսօրը երէկին վրայ նոր երանդ մը չաւելցնէ, մեր գիտութեան վրայ նոր յոյս չցուանէ, մեր նախորուժին նոր խայծ չտայ, մեր ծառայութիւնը նոր պրկու-

մով ու մղումով չլարէ՝ օրը մեռած կ'ըլլայ, եւ մեզմէ ալ բան մը հետը միասին անպայման թաղուած կ'ըլլայ... :  
 Կը յիշէ՞ք, ժառանգաւորներ, ժամերգութեանն ետք զացինք մեր հասարակաց սեղանատունը: Մեր մարմինը պէտք ունէր սնունդի: Նախաճաշը թարմացուց մեր Ֆիզիքային ուժերը: Այո՛, համեստ էր, պարզ էր անկաւ: Իշխաններու կամ Անիի բարեկեցիկ քաղաքացիներու ճոխ ու գունազեղ սեղաններուն չէր նմաներ: Մերինը մարմնէ սնուցման համար էր. ո՛չ պարարտացումի: Մարմնի սնուցումը մեր պարտքն է. որովհետեւ մարմէնը Աստուծոյ պարգեւին մաս կը կազմէ եւ պէտք է առողջ մնայ, մեր գուրգուրանքին առարկայ: Պէտք է ըլլայ տաճարը հոգւոյն եւ օճախը հոգեկանին:

Կը յիշէ՞ք, ժառանգաւորներ, որ նախաճաշէն ետք, հաւաքուեցաք շուրջս: Նստանք միասին եւ բացինք Մ. Գիւրքը, բացինք մագաղաթեայ այլ մատենաներ: Կարգացինք, խօսեցանք, հարցումներ ըրինք, գրեցինք, եւ ես Զանացի այդ գիրքերուն շունչ տալ: Զանացի իմ մտքիս պրիսմոսին ներած չափովը մեծ միտքերու ճառագայթները ձեզի հասցնել:

Կերա՛նք գիրքերը:

Այո, որովհետեւ անոնց մէջ գիրով խոսացած մարդկային ապումները, գաղափարները, ծանօթութիւնները չաղուեցան մեր մտաւոր կազմուածքին հետ, ինչպէս նախաճաշին կերած հացը միախառնուեցաւ մեր արիւնին հետ եւ կենտունակութեան հիւթով զօրացուց մեզ:

Զգացի՞ք այդ գիրքի համը...: Հրճուեցա՞ք անով: Մեղրի պէս քաղցր թուեցա՞ւ ձեզի: Տարբեր գտա՞ք դուք գձեղ ալդ իմացական ճաշակումէն յետոյ:

Ահա ա՛յդ էր, որ պատահեցաւ եզեկիէլ մարգարէին: Աստուծոյ խօսքը կերաւ ան, խորացուց, խառնեց իր հուրթեանը հետ, միազանգեց գայն իր միտքի եւ հոգիի շաղաւթին մէջ եւ երբ գնաց ու խօսեցաւ Ժողովուրդին, Ժուղովուրդը այնպէս զգաց, որ Աստուծոյ խօսքը իր անձէն կը բխէր: Ժողովուրդը տեսա՛ւ, որ մարգարէն խոզովակը չէր, այլ՝ քիւսմը Աստուծոյ խօսքի սկիւն, Ճշմարտութեան սկզբնաղբիւրին:

Ժամանակին մեր հայրերն ալ քայիցին մարգարէի շաւիղով: Գիտէք, որ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, հինգերորդ դարուն, շատ կը տառապէին ու կը տագնապէին, որովհետեւ կը աննէին, որ իրենց Ժողովուրդը գիր ու գիրք չուներ: Աստուծոյ խօսքը կար, բայց խօսքին կերպարանք ստուղ գիրը կը պակսէր: Խօսքը հովին պէս կու գար ու հովին պէս ալ կ'անցնէր: Երբեմն-երբեմն զովութեան վաղանցուկ զգացում մը միայն կը յաշողէր արթնցնել ուն-

կրնդիրներու հոգիներուն մէջ: Այո՛, արնեցան, ազգեկ-  
 ցին, խեղացին, սրունցին, դմեցին, նամբորդեցին, մեծ  
 գիտակամներու հետ տեսնուեցան, մենչեւ որ որ մին ալ,  
 Ա. Մարտիրոսի միտքին մէջ, զոչ ի Բան երազ եւ ոչ շարք-  
 ան քեան տեսին, աստուածապարզեւ աստուծեամբ. դիմ  
 ու մեւ հազան ախ աստերբ, որոնք կազմեցին մեր այսօր-  
 ան գիտացած աշուրներ:

Վարդապետը պահ մը լուռ խեղացիք էր եւ լուսամու-  
 տին դուրս նայելով դէպքի հաշտ աշխարհը՝ բեր.—

Մ՛հ, ի՛նչ խնդութիւն էր հաշտ մարդուրդին համար,  
 երբ դիրք հասաւ Հայաստան...: Եւր որեւէ ձեռնուցաւ հա-  
 յոյ աշխարհին վրայ: Կերպարանափոխուեցաւ հաշտ եր-  
 կեսը: Ինչ որ այլ լաւ գիտէք կորիւնէն, Փարպեցիէն եւ  
 Արեւնայիէն: Բայց, կ'ըսեմ մեզի, որքան յանտի բանաք  
 այլ սկիզբիկ մասնաւորներուն մասնանները ա՛յնքան  
 կարճ էր նոր յոյսի հաստադաշխներ կը բացուին մեր աշխ-  
 րուն:

Եւ այդ որին մենչեւ այսօր, մի՛ մտնաք, մասնաւոր-  
 անք, զիրքը եղաւ մեր քաղն ու գահը, մեր մակամն ու  
 գրտիր...:

Կը տեսնէք մեր աշխրտի, թէ ի՛նչ դուրդուրանքով կը  
 պահենք եւ կը խնամենք զանոնք այս քարայրներու մար-  
 սապատ ձերպերուն մէջ:

- Չրլլայ որ զեքը մտնեայ անոնց:
- Չրլլայ որ մոմին բոցը մտնեցնէք անոնց:
- Չրլլայ որ մալաղաբիին վրայ մոմի շիթեր կաթնեցնէք:
- Չրլլայ որ խնամութեան մէջ պահէք զանոնք:
- Չլուշտեմք մտնեցէք անոնց: Անշունչ մն: Բայց  
 շունչ կու տան: Լոզի ունին իրենց բառերուն եւ առջերուն  
 մէջ թաքնուած:

Քանի՛-քանի՛ աշխրտու լոյսն է հասեր այդ մաղա-  
 դաբներու երկաթագիր, բարբաղի ու նտրդիր էջերուն  
 վրայ:

Քանի՛-քանի՛ մասներ մոմի պէս հասեր են, որպէսզի  
 Բանք, ճշմարտութիւնը, Գնդճգութիւնը, հոգիք ու մարդ  
 ճանուց զաղափարներն ու սկզբունքները Գիրքն մէջ շար-  
 րանակն իրենց լուսամտուց կեանքը եւ շարունակական  
 ներդրումութեամբ շնչաւորին ու կերպաւորին մարդոց  
 կեանքը իրենց սցիտի եւ ախտով:

Չան մը դարձեալ շունչ էր ատեր վարդապետը, աշխ-  
 րք չեց մը եւս յատելով մաղաղաբներուն եւ զատուելով  
 աշակերտներուն սկսեք էր վերստին բարբաղի:—

Մ՛հ, ի՛նչ խոր ու անմտաց երախաբքի արժանի են

մեր պարզակրօն ու համեստակենցաղ «գլխի»ները, «սուկող»ները, «ծաղկող»ները, կաշին՝ մազաղաթի, եղէգր՝ գրչի, կարմիր որդանը, խոտին արմատը՝ մելանի վերածող մեր պաշտելի վարպետները... : Առանց անոնց «հասարակ» նկատառած եւ «ապերախտ» կոչուած աշխատանքին՝ միաքը օդին մէջ կը թափառէր, ամպերու բնակիչ կը դառնար կամ դանկերու բանտարկեալ կը մնար : Զէր կրնար մարմին գգենուլ : չէր կրնար մարդեղանալ ու, մանաւանդ՝ սերունդէ սերունդ եւ դարէ դար շղթայի պէս կապ դառնալ : Զէր կրնար մշտահոսան անձրեւումով ծաղկեցնել միտքի անդաստանը :

Գիրքը մի՛ արհամարհէք :

Յիսուս ըսաւ .

— Եթէ ձեզմէ մէկը մանուկ մը արհամարհէ կամ գայթակղութեան առաջնորդէ՝ աւելի լաւ է, որ երկանաքար մը վիզէն կախէ եւ ինքզինք ծով նետէ : Թող մնայ ծովուն յատակը, որպէսզի իր անքաւելի մեղքը գոնէ թաղած կ'ըլլայ մարդոց աչքերէն :

Նս ալ այսօր թոյլ կու աամ ինծի ըսելու .

— Եթէ ձեզմէ մէկը գիրքը արհամարհէ եւ հայ գիրքը անտես՝ աւելի լաւ է, որ հայոց սա բարձրաբերձ լեռներու սեպ գազաթներէն ինքզինք վար նետէ դէպի անդնդախոր ձորերը եւ դառնայ ժայռերու կերակուր, քան Ս. Մեսրոպի անէծքին առարկայ ու կտակին դաւաճան :

Վա՛յ այն մարդուն, որ գիրքէն անօթի մնայ : Միտքով կոյր եւ գիրքէն ծարաւի անձը անպտղաբեր, չոր հողին մէջ կ'ապրի եւ հազիւ խոտի չափ եւ խոտին պէս կեանք կրնայ ունենալ... :

\*\*

Վարդապետը կանգ էր առեր :

Այդ դասը, որ առաջիններէն մէկն էր հանդիսացեր, իրենց բոլոր ուսումներուն նախերգանքն էր եղեր, կարծես աղօտացեր էր ժառանգաւոր սաներու գիտակցութեան մէջ :

Քարայրի մէջ վարդապետին արտասանած նոր բառերը նոր կեանք տուին այդ յաւերժական դասին .

— «Այդ է իմ կերակուր եւ ըմպելի...»

Հայոց պատմութիւնը կերտող բառերու ոսկեղէն շղթային կը պատկանին այլեւս այդ բառերը :

Եղան ասեաններ, երբ սաուեր եւ փոշի տեսան անոնք :

Եղան ասեաններ, երբ դիրքերը «փայտի կոնդ»երու նման

գանձերու փոշեմածի անկիւններուն մէջ նսեմութեան օտար պահեր ազդեցան: Տառապեցաւ իրենց շնորհքով:

Ողան առեւտրէր, երբ թշնամիքն բարբաբաւ ձեռքը կրակ առաւ: անոնց՝ Հարուան առաջու համար Հայու հոգեկան եւ ազգային ապահովութեան:

Եսուարի ժամանակներ եղան այդ առեւտրէրը Հայոց պատմութեան մէջ:

Ողան նաեւ առեւտրէր, երբ յո՛յս հաղան այդ բաները եւ գիրքը վերադին արեւ տեսաւ եւ արեւ զարձաւ: Հայու կեանքին մէջ:

Ողան նաեւ առեւտրէր, երբ թուղթ ու մազազաթ պակեցան անապատին մէջ մահուան դատապարտուած Հայ մօրը, բայց ան աւագն անգամ վերանկեց թուղթի ու մազազաթի եւ իր մանկան աչքերուն դիմաց գրեց մեքարպեան Ա. Բ. Գ. Բ., որպէսզի այդ աննի: Թական անուեղր անպակաս բոլոր Հայու կեանքին:

Ողան նաեւ առեւտրէր, երբ գիրք արդ ստացաւ ու ձեռագիր մատենար տպագիր մատենան զարձաւ: եւ աւելի եւս մտակցաւ Հայ ժողովուրդին ու զարձաւ անոր հոգեմտաւոր կեանքի նոր ապահովման մէջ:



Մեր է հիմա գիրքը Հայութեան կեանքին մէջ:

Հիմա աշխարհի կերակուրները տուտաւ են, բազմատեսակ ու համազարուիչ մեր սեղաններուն վրայ:

Մեր է այդ միւս սնդանը — գրադարանը:

Մեր է այդ միւս կերակուրը — մատենանը:

Երեսներ մայնակցիլ վարդապետին եւ բնի:

— Եւ այդ է իմ կերակուր եւ ըմպելի... »

*Գրող*  
*Արտատպիչ Գրող*



## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՍԱՑԱՆՔ

**ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ** (գիրք երկրորդ, կոմդակներ, ֆարգներ, ճառեր, ելույթներ), Մայր Աբուս Ա. էջմիածին, 1976:

**ՔՈՒՂՔ ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ** (խոհեր), Ներսէս Շնորհալի, աշխարհադարձի վե-  
րածեց՝ Անուշաւան վրդ. Գանիէլեան, Անիլիսա, 1977:

**ՅՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՀՐԱՄԻՍ** (բանաստեղծուքիւմներ), Վահէ-Վահեան, Պէյ-  
րուք, 1977:

● «*Ֆազիկ*»-ի ներկայ թիւին համար պատրաստած էինք մանկ հարցարան մը, եւ դրկած՝ մեր ֆազիկին մէջ սպորտ տարբեր մարզերու կարգ մը ուսուցիչներուն. որոնց պատասխանները վերապահեցինք յաջորդ թիւին, տեղի անկուրքեան պատճառով:

● «*Ֆազիկ*»-ի այս թիւին ընդհանուր ոգիին համապատասխանող ֆանի մը էջեր ֆազած էինք մանկ ներկայ Հայաստանի մանուկէն, լուսաւոր երեւոյթներ ու մտահոգութիւններ, որոնք տեղի անկուրքեան մոյն պատճառով դուրս մնացին այս թիւէն եւ պիտի ներկայացուին յաջորդ համարով:

● Կենսական համարելով դպրոցին եւ ուսուցիչին դերը հայ կեանքին մէջ՝ «*Ֆազիկ*» միշտ բաց պիտի պահէ իր էջերը այդ մասին գրուած թելադրական բոլոր էջերուն:

● «*Ֆազիկ*»-ի այս թիւը իր սովորական չափէն մեկուկէս պարակ աւելի անցաւ: Ժամանակ շահելու համար, պիտի ստիպուինք Նոյեմբերի թիւը լոյս ընծայել մէկ պարակ նուազ ծաւալով, 64 էջ, մեծ մասամբ նուիրուած Կ. Սաւունիի յիշատակին:

Իսկ այս տարուան մեր վերջին համարը ամբողջութեամբ նուիրուած պիտի ըլլայ Եղիշէ Զարեհցին, եղբարալիտ բանաստեղծին ծննդեան 80 եւ մահուան 40ամեակին առիթով:

● «*ԲԱԳԻՆ*»-ի  
Լիբանանի ընդհանուր ներկայացուցիչն է  
Գրատուն ՍՈՒՐԷՆ

**ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ**

ԼԻԲՐԱՆՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՋԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

**پاكين**  
مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد ارتين كارتيك فزانجيان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄՍԱԳԻՐ  
ՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՍԻ ԱՐՈՒԵՍՏԻ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
Գ. ՄԱՅՅԱՆ